ՓԱՐՊԻ

ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱԻ Միջնադարյան հնագիտության բաժինը շնորհակալություն է հայտնում ԵՊՀ Մեքենայական ուսուցման լաբորատորիայի ղեկավար Աշոտ Հարությունյանին՝ գիտաժողովի նախաձեռնության և կազմակերպչական աշխատանքներին աջակցելու համար։

Պատասխանատու խմբագիրներ՝
պ.գ.թ. Դիաննա Միրիջանյան, Դավիթ Դավթյան

ՀՏԴ 902:94(479.25)(082)
ԳՄԴ 63.4+63.3(5Հ)գ43
Փ 286

Փ 286 Փարպի. հոգևոր և նյութական ժառանգությունը: Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր / Խմբ. Դ. Միրիջանյան, Դ. Դավթյան. – Եր.: ՀԱԻ հրատ., 2025.– 136 էջ:

Ժողովածուն նվիրված է Փարպի գյուղի պատմամշակութային ժառանգությանը: Հետազոտությունների հեղինակները ՀՀ գիտակրթական և մշակութային հաստատությունների գիտաշխատողներ են, որոնց ուսումնասիրությունների շնորհիվ նոր տվյալներ են ի հայտ եկել Փարպի գյուղի պատմության և հուշարձանների վերաբերյալ:

Ժողովածուն նախատեսված է Փարպիի և ընդհանրապես Արագածոտն գավառի պատմությամբ և մշակույթով զբաղվող հետազոտողների, ինչպես նաև հայագիտության տարբեր խնդիրներով հետաքրքրվող ընթերցողների համար:

ՀՏԴ 902:94(479.25)(082)
ԳՄԴ 63.4+63.3(5Հ)գ43

ISBN 978-9939-886-82-4

© Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2025

ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՋԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՓԱՐՊԻ

ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր

ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արման Նալբանդյան
Փարպիի Ծիրանավոր եկեղեցու
2021 թ. պեղումների արդյունքները 5

Դիանա Միրիջանյան, Նյուրա Հակոբյան
Փարպիի Ս. Թարգմանչաց եկեղեցու պեղումները 17

Լիլիթ Միքայելյան, Զարուհի Հակոբյան
Փարպիի Ս. Թարգմանչաց եկեղեցու
քանդակային հարդարանքի դասակարգման
և թվագրության խնդիրը 35

Աշոտ Մանուչարյան
Փարպին և նրա արձանագրությունները 60

Կարեն Հովհաննիսյան
Փարպիի Թուխ Մանուկ սրբավայրերը 70

Տիգրան Միքայելյան
Բազմաղբյուր գյուղի թաքիան 77

Արմեն Ասատրյան
Փարպին արխիվային վավերագրերում 84

Համո Սուքիասյան
Փարպի գյուղը Հայաստանի վարչատարածքային
փոփոխությունների հոլովույթում (19–20-րդ դդ.) 101

Դավիթ Դավթյան
Փարպի գյուղի զբոսաշրջային ներուժը 110

Արման Նալբանդյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, գիտաշխատող,
Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն ՊՈԱԿ,
Հնագիտական խմբի ղեկավար

arman.nalbandyan@iae.am

ՓԱՐՊԻԻ ԾԻՐԱՆԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ 2021 Թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Նախաբան

Փարպիի 5-րդ դ. Ծիրանավոր եկեղեցու տարածքում հնագիտական հետազոտությունների, փլատակների մաքրման և պեղումների մեկնարկը տրվեց 2021 թ.: Աշխատանքներն իրականացվեցին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պետական ծրագրով, որով նախատեսվում էր եկեղեցու վերականգնում[1]:

Փարպին պատմական Այրարատ աշխարհի Արագածոտն գավառի գյուղերից է: Այն հարուստ է միջնադարյան ճարտարապետական կառույցներով, որոնց շարքում իր առանձնահատուկ տեղն ունի Ծիրանավոր անվամբ հայտնի ամրոց-եկեղեցին, որի շինարարական հորիզոններում առկա են միջնադարյան ժամանակաշրջանի բոլոր փուլերը՝ վաղ միջնադարից մինչև ուշ միջնադար: Ծիրանավորն ուշագրավ է հոգևորի և ռազմականի համատեղման գաղափարի տեսանկյունից: Այդ առումով Աշտարակի տարածաշրջանի ամրոցի վերածված եկեղեցիների շարքում Փարպիի Ծիրանավորը թերևս լավագույն պահպանված օրինակն է[2]:

Պատմա-աշխարհագրական համառոտ ակնարկ

Ծիրանավորի ճարտարապետական բնութագրին անդրադարձ է կատարվել բազմիցս, ինչի արդյունքում ձևավորվել է ստվարածավալ գրականություն[3]: Պետք է նշել, որ եկեղեցու շինարարական հորիզոնների թվագրման հարցում կան որոշակի տարակարծություններ: Ծիրանավորի ճարտարապետական

---

1 Մրցույթում հաղթող ճանաչված «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի նախաձեռնությամբ պեղումներն իրականացրել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը (արշավախմբի ղեկավար՝ Ա. Նալբանդյան):

2 Արագածոտնի մարզի այդօրինակ եկեղեցիների շարքից են Աշտարակի Ծիրանավորը, Աշնակի Ս. Աստվածածինը:

3 Ալիշան 1890, Շահխաթունեանց 2014, Թորամանյան 1948, Մնացականյան 1971, Հասրաթյան 1976, Հասրաթյան 2010:

նկարագիրը մեր խնդրո առարկան չլինելով հանդերձ, սույն հոդվածում կտանք միայն եկեղեցու ընդհանուր նկարագիրը՝ հիմնված անվանի ճարտարապետ Մուրադ Հասրաթյանի վերլուծության վրա[4]: Ծիրանավորը 5-րդ դարին բնորոշ արտաքուստ շեշտված աբսիդով միանավ փոքր սրահ է և իր ճարտարապետական մանրամասնություններում ընդհանրություններ ունի Ծիծեռնավանքի, Աշտարակի Ծիրանավորի և այլ վաղմիջնադարյան եկեղեցիների հետ[5]:

Եկեղեցին տուժել է 18-րդ դ. և 1949 թ. երկրաշարժերի հետևանքով, իսկ ամրոցի պատերը արևելյան ու հարավային կողմերից հեռացվել են 1980-ական թվականների աշխատանքների ժամանակ: Ընդհանուր առմամբ եկեղեցին մեզ է հասել կանգուն վիճակում, բացառությամբ արևելյան ճակատի: Եկեղեցու արևելյան պատը՝ իր լուսամուտով, նույնպես կանգուն է եղել և քանդվել է վերջին շրջանում:

Արևելք-արևմուտք ձգված ուղղանկյուն դահլիճը (ներսի չափերն են՝ 8,75 × 4,15 մ) արևելքից ավարտվում է դրսից հնգանիստ, իսկ ներսից կիսաշրջանաձև, բավականին խոր խորանով: Մուտքերը երկուսն են՝ արևմտյան և հարավային ճակատներից: Լուսամուտները բացված են բոլոր ճակատներում, բացի հյուսիսից: Խորանի, ինչպես նաև հարավային ճակատի երկու լուսամուտները դրսից ու ներսից ունեն միևնույն լայնությունը, որը բնորոշ է 4–5-րդ դդ. ճարտարապետությանը: Լուսամուտների կամարները պայտաձև են: Արևմտյան ճակատին կան զույգ լուսամուտներ՝ շեշտված պայտաձև կամարներով: Դրանք բաժանվում են ընդհանուր խոյակով, երկու կիսասյունակներից բաղկացած միջնորմով (նման լուսամուտները բնորոշ են Հայաստանի 4–5-րդ դդ. հուշարձաններին)[6]:

Առաջին վերակառուցման ժամանակ (7-րդ դ.), երբ փայտե ծածկը փոխարինվել է քարե թաղով, կիրառվել են երկկենտրոն կամար և թաղ[7]: Սա Հայաստանում նման կամարների կիրառման հնագույն օրինակներից է:

Հաջորդ վերակառուցման ժամանակ (10-րդ դ.), երբ Ծիրանավոր եկեղեցին վերածվել է ամրոցի, այն ամբողջ պարագծով շրջապատվել է 1,5 մ հաստությամբ պատերով, որոնք բարձրանում են տանիքից 2 մ վեր: Եկեղեցու արևմտյան մուտքի առջև նոր մուտք է բացվել, որն ունի քարե հաստ սալից պատրաստված դուռ: Մուտքի ճակատակալ քարին Զաքարյանները թողել են 1190 թ. արձանագրություն: Պատերի մեջ կան հրակնատներ: Սրանք ձևով համապատասխանում են հրազենի օգտագործմանը և հանդիպում են ուշ միջնադարում:

Եկեղեցին վկայագրվել է Մ. Հասրաթյանի կողմից՝ 1980-ական թվականներին (պետ. ցուցիչ՝ 2.110.6), իսկ պահպանական գոտին կազմվել է 2006 թ., ըստ որի այն ունի 0,51 հա տարածք (բուն հուշարձանը՝ 0,09 հա): 1980-ական թվականներին եկեղեցում ձեռնարկվել են վերականգնման աշխատանքներ, կազմ-

4 Հասրաթյան 1976, 1980, 2010:
5 Հասրաթյան 1976, 35:
6 Հասրաթյան 1976, 34:
7 Հասրաթյան 2010, 13:

վել է նախագիծ (ճարտ.՝ Ա. Մանասյան), համարակալվել են քարերը, սակայն աշխատանքները մնացել են անավարտ:

Աշտարակի եկեղեցի-ամրոցները

Աշտարակի տարածաշրջանի (պատմական Արագածոտն գավառ) մի քանի եկեղեցիների (Աշտարակի Ծիրանավոր, Փարպիի Ծիրանավոր, Աշնակի Ս. Աստվածածին) որմերը կրկնապատվել են, ինչի շնորհիվ եկեղեցիները վերածվել են պաշտպանական հենակետերի: Փոքրացվել են դրանց մուտքերը, որոնք փակվել են միակտոր քարե դռներով: Կրկնապատերը բարձրացել են եկեղեցու տանիքից էլ վեր՝ կառույցին տալով բերդ-աշտարակի տեսք: Ավելի ուշ դրանց վերին հատվածներում ավելացվել են հրակնակետեր:

Եկեղեցիները կրկնապատելու ժամանակագրության և գործառույթի հետ կապված կան տարբեր տեսակետեր: Ըստ Ս. Սաղումյանի. «Դրանք հազիվ թե հասարակական պաշտպանակետեր ծառայեին»: Ականավոր գիտնականը այդ երևույթին ավելի շատ տալիս է կառույցը պահպանելու գործառույթ, երբ անհրաժեշտություն է առաջացել երկրաշարժից վնասված շենքը դնել «կաղապարի» մեջ[8]: Այս տեսակետին համակարծիք է նաև Յու. Յարալյանը, ըստ որի կրկնապատերն արվել են հուշարձանը վերջնականապես ավերումից փրկելու համար[9]:

Շահխաթունյանցը կրկնապատի կառուցումը համարում է 13-րդ դ. գործ և ավելացնում, որ դրա պատճառը ասպատակություններից բխող երկյուղն էր[10]: Ըստ ճարտարապետ Թ. Թորամանյանի՝ եկեղեցին ամրոցի է վերածվել 10-րդ դ. արաբական ասպատակությունների արդյունքում[11], որի հետ համակարծիք է նաև Մ. Հասրաթյանը[12]: Ուշագրավ տեսակետ է հայտնում վիմագրագետ Ա. Մանուչարյանը, ըստ որի՝ երեք եկեղեցիների (Աշտարակի և Փարպիի Ծիրանավորներ, Աշնակ) կրկնապատերը հնարավոր է կառուցած լինեն սելջուկները՝ ընդդեմ Զաքարյանների ազատագրական հաղթարշավի[13]:

Կատարված աշխատանքները

Եկեղեցու աբսիդի ստորին շարվածքը և գետնախարիսխը բացելու համար ստիպված էինք հեռացնել քարերի ահռելի կուտակումը (նկ. 1):

Քարերի հեռացմամբ բացվեցին խորանի 80 սմ բարձրությամբ պահպանված պատն ու գրեթե անխաթար պահպանված եռաստիճան գետնախարիսխը (նկ. 2) (առաջին, երկրորդ և երրորդ աստիճաններն ունեն համապատասխանաբար 38, 36, 33 սմ բարձրություն և մոտ 30–40 սմ լայնք):

Արևելքում, հյուսիս-արևելքում և հյուսիսում իրար վրա կիտված բազմաթիվ քարերի մեջ գտնվեցին ոչ միայն բազալտե անմշակ, այլև եկեղեցու տաս-

8 Սաղումյան 1998, 37–38:
9 Յարալյան 1947, 3; հմմտ. Սաղումյան 1998, 107:
10 Շահխաթունեանց 2014, 256:
11 Թորամանյան 1948, 227:
12 Հասրաթյան 1976, 37:
13 Մանուչարյան 2014, 134:

նյակ սրբատաշ քարեր, որոնց թվում և՛ հարթ որմնաքարեր, և՛ կորություն ունեցող խորանի պատի, գմբեթարդի կամ թաղի քարեր: Աշխատանքների ընթացքում քարակուտակումներից զատվեցին, հետազոտվեցին և վերադասավորվեցին տասնյակ որմնաքարեր, որոնց թվում շուրջ 40 ճարտարապետական ու քանդակազարդ մանրամասներ ու հարդարանքի տարրեր: Դրանց մի մասը նախկինում հայտնի լինելով՝ հետագայում կրկին ծածկվել է հսկայական քարակուտակումներով: Ստորև ներկայացնում ենք արժեքավոր քարերը՝ իրենց հակիրճ նկարագրություններով.

1. Խոյակ (չափերը՝ 80×80 սմ, հաստ.՝ 56–58 սմ): Քարի նիստերից մեկին պատկերված է խաղողի ողկույզ, որի կողքին արված պատկերները մեծ մասամբ եղծված են և ընկալելի չեն: Ավելի ուշագրավ է մյուս նիստը, որին պատկերված է մեդալիոնի մեջ առնված հավասարաթև խաչ: Խաչը երիզող օղակը պատված է զիգզագաձև զարդագոտով: Խաչից ձախ հասկաձև պատկեր է, իսկ աջ՝ ձիթենու ճյուղեր: Քարի վերևում ութաթև աստղերով գոտի է: Պատկերը համաչափ չէ և խաչը ոչ թե հորինվածքի կենտրոնում է, այլ ձախ կողմում (աղ. III, նկ. 1): Վաղ միջնադարին բնորոշ այս հիանալի նմուշը ի հայտ եկավ եկեղեցուց հյուսիս-արևելք՝ տասնյակ քարերի տակից: Զանգվածեղ, սրբատաշ մանրամասնի միայն երկու նիստերն են զարդաքանդակված: Այն ընկած էր քանդակազարդ նիստերից մեկը դեպի ներքև, ինչի հետևանքով զարդաքանդակի այդ հատվածը եղծվել էր: Այն խորանի գմբեթարդին հարող կամարը պահող զույգ խոյակներից մեկն է, ինչը փաստվում է նաև արխիվային լուսանկարով և գծագրերով[14]:

2. Եկեղեցու արևելյան պատուհանի ճակատակալ քարը իր նախնական տեղից ընկնելուց հետո վերաշարվել էր եկեղեցին ճամփեզրից սահմանազատող պատի մեջ: Սրա նիստերից մեկին կա հավասարաթև խաչի պատկեր, որն իր ձևով կրկնում է վերոնկարագրյալ խոյակի խաչաքանդակը (աղ. III, նկ. 2):

3. Հավասարաթև խաչի պատկերով որմնաքարը գտնվեց եկեղեցու հյուսիսային պատի դիմաց կուտակված տասնյակ քարերի մեջ: Ըստ Մ. Հասրաթյանի՝ այն աբսիդի կամարի փականի քարն է: Վերջինիս նիստերից մեկին նույնպես պատկերված է շրջանի մեջ առնված հավասարաթև խաչ, որը կանգնած է խաչաբարձ ձողի վրա (աղ. III, նկ. 3):

4. Արևելյան լուսամուտի աջակողմյան կամարաքարը նույնպես գտնվեց եկեղեցու հյուսիսային պատի հիմքերի մոտ կուտակված քարերի մեջ: Այս քարը հայտնի էր 80-ական թթ. աշխատանքների ժամանակ, և դրա գրչանկարը մեզ է տրամադրել ճարտարապետ Ա. Մանասյանը (աղ. III, նկ. 4): Ավելի ուշ քարը տեխնիկայի միջոցով պարզապես տեղափոխվել էր պատի մոտ՝ արձանագիր երեսը դեպի պատը և ծածկվել այլ քարերով: Մակերեսին կրում է ութատող արձանագրություն, որը ցավոք վնասվել է տարածքում տեխնիկայի գործածման հետևանքով:

5. Ուղղանկյուն խարիսխ (70×55×32 սմ). Բոլոր կողմերից սրբատաշ է, հարթ և միայն նիստերից մեկին ունի ուռուցիկ գոտի: Կենտրոնում 20 սմ տրա-

[14] Հասրաթյան 2010, 97:

մագծով միջանցիկ անցք է, որը հավանաբար ծառայել է որպես բնիկ՝ սյան պոչուկի համար:

6. Ատամնավոր քիվեր. Քարակույտերի միջից ի հայտ եկան ատամնավոր քիվերի մի շարք նմուշներ, որոնք բաժանվում են երկու խմբի. ա/ փոքր ատամներով, որոնք եկեղեցու գմբեթարդի մաս են կազմել՝ ձգվելով խաչաքանդակ խոյակների (տիմպանների) միջև (աղ. III, նկ. 5), բ/ մեծ ատամներով, որոնք զարդարել են եկեղեցու պատերը՝ արտաքուստ (աղ. III, նկ. 6): Փոքր ատամներով քիվերի հաստությունը 25 սմ է, իսկ յուրաքանչյուր ատամի լայնքը՝ 10 սմ: Դրանց ընդհանուր թիվը (այդ թվում՝ առանձին կոտրված ատամները) հասավ 9-ի: Մեծ ատամնավոր քիվերի ատամներն ունեն 12,5 սմ լայնք: Սրանք թեև ձևով նման են նախորդներին, սակայն ունեն որոշակի տարբերություն: Դրանց ընդհանուր թիվը (այդ թվում՝ առանձին կոտրված ատամները) հասավ 15-ի:

7. Քառակող կոթող հիշեցնող, գրեթե հավասարակող քար (երկ.՝ 64 սմ, լայնք՝ 30 սմ), որի նիստերից մեկի կենտրոնով ուռուցիկ գոտի է անցնում:

Բացի սրանցից, գտնվեցին նաև սակավաթիվ ծածկասալեր և զանազան այլ մանրամասների բեկորներ:

Գտածոները

Փարպիի Ծիրանավոր եկեղեցու 2021թ. պեղումներով հայտնաբերվեցին անջնարակ և ջնարակված խեցեղենի բազմաթիվ բեկորներ, որոնց մեծ մասը անոթների իրանի հատվածից է: Դրանց թվում առկա են թե՛ հաստափոր կարասների, թե՛ նրբիրան սափորների, ինչպես նաև նրբախեցի սպասքի բեկորներ: Հիմնականում դրանք գորշավուն մակերեսով և անորակ թրծումով խոհանոցային անոթներ են, սակայն կան նաև կոկափայլ և դեղին մակերեսով բեկորներ: Սակավաթիվ են շուրթերի բեկորները, որոնց մեծ մասն ունի դեպի դուրս ձվաձև լայնացող եզրեր (աղ. II, նկ. 1): Հատակներն առանց նստուկի են: Գտնվեցին նաև կանթերի յոթ բեկոր, միևնույն՝ աղեղնաձև տիպին պատկանող (աղ. II, նկ. 2): Ուշագրավ է խփի «մանչ» տիպի բռնակը: Այն ունի 7,5 սմ բարձրություն, 4–5 սմ տրամագիծ: Գագաթը բրգաձև է, մակերեսը՝ դարչնագույն, տեղ-տեղ մոխրապատ (աղ. II, նկ. 3):

Սակավաթիվ են զարդագոտիներով բեկորները, որոնց զարդերը կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ փորագիր և վերադիր: Դրանց մեջ կան փոսիկներ, կետազարդեր, հորիզոնական ուղիղ գծեր, ալիքազարդեր, կիսաօղակներ (աղ. I, նկ. 3), իսկ երկու բեկորի վրա արված գծիկները հավանական է, որ լինեն հաշվարկային կամ վարպետի նշաններ: Խեցեղենի բեկորների մեջ կան նաև 12–14-րդ դդ. կարմրափայլ մակերեսով բեկորներ: Առավել քիչ են ջնարակված բեկորները՝ կանաչ և կապույտ հիմնագույներով (աղ. I, նկ. 2): Առանձնանում է դեղինով և կանաչով արված բուսական զարդանախշերով ջնարակված բեկորը:

Խեցեղենից բացի հայտնաբերվեցին սակավաթիվ, սակայն անչափ ուշագրավ մետաղական գտածոներ: Խորանի պատից թափված լիցքի մաքրման աշխատանքների ժամանակ գտնվեց պղնձե խաչի բեկոր՝ խաչաթևերից մեկը

(աղ. I, նկ. 1) (լայն.՝ 7,5 սմ, բարձր.՝ 16 սմ): Թևածայրն ավարտվում է կլորավուն ակնագնդով: Եզրերին ունի անցքեր և մանր գամեր, որը ցույց է տալիս, որ խաչն ամրացվել է ինչ-որ մակերեսի: Մետաղյա խաչեր հայտնաբերվել են միջնադարյան մի շարք հուշարձաններից, որոնք ըստ գործածության բաժանվում են հետևյալ խմբերի. ա) մկրտության կամ վզին կախելու խաչեր, բ) խորանի կամ սեղանի խաչեր, գ) ձեռաց խաչեր[15]: Ձեռաց խաչերի ենթատիպերից են զորքի առջևով տարվող դրոշներին կամ մահվան թափորներին ուղեկցող խաչվառներին ամրացվող խաչերը: Ելնելով Փարպիի խաչի չափերից, ձևից և գամերի համար նախատեսված անցքերից, ենթադրում ենք, որ այն պատկանել է վերը նկարագրված ենթատիպին: Սակայն չենք բացառում նաև, որ այն փակցված լիներ Ավետարանի կազմին:

Арман Налбандян

ГНКО «Институт археологии и этнографии» НАН РА, научный сотрудник
ГНКО «Научно-исследовательский центр историко-культурного наследия» при Министерстве ОНКС РА, руководитель археологической группы

arman.nalbandyan@iae.am

РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК 2021 Г. ЦЕРКВИ ЦИРАНАВОР В СЕЛЕ ПАРПИ

Парпи – одно из сёл Арагацотнской области исторической провинции Айрарат. Согласно современному административному делению, село входит в Аштаракскую общину Арагацотнской области и расположено в 5 км к северо-западу от областного центра, на высоте 1100 м над уровнем моря, на левом берегу притока Парпи реки Шахвард. Поселение Парпи, упоминаемое с V века, известно не только как родина великого историка и летописца «золотого века» Лазара Парпеци, но и благодаря множеству выдающихся средневековых памятников: церквей Таргманчац, Святого Григория Просветителя, Святого Геворга, а также нескольких часовен, многочисленных хачкаров и надгробий. Особое место среди них занимает крепость-церковь, известная как Циранавор, строительные горизонты которой отражают все этапы средневековья – от раннего до позднего периода. Циранавор также примечателен с точки зрения идеи сочетания духовного и военного. В этом отношении Циранавор в Парпи является, пожалуй, одним из наиболее хорошо сохранившихся примеров среди церквей Аштаракского региона, преобразованных в крепости.

Археологические исследования, расчистка руин и раскопки на территории Циранавора V века в селе Парпи были начаты в 2021 году. Работы осуществлялись в рамках государственной программы Министерства образования, науки, культуры и спорта РА, предусматривавшей составление проекта реставрации, проведение обмеров и консервацию памятника. По инициативе Фонда «Национальный университет архитектуры и строительства Армении», победивший конкурс, раскопки проводились экспедицией ГНКО «Институт археологии и этнографии» НАН РА под руководством А. Налбандяна.

15 Հակոբյան, 1981, 32–36:

В результате работ был открыт трехступенчатый фундамент алтаря церкви, а также обнаружен ряд раннесредневековых архитектурных деталей с декоративной скульптурой. Особый интерес представляют найденные керамика и фрагмент медного креста.

Arman Nalbandyan
"Institute of Archaeology and Ethnography" SNCO of NAS RA, Researcher
"Scientific Research Center of Historical and Cultural Heritage" SNCO
of the Ministry of ESCS RA, Head of the Archaeological Group
arman.nalbandyan@iae.am

THE RESULTS OF THE EXCAVATIONS OF TSIRANAVOR CHURCH OF PARPI VILLAGE IN 2021

Parpi was one of the villages of the Aragatsotn region in the historical province of Ayrarat. According to the current administrative division, the village is located in the Ashtarak community of the Aragatsotn Province, 5 km northwest of the administrative center, at an altitude of 1100 m above sea level, on the left bank of the Parpi tributary of the Shaghvard river. The settlement of Parpi, first mentioned in the 5th century, is known not only as the birthplace of the great historian and chronicler of the "Golden Age," Ghazar Parpetsi, but also for its remarkable medieval monuments, including the churches of Targmanchats, St. Gregory the Illuminator, St. Gevorg, several chapels, as well as numerous khachkars and tombstones. Among them, the fortress-church known as Tsiranavor holds a special place, as its construction horizons clearly reflect all stages of the medieval period—from the Early to the Late Middle Ages. Tsiranavor is also remarkable for its unique concept of combining spiritual and military functions. In this respect, the Tsiranavor Church of Parpi is perhaps the best-preserved example among the fortified churches of the Ashtarak region.

Archaeological research, clearing of ruins, and excavations at the site of the 5th-century Tsiranavor Church in Parpi began in 2021. The work was carried out within the framework of a state program of the Ministry of Education, Science, Culture and Sports of the Republic of Armenia, which provided for the preparation of a restoration project, architectural measurements, and conservation of the church. At the initiative of the "National University of Architecture and Construction of Armenia" Foundation, which won the competition, the excavations were conducted by the expedition of the Institute of Archaeology and Ethnography of the NAS RA (expedition leader: A. Nalbandyan).

The excavations revealed not only the three-stage foundation of the church altar but also a number of early medieval architectural details with sculptural decoration. Particularly noteworthy among the finds are ceramic fragments and a piece of a copper cross.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԱԼԻՇԱՆ 1890
Ալիշան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1890, 590 էջ:

ԹՈՐԱՄԱՆՅԱՆ 1948
Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. II, Երևան, 1948, 307 էջ:

ՀԱԿՈԲՅԱՆ 1981
Հակոբյան Ն., Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական մետաղը IX–XIII դդ., Հայաստանի հնագիտական հուշարձանները, 10, պրակ III, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, 107 էջ:

ՀԱՍՐԱԹՅԱՆ 1976
Հասրաթյան Մ., Հայաստանի արտաքուստ շեշտված աբսիդով միանավ հուշարձանները, «Լրաբեր հասարակական գիտությունների», № 11, 1976, էջ 27–41:

ՀԱՍՐԱԹՅԱՆ 1980-ական
Հասրաթյան Մ., «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն», Փարպիի Ծիրանավորի եկեղեցու վկայագիր, 1980-ական թթ.:

ՀԱՍՐԱԹՅԱՆ 2010
Հասրաթյան Մ., Հայկական վաղքրիստոնեական ճարտարապետությունը, Մոսկվա, «Ինկոմբուկ», 2010, 400 էջ:

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ 2014
Մանուչարյան Ա., Փարպիի Ծիրանավորի արձանագրությունները, «Էջմիածին», 2014, Գ, էջ 134–143:

ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆՑ 2014
Շահխաթունեանց Յ., Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, II, Էջմիածին, 2014, 560 էջ:

ՍԱՂՈՒՄՅԱՆ 1998
Սաղումյան Ս., Աշտարակ. Պատմական անցքեր, հուշարձաններ, վիմագիր արձանագրություններ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, «Գիտություն» 1998, 345 էջ:

Նկար 1. Եկեղեցու ընդհանուր տեսքը՝ հյուսիս-արևելքից, աշխատանքներից առաջ

Նկար 2. Պեղավայրի ընդհանուր տեսքը՝ աշխատանքների ավարտին

Աղյուսակ I. 1. Պղնձե խաչի բեկոր (գրչ.՝ Անի Սահակյանի), 2. Ջնարակված խեցեղենի բեկորներ, 3. Զարդանախշերով խեցեղենի բեկորներ



Աղյուսակ II. 1.Կավանոթների շուրթերի բեկորներ, 2. Կանթերի բեկորներ, 3. Խփի բռնակ (գրչ՝ Անի Սահակյանի)

Աղյուսակ III. Մաքրման աշխատանքների ժամանակ ի հայտ եկած մանրամասներ (գրչ.՝ Աշոտ Մանասյանի)

Դիանա Միրիջանյան
պ.գ.թ.,
ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ավագ գիտաշխատող
diana.mirijanyan@iae.am

Նյուրա Հակոբյան
պ.գ.թ.
ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ավագ գիտաշխատող

ՓԱՐՊԻԻ Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Նախաբան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միջնադարյան հնագիտության բաժինը, վերակառուցման աշխատանքներով պայմանավորված, 2008թ. պեղումներ է իրականացրել Ս.Թարգմանչաց եկեղեցու շրջակայքում[1] (նկ.1, 2):

Փարպի գյուղը պատմական Այրարատյան նահանգի Արագածոտն գավառի հինավուրց բնակատեղիներից է և հայտնի է ոչ միայն պատմական տարբեր դարաշրջաններին վերագրվող հնագիտական, ճարտարապետական հուշարձաններով, այլև որպես 5-րդ դ. պատմիչ Ղազար Փարպեցու ծննդավայր:

Ս.Թարգմանչաց եկեղեցին գտնվում է Փարպի գյուղի արևելյան կողմում, բարձրադիր բլրի վրա և ամեն կողմից տեսանելի է գյուղի համայնապատկերում: Եկեղեցու անվանումն ինքնին հուշում է, որ այն նվիրված է Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթև կաթողիկոսի թարգմանիչ սաներից առաջինների հիշատակին:

Հայոց եկեղեցին «Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց» անվան ներքո տոնում է վեց թարգմանիչների հիշատակը՝ Մեսրոպ Մաշտոցի գլխավորությամբ: Հայոց նորօրյա տոնացույցում նշվում է շատ յուրահատուկ և ինքնատիպ մի տոն, նվիրված միջնադարյան թարգմանիչներին: Այն կարելի է ասել համաժողովրդական հարգանքի և խոնարհումի ձոն է մեր առաջին թարգմանիչներին:

Հայտնի է, որ վկայարանները, մատուռները քրիստոնեական հավատքի համար նահատակված սուրբ վկաների կամ մարտիրոսների հիշատակին նվիրված կառույցներ են, որ հիմնարկվում էին նրանց գերեզմանների վրա, երբեմն էլ

[1] Ս.Թարգմանչաց եկեղեցու պեղումների նախնական արդյունքների մասին տես Ն.Հակոբյան, Դ. Միրիջանյան, Փարպիի «Ս.Թարգմանիչք» եկեղեցու պեղումները, Էջմիածին, 2011, N 5, էջ 82–87:

սուրբ մասունքներից գեթ մի մասնիկ տեղադրվում էր կառույցի հիմքում: Ուստի կարելի է ենթադրել, որ Փարպիի Ս. Թարգմանչացը ևս նման մի շինություն է՝ նվիրված թարգմանիչներից որևիցե մեկին, ամենայն հավանականությամբ Ղազար Փարպեցուն, թեև այս միտքը հաստատող գրավոր ոչ մի տեղեկություն պահպանված չէ:

Ս. Թարգմանչացն իր նրբակերտ փոքր չափերով բազմամարդ հոգևոր արարողություններ իրականացնող կառույց լինել չէր կարող, քանզի գյուղում ժամանակին գործել է փառահեղ և խոշոր մի եկեղեցի՝ Ծիրանավորը (5-րդ դ.): Ընդգծենք, որ հայկական ճարտարապետության լավագույն գիտակներից Ա. Յակոբսոնը ենթադրում էր, որ Հայաստանում խաչաձև հատակագծով դամբարանների ճարտարապետության հետագա վերգետնյա արտահայտություններն են ներքին և արտաքին խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ փոքրիկ եկեղեցիները, որոնք սկզբնապես կառուցվել են որպես դամբարաններ[2]:

Ճարտարապետությունը

Ս. Թարգմանչացը հատակագծային հորինվածքով առնչվում է 7-րդ դ. երկրորդ կեսի քառախորան, կենտրոնագմբեթ փոքր շինություններին (նկ. 3)[3]: Եկեղեցին հրաշալի նկարագրում է հայկական ճարտարապետության լավագույն գիտակ Թորոս Թորամանյանը. «Հայոց 7-րդ դարու շինարարական արվեստին մեջ մի առանձին տեղ գրավելու արժանի է Փարպիում Ս. Թարգմանիչ կամ Թարգմանչաց եկեղեցի անվանված կիսավեր շենքը: Եկեղեցին իր ճարտարապետական համաչափություններով և ներդաշնակ դասավորություններով չքնաղ մի երևույթ է»[4]:

Ս. Թարգմանչացը ներքուստ և արտաքուստ խաչաձև եկեղեցի է, հենախորշերը ներքուստ կիսաշրջանաձև են, խաչաթևերը միմյանց հպվում են որմնասյուներով: Արտաքուստ դրանք ուղղանկյուն են և խաչաթևերն իրար հպվում են քարե գլանաձև որմնասյուներով: Վերջիններս զարդարում են հիմքում տափակ, իրանի հատվածում կիսագնդաձև խոյակները, հարդարված հյուսածո համակենտրոն շրջանների բազմագալար զարդաշղթաներով, որոնք առանձնակի շուք են հաղորդում շինությանը: Գմբեթատակ հիմքից դեպի թմբուկ անցումն իրականացվել է առագաստավոր փոխանցումներով, որի ապացույցը ճակատային հատվածում տրամատված գոգավոր քարի առկայությունն է եկեղեցու տարածքում: Եկեղեցին կառուցված է դարչնագույն տուֆի սրբատաշ մեծադիր քարերով (չափերը՝ 1,00 մ, 0,77 մ, 0,65 մ) և ունի միայն մեկ մուտք հարավային կողմում: Կառույցն իր գմբեթատակ քառակուսու ներքին անկյունների ձևավորումով հիշեցնում է Ագարակի (Ախուրյանի աջ ափին, Տեկորի հարևանությամբ), իսկ արտաքին անկյունների լուծմամբ՝ Ծփնիի, Արտաշավանի, Քարաշամբի

[2] Якобсон 1950, 37–38,164.
[3] Գրիգորյան 1982, 15:
[4] Թորամանյան 1948, 227:

եկեղեցիներին[5]: Եկեղեցու վաղմիջնադարյան թվագրության օգտին են խոսում նաև տեղում պահպանված խաչակալները և քառակող կոթողները, որոնք 7-րդ դ. հետո չեն հանդիպում[6] (նկ. 4):

Հետագա դարերում եկեղեցին հիմնովին վերակառուցվել է՝ ձեռք բերելով ժամանակին համահունչ ճարտարապետական հարդարանքի մանրամասներ. պատուհանի երեսակալ, դեպի բեմ, Ավագ խորան տանող կիսաշրջանաձև աստիճաններ, քիվերի մնացորդներ, հավանաբար նաև մուտքի ճակատային հատվածն իր աննման զարդաքանդակներով (նկ. 5): Զարդաքանդակները՝ բուսական, երկրաչափական, թռչնապատկեր, անմիջական աղերսներ ունեն Բուժականի Թեղենյաց վանքի Կաթողիկե եկեղեցու բեմի ճակատային հատվածի զարդաքանդակների հետ[7]: Ժամանակի ընթացքում եկեղեցին խոնարհվել է: Պահպանվել են խաչաթևերի պատերը՝ մոտ 2 մ բարձրությամբ (նստած որմնախարիսխների վրա):

Ս. Թարգմանչացն այժմ բոլոր կողմերից շրջապատված է ժամանակակից թաղումներով, որոնք խաթարում են ոչ միայն ճարտարապետական, գեղագիտական ընդհանուր պատկերը, այլև խանգարում պեղումներին:

Ուսումնասիրության պատմություն

Պեղումների արդյունքում հարավային կողմում, անմիջապես մուտքի մոտ, բացվել են սեղանաձև տապանաքարերի շարքեր (նկ. 6): Դրանք կարմրավուն տուֆից զանգվածեղ և հղկված անզարդ սալեր են՝ տեղ-տեղ ճաքեր տված (երկ.՝ 1,53–1,54 մ, լայն.՝ 0,66–0,72 մ, հաստ.՝ 13–14 սմ):

Տապանաքարերից երկուսը ննջեցյալի գլխամասում ունեն գծաքաշ լուսապսակներ, որոնք հավանաբար նրա հոգևոր դիրքը ցուցող նշան են: Գերեզմաններում հավանաբար հանգչում են նաև հոգևորականներ, միաբաններ, քանզի նման եկեղեցի-վկայարանի շուրջը հիմնականում ձևավորվում էր համայնքային գերեզմանատունը: Հնարավոր է, որ այդ մասին է Սահակ Պարթևի կանոններում հետևյալ կետը. «…և որպէս եղև անառակ սովորութիւն քահանայից և նոցին կանանց գերեզմանս առ եկեղեցիս առնել և ի տեղիսն սրբութեան, յայսմհետէ յառաջ մի իշխեսցեն առնել, այլի ժողովրդականացն հանգստարանս եղիցին և քահանայիցն հանգստարանք, զի սրբութեան տեղին պարկեշտութեամբ պատուեսցի, …ի գերեզմանս յեկեղեցիս մի՛ իշխեսցեն առնել, ապա եթէ գտցի ոք արարեալ, յեկեղեցւոջն պատարագ մի ոք իշխեսցէ մատուցանել մինչև մաքրեսցեն զտեղիսն»[8]:

Տապանաքարեր բացվեցին նաև արևմտյան կողմում (թվով երեքը): Դրանցից առավել ուշագրավը տուֆ քարից սալի կես է, խաթարված դիրքում, գլխամասը ուղղված է դեպի հյուսիս: Գլխամասը հարդարված է գծաքաշ, վեղա-

5 Գրիգորյան 1982, 15:
6 Գրիգորյան 2012, 134–135, նկ. 58–61:
7 Սարգսյան 1990, 180–181, 183:
8 Կանոնագիրք Հայոց 1964, 380, «իդ», 486:

րանման նշանով, որը կարող է ցուցել հանգուցյալի՝ հոգևոր բարձր դասի ներկայացուցիչ լինելու մասին (նկ. 7):

Տապանաքարերից մի քանիսը բացվեցին մասնակի, քանի որ դրանց շարունակության վրա անմիջականորեն նստած են ժամանակակից թաղումները: Տապանաքարերի հարևանությամբ, եկեղեցու արևմտյան անկյունում, բացվել է արտաքին խաչաթևերն իրար կապող որմնասյուներից մեկի խոյակը (նկ. 8): Այն ունի նույն կերտվածքն ու հարդարանքը, ինչ վերը նկարագրածը՝ բազմաշրջան, բազմագալար հյուսկեն շղթաներ՝ հարդարված զարդագնդիկներով: Նույն հատվածում գտնվեց և քարե սյան բեկոր:

Մաքրման աշխատանքների շնորհիվ հնարավոր եղավ փաստել, որ եկեղեցին ունեցել է որմնանկարներ, որոնց փոքր հատվածներ նշմարելի էին պատերի որոշ քարերի վրա (նկ. 9):

Հողահեռացման ժամանակ բացվեց պատի երեսակալ քարերից մեկը՝ որմնանկարի մնացորդներով (նկ. 10): Կաթնագույն ալեբաստրե նուրբ հենքի վրա պահպանված է վառ կարմիր ներկով պատած մի հատված, զարդապատկերներ հիշեցնող տարրերով: Վերջին ժամանակներս կատարված հետազոտական աշխատանքները, հուշարձանների և գրավոր աղբյուրների առավել բազմակողմանի ուսումնասիրությունները հավաստում են, որ դեռևս շատ վաղ ժամանակներից խճանկարն ու որմնանկարը եղել են ճարտարապետական շինությունների ներքին հարդարանքի օրգանական տարրերից: Հայաստանը, լինելով քրիստոնյա առաջին երկրներից մեկը, քրիստոնեական մշակույթի, ճարտարապետական նոր լուծումների ու ոճական նոր ուղղությունների, քրիստոնեական պատկերագրության մշակման, իշխող գաղափարախոսության պահանջների ձևավորման ակտիվ մասնակիցներից էր: Հայաստանում եկեղեցական շատ շինություններ (5–7-րդ դդ.) հարդարվել են որմնանկարներով և խճանկարներով, և, ինչպես գրում է Վրթանես վրդ. Քերթողը. «*…իսկ յեկեղեցիս քրիստոնէից, և յարկս վկայից Աստուծոյ տեսանեմք նկարեալ զսուրբ Գրիգոր և աստուածահաճոյ չարչարանք իւր», «զայդ ամենայն նկարեն յեկեղեցիս՝ զոր գիրք սուրբք պատմեն. ոչ ապաքէն դեղով գրեալ են զգիրսն, զնոյն բանս դեղով նկարեալ է. յեկեղեցիս ի գրոցն ականջք միայն լսեն, իսկ զնկարսն աչօք տեսանեն և ականջօք լսեն, և որ սրտիւքն իմանան և հաւատան*»[9]: Նա հաստատում է այն միտքը, որ «…համր նկարը պատի վրա խոսուն է դառնում» (Գրիգոր Նյուսացի), դրանով արդարացնելով որմնանկարների գաղափարախոսական ներգործության վիթխարի ուժը նորահավատ քրիստոնյաների կրոնական զգացումների վրա: Ընդգծենք, որ քրիստոնեական պատկերագրության մեջ առաջնությունը տրվում էր Քրիստոսի փրկագործական խաչելության և հարության տեսարաններին, որով հույս էր ներշնչվում միջնադարի հայ քրիստոնյային առ այն, որ հնարավոր է Աստծո նման անմահանալ[10]: Ցավոք, եկեղեցական շինությունների

[9] Տեր-Ներսեսյան 1975, 11–12:

[10] Պետրոսյան 2008, 54:

որմնանկարներից շատ քիչ բան է պահպանվել: Այնուամենայնիվ, եզակի ու փոքրաթիվ նմուշներն էլ բավարար են փաստելու, որ 5–7-րդ դդ. Հայաստանում լայն տարածում է ունեցել որմնանկարչությունը (Էջմիածին, Տեկոր, Թանահատ, Երերույք, Մրեն, Դվին (բազմանիստ աբսիդ), Մաստարա, Լմբատավանք, Կարմրավոր, Աշտարակ, Արուճ և այլն): Որմնանկարների մնացորդները մեծ մասամբ պահպանված են գունաշերտի հետքերով, ինչպես Թարգմանչացում:

Եկեղեցու արևմտյան կողմում գտնվել է գմբեթը թմբուկին կապող գոտու քարերից մեկը (երեսով թաղված էր հողի մեջ, հարդարված երկրաչափական գեղաքանդակ ձևերով): Զարդաձևերն ունեն խոյակներին նմանվող կերտվածք (նկ.11): Սրանք մանրամասներ են, որ թույլ են տալիս ենթադրելու, որ դրանք միևնույն վարպետի գործ են և պատկանում են նույն ժամանակին:

Գտածոները

Խեցանոթների բազմաքանակ բեկորներ են, որոնք գտնվել են քարե խճի և հողի բազմաշերտ կուտակումներում: Դրանք անջնարակ և ջնարակապատ տարաբնույթ կավանոթներ են, առավելապես խոհանոցային գործածության: Անջնարակ խեցեղենը տարբերակվում է ըստ հետևյալ խմբերի.

Կարասներ. Հիմնականում բեկորային են, սակայն մեկ օրինակ հնարավոր եղավ ամբողջացնել: Կարասն ունի հետաքրքիր հորինվածք, պարզ ու գեղեցիկ հարդարում (աղ.1, նկ.1): Մակերեսը դարչնագույն է, գնդաձև իրանով, կարճ վզով, ոչ լայն բերանով, դեպի դուրս ծալվող շուրթով, ժապավենաձև տափակ պսակով: Իրանը հարդարող զարդատարրերն են՝ վերադիր սահող ալիքազարդը, կենտրոնով շուրջանակի անցնող ժապավենաձև զարդագոտին, հարդարված փորագիր գծաքաշ զարդերով, որոնք կրկնվում են նաև ուսի վրա, իսկ ներքնամասում, նստուկից վեր, փորագիր գծաքաշ գոտիներով է: Կարասը (բարձ. 60 սմ, իրանի շրջ. 168 սմ, հատակի տր. 75 սմ, բերանի տր. 28 սմ), ամենայն հավանականությամբ, օգտագործվել է իբրև գինու տարա: Նման անոթներ, այլ հարդարմամբ, բայց նույն նպատակով, հայտնի են թե՛ Հայաստանում և թե՛ հարևան երկրներում (Դվին, Անի, Գառնի, Արմավիր, Օրան-Կալա և այլն) և թվագրվում են 12–14-րդ դդ.[11]:

Կճուճներ. Հիմնականում մրապատ են, ուռուցիկ, երբեմն գնդաձև իրանով, կարճ վզով, դեպի դուրս փռվող լայն պսակով, հարդարված ակոսազարդերով: Խեցին կարմրավուն կամ դեղնավարդագույն է, մի փոքր ծակոտկեն, բայց համասեռ և խիտ: Օրինակների մեջ հանդիպում են իրանին ալիքազարդերով և գծերով հարդարված բեկորներ (աղ.1, նկ.2–7): Հայտնաբերված կճուճների կանթերի (աղ.1, նկ.9) մեջ կան նաև վերադիր պայտաձև զարդով հարդարված օրինակներ (աղ.1, նկ.8): Կճուճների խփերի ձևերը նույնական են Հայաստանի տարբեր հուշարձաններից հայտնի օրինակներին[12]: Դրանք սկավառակաձև անոթներ են, որոնց եզրերը վերջանում են ուռուցիկ գոտիով (աղ.1, նկ.10–11):

[11] Պետրոսյան 1988, 52:

[12] Kalantaryan et all 2009, 131.

Թասեր. Կարմրափայլ, բարակապատ, դեպի դուրս փովող ժապավենաձև պսակով, օղակավոր ոտք-նստուկով ոչ շատ խոր անոթներ են: Խեցին ծակոտկեն է, բայց խիտ, կավը մանրահատիկ, թրծումը հիմնականում համաչափ (պատի հաստ. 5–8 մմ, պսակի լայն. 10–12 մմ): Պատահում են նաև իրանի վրայով անցնող գծաքաշ զարդագոտիներով հարդարված բեկորներ (աղ. 2, նկ. 1), ինչպես նաև ներսից կենտրոնական հատվածում շրջանաձև, կարմրաներկ օրինակներով (աղ. 2, նկ. 2): Թասերի մեջ կան նաև այրման հետքերով բեկորներ (աղ. 2, նկ. 3): Թասերին զուգահեռ գտածոների թվում կան նաև կաթնագույն և դարչնագույն մակերեսով քրեղանների օրինակներ (աղ. 2, նկ. 4–7):

Սափորներ. Շուրթերի, վզի, իրանի և նստուկի բեկորներ են: Հանդիպում են նաև բռնակներ: Վառ աղյուսագույն են, երբեմն դեղնավուն, ներքուստ վարդագույն: Սափորների բեկորների մեջ կան շեփորաձև բերան ունեցող օրինակներ (աղ. 2, նկ. 8, 9): Բեկորների այս խմբում առանձնանում են նաև լավ կոկած մակերեսով, նույն կավի շփոթով կամ էլ բաց կաթնավուն անգոբով պատած օրինակներ, որոնք հարդարված են փորագիր ակոսազարդերով (աղ. 2, նկ. 10, 11):

Կավանոթները թվագրվում են 12–14-րդ դդ.՝ հիմնվելով բազում զուգահեռների վրա, որոնք հայտնի են Հայաստանի տարբեր հնավայրերից (Դվին, Անի, Գառնի, Եղեգիս, Արտաշատ և այլն)[13]:

Ձնարակապատ անոթների բեկորները փոքրաթիվ են: Ունեն դեղնավուն հենք, հարդարված նկարեն, փորագիր, կանաչավուն բուսազարդերով ու երկրաչափական հարդատարրերով և վերաբերում են 12–13-րդ դդ. (աղ. 2, նկ. 14–17): Դրանք իրենց զուգահեռներն ունեն Հայաստանի հուշարձանների տվյալ դարաշրջանով թվագրվող շերտերում[14]: Գտածոներից ուշագրավ է նաև հախճապակու բեկորը (աղ. 2, նկ. 18):

Հայտնաբերված հարթ կղմինդրի բեկորները վերաբերում են եկեղեցու նախնական ծածկին և կարող են թվագրվել 7-րդ դ. (աղ. 2, նկ. 12, 13):

Զարդարանքի եզակի նմուշ է ապակե աչքի ուլուքը (աղ. 2, նկ. 19): Մուգ սև հենքը զարդարում են մանր ու խոշոր ակնաբիբերը՝ շրջանակված դեղին, կարմիր, սև, կաթնագույն շրջաններում: Նման ուլունքները ոչ միայն զարդ էին, այլև հմայիլներ՝ չար աչքից պաշտպանվելու համար:

Ամփոփում

Փարպիի Ս. Թարգմանիչք եկեղեցին հիմնադրվել է 7-րդ դ. երկրորդ կեսին, որի մասին փաստում են հորինվածքային առանձնահատկությունները, ինչպես նաև տեղում պահպանված քառակող կոթողների բեկորները և խաչակալները: Հետագա դարերում եկեղեցին հիմնովին վերակառուցվել է, որի մասին կարող են փաստել շքեղ զարդաքանդակները: Հնագիտական գտածոները, որոնք հիմնականում թվագրվում են 12–14-րդ դդ., ինչպես նաև հայտնաբերված

[13] Kalantaryan et all 2009, pl. XLIV, XLV, XLVI–1.6.8, XLVII, XLVIII.

[14] Ղաֆադարյան, Քալանթարյան 2002,93–94; Բաբաջանյան, Միրիջանյան 2013, 145:

տապանաքարերը, որոնք ևս տվյալ ժամանակաշրջանի են, հիմք են տալիս փաստելու, որ այդ շրջանում եկեղեցին լիարժեք գործել է՝ իրականացնելով իր հոգևոր գործառույթները:

Дианна Мириджанян
к. и. н.
ИАЭ НАН РА, старший научный сотрудник,
diana.mirijanyan@iae.am

Нюра Акопян
к. и. н.
ИАЭ НАН РА, старший научный сотрудник

РАСКОПКИ ЦЕРКВИ СВ. ТАРГМАНЧАЦ В ПАРПИ

В 2008 году сотрудники отдела археологии Средневековья Армении Института археологии и этнографии НАН РА провели работы по расчистке и раскопкам территории вокруг церкви Св. Таргманчац в селе Парпи, связанные с её реставрацией.

Село Парпи – одно из древнейших поселений уезда Арагацотн исторической области Айрарат (совр. Аштаракский район марза Арагацотн). Оно известно не только археологическими и архитектурными памятниками разных исторических эпох, но и как родина Лазара Парпеци, имя которого неразрывно связано с летописанием истории армянского народа.

Церковь Св. Таргманчац расположена на восточном возвышенном холме села Парпи. Само её название указывает на то, что она посвящена памяти первых переводчиков – Месропа Маштоца и католикоса Саака Партева.

Св. Таргманчац – небольшая крестообразная в плане церковь. Построена из крупных тесаных туфовых камней коричневого цвета. По своим композиционным особенностям церковь соотносится с небольшими центральнокупольными сооружениями VII века (Текор, Цпхи, Арташаван, Карашамб) и датируется тем же периодом.

Очистительные работы дали удовлетворительные результаты. На южной и западной сторонах, прямо под развалинами, были обнаружены ряды надгробных плит, предположительно принадлежащих представителям духовенства. Рядом с надгробиями, в западном углу церкви, была найдена капитель одного из пилястров, украшенная спиралевидным орнаментом.

Результаты раскопок позволяют утверждать, что интерьер церкви был украшен фресками. Под слоем земли был обнаружен один из облицовочных камней с остатками росписи. Также были найдены многочисленные предметы, в основном в виде фрагментов (за исключением одного караса): крупные сосуды, кувшины, чаши и другие изделия, которые можно датировать XII–XIV веками.

Dianna Mirijanyan, PhD
Institute of Archaeology and Ethnography NAS RA,
Senior Researcher
diana.mirijanyan@iae.am

Nyura Hakobyan, PhD
Institute of Archaeology and Ethnography NAS RA,
Senior Researcher

THE EXCAVATIONS OF THE CHURCH OF ST. TARKMANCHATS IN PARPI

In 2008, the Department of Medieval Archaeology of the Institute of Archaeology and Ethnography of the NAS RA carried out excavations around the Church of St. Targmanchats in the village of Parpi, in connection with its restoration. Parpi is one of the oldest settlements of the historical Aragatsotn district of the Ayrarat Province (present-day Aragatsotn Region). The village is renowned not only for its architectural and archaeological monuments from different historical periods, but also as the birthplace of the Armenian historian Ghazar Parpetsi, whose name is forever associated with his chronicle of the history of the Armenian people.

The church stands on an elevated hill on the eastern side of the village. Its name indicates that it is dedicated to the memory of the first translators – Mesrop Mashtots and Catholicos Sahak Partev. This small, cross-shaped church, built of large, finely dressed brown tuff blocks, dates to the 7th century AD. In its layout and central-domed design, as well as in certain decorative elements, it is comparable to other small Armenian churches of the same period, such as those at Tekor, Tspni, Artashavan, and Karashamb.

Excavations uncovered a row of gravestones on the southern and western sides of the church, most likely belonging to members of the clergy. In the western corner, an impost capital decorated with fine spiral ornamentation was found. The remains of wall paintings indicate that the church's interior was once adorned with frescoes.

In addition, numerous ceramic finds were discovered, mostly in fragmentary condition, with the exception of one complete *karas*. These include large jars, pitchers, bowls, and other vessels, which can be dated to the 12th–14th centuries AD.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ և այլք 2013
Բաբաջանյան Ա., Միրիջանյան Դ. 2013, Թեղենյաց վանքի խեցեղենը, «Պատմաբանասիրական հանդես», N 1, էջ 134–150:

ԳՐԻԳՈՐՅԱՆ 1982
Գրիգորյան Վ. 1982, Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 128 էջ:

ԳՐԻԳՈՐՅԱՆ 2012
Գրիգորյան Գ. 2012, Հայաստանի վաղ միջնադարյան քառանիստ կոթողները, Երևան, ՀՊԹ, 288 էջ:

ԹՈՐԱՄԱՆՅԱՆ 1948
Թորամանյան Թ. 1948, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. II, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 307 էջ:

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ 1964
Կանոնագիրք Հայոց 1964, գիրք Ա, աշխատությամբ Վ. Հակոբյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 742 էջ:

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ և այլք 2002
Ղաֆադարյան Կ., Քալանթարյան Ա. 2002, Դվին II, Դվինն քաղաքը և նրա պեղումները (1973–1980 թթ.), Երևան, «Գիտություն», 254 էջ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ 1988
Պետրոսյան Հ. 1988, Գառնին IX–XIVդդ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 162 էջ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ 2008
Պետրոսյան Հ. 2008, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, «Փրինթինֆո», 406 էջ:

ՍԱՐԳՍՅԱՆ 1990
Սարգսյան Գ. 1990, Թեղենյաց վանքի պեղումները (1979–1989 թթ. պեղումների արդյունքները), Պատմաբանասիրական հանդես, N 2, էջ 174–190:

ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆ 1975
Տեր-Ներսեսյան Ս. 1975, Հայ արվեստը միջնադարում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ, էջ 135:

ЯКОБСОН 1950
Якобсон А. 1950, Очерк истории зодчества в Армении V–XVII веков, М–Л, Гос. Изд. Архитектуры и градостоительства, 164 с.

KALANTARYAN et al 2009
Kalantaryan A., Karakhanyan G., Melkonyan H., Petrosyan H., Hakobyan N., Babayan F., Zhamkochyan A., Nawasardyan K., Hayrapetyan A., Armenia in the cultural context of east and west, ceramics and glass (4th–14th centuries), Yerevan, NAS RA «Gitutyun» publishing house, 2009, p. 186.

Նկ. 1. Ս. Թարգմանչաց եկեղեցին վերականգնումից առաջ (լուսանկարները՝ հեղինակների)

Նկ. 2. Եկեղեցու հարավային մուտքի դիմացի հատվածը պեղումներից առաջ



Նկ. 3. Ս. Թարգմանչաց եկեղեցու հարավային մուտքը, հյուսի-հարավ կտրվածքը և հատակագիծը (Վ. Գրիգորյան, 1982, տախտակ IV)

Նկ. 4. Քառակող կոթողների սյան, խարսխի և խաչակալների օրինակներ

Նկ. 5. Եկեղեցու հարավային մուտքի ճակատակալ քարը

Նկ. 6. Մուտքի առջև բացված տապանաքարերը

Նկ.7. Տապանաքարի բեկոր՝ վեղարի նմանվող հարդարանքով

Նկ.8. Եկեղեցու խոյակ՝ հայտնաբերված պեղումների ժամանակ

Նկ. 9. Որմնանկարի հետքեր պատերի տարբեր հատվածներում

Նկ. 10. Կարմիր ներկով պատած որմնանկարի մի հատված

Նկ. 11. Գմբեթը թմբուկին կապող գոտու քարերից մեկը՝ հայտնաբերված պեղումների արդյունքում

Հնագիտական գտածոները



Աղ. 1



Աղ. 2

Լիլիթ Միքայելյան
Հայ-ռուսական համալսարանի Արևելագիտության ինստիտուտ, դասախոս
mikayelyanlilit@ysu.am

Զարուհի Հակոբյան, ա.գ.թ.
Երևանի պետական համալսարան, դոցենտ
Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա
hakobyanzaruhy@ysu.am

ՓԱՐՊԻԻ Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՔԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԹՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ[1]

Նախաբան

Փարպի գյուղի հարուստ մշակութային ժառանգության նշանակալի հուշարձաններից է Ս. Թարգմանիչք կամ Ս. Թարգմանչաց եկեղեցին: Այն գտնվում է գյուղի արևելյան մասում խոյացող բլրի վրա և շրջապատված է ժամանակակից գերեզմանոցով (նկ. 1): Հուշարձանը մեզ էր հասել կիսավեր վիճակում, կանգուն էին միայն հիմնապատերը՝ մոտ 2 մ բարձրությամբ (նկ. 2): 2008 թ. եկեղեցու տարածքը մաքրվել և պեղվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատակիցներ Նյուրա Հակոբյանի և Դիաննա Միրիջանյանի կողմից[2], ինչից հետո էլ վերջերս այն վերակառուցվեց և վերաօծվեց գործող եկեղեցու[3]: Ս. Թարգմանչացի տարածքում պահպանվել են նաև վաղմիջնադարյան քառանիստ կոթող (նկ. 4), կոթողի պատվանդան և 6–7-րդ դդ. թվագրվող երկու խաչակալ[4]: Վերջիններս այժմ դրված են եկեղեցու բեմին (նկ. 5):

Ս. Թարգմանչացի ճարտարապետական առանձնահատկությունները բավականին ուսումնասիրված են: Եկեղեցուն անդրադարձել են Թորոս Թորա-

---

[1] Ուսումնասիրությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ՝ «Հայկական միջնադարյան քանդակը 12–14-րդ դդ. զարգացման օրինաչափությունները, խորհրդաբանությունն ու ոճը» գիտական պրոյեկտի շրջանակներում (ծածկագիր՝ 25RG-6E165):

[2] Հակոբյան և այլք 2011:

[3] Եկեղեցու վերակառուցումը իրականացվել է ճարտարապետ Աշոտ Հովսեփյանի ղեկավարությամբ և հնարավոր է դարձել տեղացի բարերար Բաբկեն Առաքելյանի միջոցներով:

[4] Գրիգորյան 2012, 134–135, 235:

մանյանը[5], Մուրադ Հասրաթյանը[6], Վահագն Գրիգորյանը[7], Պաոլո Կունեոն[8]: Հուշարձանի մասին առավել հանգամանալից գրել է Արմեն Ղազարյանը՝ 7-րդ դ. հարավկովկասյան ճարտարապետությանը նվիրված իր քառահատոր աշխատության 3-րդ հատորում[9]: Ըստ բոլոր ուսումնասիրողների՝ կառույցը 7-րդ դ. երկրորդ կեսի փոքր քառախորան եկեղեցի է՝ միակ հարավային մուտքով, որը վերաշինվել է զարգացած միջնադարում (նկ. 3): Հուշարձանի վերակառուցման ստույգ ժամանակաշրջանը հստակեցված չէր. Մ. Հասրաթյանն ու Ա. Ղազարյանը այն վերագրում են 11–12-րդ[10], իսկ Ն. Հակոբյանը և Դ. Միրիջանյանը՝ 12–14-րդ դդ.[11]: Վերաշինման արդյունքում զգալի փոփոխվել՝ հարստացել է եկեղեցու արտաքին հարդարանքը:

Հոդվածի նպատակն է դիտարկել կառույցի քանդակային հավելումները, որոնք մինչ օրս արվեստաբանական քննության չեն արժանացել, ինչպես նաև դրանց պատկերագրական և ոճական առանձնահատկությունների հիման վրա որոշակիացնել եկեղեցու վերակառուցման ժամանակաշրջանը:

Ս. Թարգմանչացի ճարտարապետական նկարագիրը, թմբուկի և քիվերի հարդարանքը

Փարպիի եկեղեցու նախնական կառուցվածքի փոփոխությունը երևում է հատկապես թմբուկին: Այսօր գոյություն ունեցող գլանաձև թմբուկը, ինչպես նաև առագաստային անցումները առավել բնորոշ էին Բագրատունիների և Զաքարյանների շրջանին, բայց ոչ 7-րդ դ. կառույցներին: Վստահաբար կարելի է նաև ասել, որ հետարաբական շրջանում է բարձրացվել բեմը[12], և ըստ ամենայնի ավելի ուշ հավելումների շարքին են պատկանում դեպի խորանը տանող կիսակլոր աստիճանները (նկ. 5): Ս. Թարգմանչացի բոլոր չորս ճակատներին բացվում են մեկական նեղ պատուհաններ, որոնցից կան նաև թմբուկի չորս կողմերում: Առհասարակ լուսամուտների այսօրինակ նեղ բացվածքները հատուկ չէին վաղ միջնադարյան կառույցներին, հետևաբար դրանք նույնպես պետք է համարել վերաշինման արդյունք:

Եկեղեցու առանձնահատուկ դրսևորումներից են արտաքին կառուցվածքում՝ խաչի թևերի միացման չորս անկյուններում երեք քառորդ ծավալով դուրս եկող որմնասյուները (նկ. 6): Դրանց առկայությունը թույլ է տալիս հաստատել նախնական կառույցի 7-րդ դ. երկրորդ կեսի թվագրությունը, քանի որ նշված ժամանակահատվածում է, որ արտաքին ձևավորման մեջ ի հայտ են գալիս

5 Թորամանյան 1948, 226:
6 Асратян 2000, 21, 124, ил. 74–75.
7 Գրիգորյան 1976, 84–87:
8 Cuneo et al. 1988, vol. 1, 198.
9 Казарян 2012, т. 3, 535–539.
10 Асратян 2000, 21; Казарян 2012, т. 3, 535–536.
11 Հակոբյան և այլք 2011, 83:
12 Hakobyan 2022, 100–109.

նման կիսասյուներ[13], և որոնք չեն հանդիպում հետարաբական շրջանում: Այս առանձնահատկությամբ հայտնի է եկեղեցիների մի ամբողջ խումբ, որոնք են՝ Արթիկի և Թալինի կաթողիկեները, Գառնահովիտի Ս. Գևորգը (նկ. 7), Եղվարդի Ջորավարը, Իրինդի եկեղեցին, ինչպես նաև վրացական Ծրոմի և Սամշվիլդե եկեղեցիները[14]: Բոլոր վերը նշված օրինակներում այդ սյուները դրված են արտաքին ճարտարապետական խորշերում և միայն Փարպիի դեպքում է, որ դրանք խաչաթևերի անկյուններում են, որը, թերևս, պայմանավորված էր եկեղեցու փոքր չափսերով ու խորշեր չունենալու հանգամանքով:

Հատկանշական է, որ վերը բերված զուգահեռներում սյուների վերին մակերեսին փաստված են փոսիկներ, որոնք, Արմեն Ղազարյանի արդարացի կարծիքով, եղել են ծավալային խաչերի ամրացման համար[15]: Փարպիի դեպքում սյուներն ավարտվում են քարի առանձին կտորից կերտած և ավելի լայն չափերի քանդակազարդ խոյակներով, առանց փոսիկների, որոնց զգալի ծավալները համահունչ չեն թե՛ սյուներին և թե՛ կառույցի ընդհանուր մասշտաբին[16]: Խոյակների ձևերն ու հարդարանքը ավելի շատ համապատասխանում են 10–11-րդ դդ. դեկորին: Դրանք ունեն գլանաձև բարձիկ և հաստ վերնասալ, իսկ խոյակի հիմնական՝ գնդաձև ծավալը հարդարված է երկու շարք միահյուսված շրջանակներով, որոնք կազմված են եռագալար ժապավեններից և դրանց մեջտեղում տեղադրված գնդից (նկ. 8): Նման խոյակներ չեն հանդիպում 7-րդ դ., իսկ զարգացած միջնադարի ճարտարապետության մեջ դրանց ամենամոտ զուգահեռը կարելի է տեսնել Անիի Մայր տաճարի (989–1010 թթ.) հարավային ճակատի կամարաշարին (նկ. 10): Վերջինիս բարձր վերնասալի դիմահայաց մասը հարդարված է խոշոր գնդերի շուրջ միահյուսված երկգալար շրջանակներով[17]: Փարպիի խոյակների նախշերի համաչափություններն ու մշակման ոճը միանգամայն նույնանում են եկեղեցու թմբուկի պատուհանների լայն կամարունքերի հարդարանքի հետ, որոնք կազմված են նույնատիպ եռագալար շրջանակներից և գնդերից (նկ. 9): Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ խոյակներն ու երեսակալները միաժամանակյա են և եկեղեցու վերաշինման արդյունք են:

Ս. Թարգմանչացի թմբուկի բոլոր չորս պատուհանները երկու կողմից երիզված են ուղղանկյուն հարթ խարիսխների վրա բարձրացող զույգ կիսասյուներով և նույնպիսի խոյակներով, որոնց վրա էլ հանգչում է լայն կամարունքը (նկ. 1): Վերջին վերակառուցման ժամանակ շարվածքում օգտագործվել են երեսակալների պահպանված դրվագները, իսկ բացակայող մասերը շարվել են հարթ, առանց դեկորի քարերով: Այնուամենայնիվ, եկեղեցու տարածքում կան երեսակալների մի քանի չօգտագործված բեկորներ, որոնցից մեկը գրեթե ամբողջական կամարունք է (նկ. 11): Միահյուսված շրջաններից կազմված այս

---

13 Казарян 2012, т. 3, 53.

14 Նույն տեղում, 108, 152, 277, 332, 359, 422, 536, илл. 1411–1415, 1496, 1500, 1503, 1737, 1817, 1832, 1861, 1864, 1950, 1975, 2172, 2181:

15 Նույն տեղում, 56, 277, 422:

16 Այժմ տեղում են երեք խոյակները, չկա հյուսիսարևմտյանը:

17 Կարապետյան 2001, նկ. 221:

նախշն ունի իր նախատիպերը 7-րդ դ. քանդակում (Մաստարա, Թալին, Իրինդ[18]), այն տարբերությամբ, որ Փարպիում դրանց ժապավենների թիվը շատանում է, իսկ միահյուսման տեղում առաջանում են փոքր օղակներ:

Հայտնի է, որ Բագրատունյաց շրջանի ճարտարապետությունը և մասնավորապես զարդաքանդակը ուղղակիորեն զարգացել են 7-րդ դ. ավանդույթների հիման վրա՝ ինչի արդյունքում ոսկեդարին հատուկ զարդամոտիվները, բարդանալով և հարստանալով, դարձել են ավելի երկրաչափականացված և ոճավորված[19]: Այս միտումը արտահայտվել է նաև միահյուսված շրջանակների զարդաձևում, որտեղ առաջ են գալիս մի շարք տարբերակներ, երբ ներսի գնդերի փոխարեն քանդակվում են ծաղիկներ (Անիի Աբուղամրենց Ս. Գրիգոր, 10-րդ դ. վերջ, Իշխանի տաճար, Տայք, 10-րդ դ. վերջի –11-րդ դ. սկզբի վերաշինումը) (նկ. 12), աստղեր ու վարդյակներ (Անիի Մայր տաճար)[20] կամ եռատերևներ (Նեղուցի վանքի Ս. Աստվածածին եկեղեցի, 10–11-րդ դդ.)[21]: 10–11-րդ դդ. խաչքարերի վրա նույնպես կարելի է տեսնել այս զարդամոտիվը, ինչպես օրինակ Անիի խաչքարերից մեկի շրջանակին[22], Ցախաց քարի խաչքարի վերին՝ կամարաձև հատվածին և այլն: Բոլոր նշված օրինակների պլաստիկ լուծումները մոտ են Ս. Թարգմանչացի թմբուկի կամարունքերի նախշին: Հարկ է միայն նշել, որ վերջիններս առանձնանում են բավականին խոշոր չափսերով (երեսակալների զարդագոտու հաստությունը 26 սմ է) (նկ. 9, 11), և ինչպես և նշեցինք արտաքին խոյակների դեպքում, մասշտաբով չեն համապատասխանում եկեղեցու փոքր չափսերին:

Կառույցի թմբուկի քիվը բաղկացած է հարթ եզրագոտուց և կիսագլանից[23], իսկ նրա հիմնական ծավալը պսակված է հյուսածո լայն քիվերով, որոնք կազմված են եռագալար ժապավեններից՝ ինչպես և երեսակալների շրջանակներինը (նկ. 13): Քիվերի այս ձևը նույնպես բավականին տարածված է եղել 7-րդ դ. երկրորդ կեսից՝ Զվարթնոցում և նրանից հետո կառուցված եկեղեցիներում: Դրանցում հիմնականում կիրառվել է երկգալար տիպը (Զվարթնոց, Արուճ, Եղվարդի Զորավոր, Թալին, Արթիկ, Սիսավան, Կարմրավոր[24]), սակայն կան նաև եռակի ժապավեններով օրինակներ (Իրինդ, Թալինի կաթողիկե[25]): Փարպիի հյուսածո քիվերը բավականին մոտ են 7-րդ դ. ձևին և ոճին, ուստի դժվար է ասել, արդյոք դրանց ինչ-որ մասեր կարող էին վերաշարված լինել 7-րդ դ. կառույցից: Սակայն, ըստ ամենայնի, քիվերի մեծ մասը նույնպես արվել է եկեղեցու վերաշինման ժամանակ: Դրանք միանգամայն նույնանում են Բագրատունյաց

18 Асратян 2000, 135, 175.
19 Казарян, 2022; Mikayelyan 2023, 71
20 Կարապետյան 2001, նկ. 194, 219:
21 Հակոբյան և այլք, 2023, 298, նկ. 14:
22 Կարապետյան 2001, նկ. 586:
23 Թմբուկի քիվի նախնական քարերից պահպանվել են միայն մեկ-երկուսը, ինչի հիման վրա էլ արվել է վերակառուցումը:
24 Асратян 2000, 133, 147, 151:
25 Նույն տեղում, 148, 175, նկ. 18:

շրջանի մի շարք կառույցների քիվերի հետ՝ օրինակ Մարմաշենի Կաթողիկեի (988–1029) (նկ. 14), Անիի «Միջնաբերդի գմբեթավոր» (10–11-րդ դդ.) և Ս. Հռիփսիմե (992–1019) եկեղեցիների և այլն[26]:

Ի տարբերություն հիմնական ծավալի երկրաչափական քիվերի՝ եկեղեցու գմբեթատակ քառակուսու քիվերը հարդարված են բուսական զարդագոտիով: Այն բաղկացած է ցողունով իրար միացված նշատերևներից, որոնց հիմքից դուրս են գալիս ոլորուն զույգ բեղիկներ, իսկ ստորին մասում կաթիլանման ելուստ կա (նկ. 13): Նույնատիպ գոտիով են հարդարված եկեղեցու հարավային և արևելյան ճակատների պատուհանների երեսակալները, միայն թե այս դեպքում տերևները մեկումեջ ուղղված են հակառակ ուղղություններով (նկ. 31, 32): Եռատերևների կամ արմավիկների պարզ փնջերից բաղկացած այս զարդաձևը իր տարատեսակներով նույնպես շատ է հանդիպում 7-րդ դ.[27], սակայն դրանք զգալի տարբերվում են Փարպիի օրինակից:

Ս. Թարգմանչացի քիվերի և երեսակալների այս նախշը մի փոքր այլ լուծմամբ քանդակված է նաև նրա շքամուտքի բարավորին (նկ. 21), բացի այդ, այն նույնանում է կառույցի մոտ կանգնած մեծ խաչքարի եզրագոտու հետ (նկ. 16): Այս խաչքարը թվակիր չէ, սակայն զարդաձևերով հարում է 11-րդ դ. խաչքարերին, մասնավորապես, Մաքրավանքի 1039 թ. և Աշտարակի 11-րդ դ. թվագրվող օրինակներին[28]: Դրանց վրա, ինչպես և Փարպիի խաչքարին, առկա է խաչվող զույգ գլանիկների և օղակների համադրությամբ կազմված զարդագոտի: Նույն նախշը տեսնում ենք նաև Բղենո Նորավանքի նախասրահի (10–11-րդ դդ.) որմնամույթերին և այլն (նկ. 15):

Շքամուտքի հարդարանքը

Եկեղեցու մուտքը երկու կողմից եզերված է հարթ խարիսխների վրա հենված զույգ կիսասյուներով և քանդակազարդ խոյակներով (նկ. 17): Ձախ խոյակի կենտրոնում պատկերված է եռանկյունաձև տերև՝ ստորին բեղիկներով և կաթիլանման ելուստով: Դրանցից աջ և ձախ քանդակված են մեկական սիմետրիկ կիսարմավներ և եռատերևներ, որոնց արանքներում չորս խաղողի ողկույզներ են: Խոյակի վերին մասը հարդարված է տափակ գնդերի շարքով (նկ. 18): Աջ կողմի խոյակը միայն ընդհանուր առմամբ է կրկնում առաջինի հորինվածքը և ավելի ընդհանրացված, պարզեցված կատարում ունի: Նրա կենտրոնական տերևը նշաձև է և ստորին մասում ունի նույն ոլորուն բեղիկները: Այստեղ, ի տարբերություն ձախ խոյակի, պատկերված են խաղողի երկու ողկույզ և չորս կիսարմավ: Ինչպես վերը տեսանք՝ ստորին ելուստներով նշատերևի այս մոտիվը առկա է նաև անկյունային քիվերին, երկու ճակատների պատուհանների երեսակալներին, մեծ խաչքարի վրա, ինչպես նաև մուտքի բարավորի եզրագոտում: Հավելենք, որ Ս. Թարգմանչացի խոյակները իրենց ընդհանուր պատկե-

[26] Կարապետյան 2001, նկ. 274–275, 417:

[27] Асратян 2000, 176.

[28] Պետրոսյան 2008, նկ. 141, 145:

րագրությամբ և ոճով՝ խոշոր կիսարմավներով և խաղողի ողկույզներով մոտ են Բղենո Նորավանքի նախասրահի որմնախոյակների (նկ. 19) և Իշխանի տաճարի ներսույթի խոյակների ձևավորմանը (նկ. 20):

Փարպիի մուտքի բարավորը բավականին խոշոր է, տաշված է միակտոր քարից (չափերը՝ 187 × 81 սմ) և արտաքինից ամբողջությամբ քանդակազարդ է (նկ. 21): Նրա հորինվածքը կազմված է վերին և ստորին զարդագոտիների ներսում ամփոփված երեք խոշոր վարդյակներից: Ներքևի լայն գոտին կազմված է հիշատակված նշատերևների շարքից, որը հավելված է դրանց արանքներում ցողունից կախված կլոր ծաղիկներով (տեսանելի են դրանց փորագրված թերթիկները): Բարավորի վերին՝ ավելի նեղ գոտին բաղկացած է հայերեն «զ» տառը հիշեցնող զարդատարրի շարքից, որը կարծես պատկերում է երկու միահյուսվող գալարիկներ: Կենտրոնական վարդյակը ներկայացնում է կարծես մեկ առանցքի շուրջը փաթաթված և մերթ ընդ մերթ միահյուսվող գալարներ: Վարդյակի մեջտեղում վեցաթև աստղ է, իսկ չորս անկյուններում՝ եռատերևներ՝ ստորին բեղիկներով: Կողային վարդյակները հորինվածքով գրեթե սիմետրիկ են և կազմված են երկու՝ քառակուսի և կիսակլոր թերթիկներից կազմված քառաթև ֆիգուրների համադրությունից: Այս երկրաչափական պատկերները նույնպես հավելված են դեպի կենտրոն ուղղված չորս նշատերևներով, իսկ կենտրոնում՝ տարբեր ծաղկանախշերով: Բարավորի վերին քարին նույնպես քանդակված են երկու՝ աստղաձև և շրջանաձև հյուսածո վարդյակներ:

Փարպիի բարավորի հորինվածքը կարելի է ասել եզակի է և չունի մոտ զուգահեռներ: Սալի ընդհանուր համաչափություններով և պատկերներով այն կարելի է համեմատել ներկայիս Գանձակ գյուղի (Գեղարքունիքի մարզ, նախկին Բատիկյան) 9–11-րդ դդ. Ս. Գևորգ եկեղեցու երկու մուտքերի բարավորների հետ (չափերը՝ 160 × 70 սմ), հատկապես հյուսիսայինի, որի վրա նույնպես քանդակված են երկու խոշոր վարդյակներ[29] (նկ. 22): Ս. Թարգմանչացի բարավորի հորինվածքային հաջորդ զուգահեռը Թեղենյաց վանքի 11-րդ դ. առաջին կեսի Կաթողիկե եկեղեցու բեմառէջքն է[30]: Վերջինիս սալերին նույնպես կա երեք գլանիկներից բաղկացած միահյուսվող օղակների մոտիվը, ինչպես նաև Փարպիի կենտրոնական վարդյակը հիշեցնող՝ մի քանի շարքով պտտվող և հանգուցվող շրջանակները (նկ. 23, 24): Կարելի է հիշատակել նաև Մարմաշենի վանքի Կաթողիկե եկեղեցու (988–1029) բեմառէջքի օրինակը, որը Թեղենյացի պես վերաշարված է սալերի կտորներով, որոնց մեծ մասը միաժամանակյա են եկեղեցուն: Դրանց վրա նույնպես միահյուսվող շրջաններով վարդյակներ կան:

Վարդյակի մոտիվը անշուշտ ունիվերսալ է և հանդես է գալիս հնագույն ժամանակներից ի վեր: Վաղ քրիստոնեական շրջանից սկսած երկրաչափական

[29] Մնացականյան 1960, 93–96, նկ. 60–61:

[30] Մեր վերջին ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բեմի 10–11-րդ դդ. սալերը վերաշարվել են վանքի 13-րդ դ. շինարարական փուլում: Դրանց պատկերագրությունը հարում է Անիի Բագրատունյաց կառույցների, ինչպես նաև 10–12-րդ դդ. բյուզանդական պատվարների քանդակային հարդարանքին: Մանրամասն տե՛ս Հակոբյան և այլք 2023, 94–95, նկ. 42–46, 198–199, նկ. 24–31, Հակոբյան և այլք 2024 ա, 142–144, նկ. 4–5:

և բուսական տարրերից բաղկացած վարդյակները հաճախ են հանդիպում խաչային հորինվածքներում կամ առանձին՝ արտահայտելով հավերժության գաղափարը, ժամանակի ցիկլային ընթացքը, ինչպես նաև խորհրդանշելով լուսատուներին և այլն (օրինակ՝ Երերույքի, նույն Փարպիի վաղմիջնադարյան Ս. Գրիգոր եկեղեցու դեկորում)։ Ինչպես գիտենք, վարդյակները դառնում են խաչքարերի պատկերագրության գլխավոր բաղադրիչներից մեկը՝ խորհրդանշելով Գողգոթա լեռը և տիեզերքի կենտրոնը, նույն համատեքստում նաև երկրագունդը, եկեղեցու սուրբ սեղանը և այլն[31]։ Անշուշտ նման իմաստներ էին կրում նաև եկեղեցիների արտաքին հարդարանքում կամ բեմառէջքներին պատկերվող շրջանաձև և քառակուսի վարդյակները, որոնք հատկապես Բագրատունյաց շրջանում հաճախ են կազմվում քառաթերթի, շրջանի և քառակուսու տարբեր համադրություններով։ Փարպիի բարավորի կենտրոնական վարդյակին իր միահյուսված շրջանների պտույտով մոտ է նաև Խծկոնքի որմնափակ խաչքարի վարդյակը (11-րդ դ. 30-ական թվականներ)[32], իսկ կողայինները կարելի է զուգադրել Ցախաց քարի 1041 թ. խաչքարի քառակուսի շրջանակի մեջ ամփոփված վարդյակի հետ (նկ. 24–25)։

Ս. Թարգմանչացի բարավորի քառակուսի ֆիգուրները հիշեցնում են նաև հայկական վաղ միջնադարյան քառակող կոթողների վրա պատկերված *օմֆալոսները*[33]։ Վերջիններս քառանկյան մեջ դասավորված շրջանների և քառակուսու միահյուսված պատկերներ են՝ հաճախ կենտրոնում խաչով կամ ծաղկանախշով։ Դրանք քանդակված են Թալինի կոթողի պատվանդանին[34], Բրդաձորի մեծ կոթողի վրա, Շնողի (նկ. 27–28) և Բոլնիսի կոթողներին[35]։ Այս ֆիգուրների ծագումը կապվում է բյուզանդական եկեղեցիներում կենտրոնական նավի կամ գմբեթատակ հատվածի հատակին արվող քարե երփնադրվագ օմֆալոսների հետ։ Վերջիններս խորհրդանշում էին աշխարհի և նրա մոդելը հանդիսացող եկեղեցու կենտրոնը և որոշակի դեր էին խաղում եկեղեցական ծիսակարգում։ Այժմ պահպանված օմֆալոսներով խճանկար հատակներից հատկապես հայտնի են Կոստանդնուպոլսի Ս. Սոֆիայի տաճարի 11-րդ դ. օրինակը, Աթոսի Իվիրոն վանքի Կաթողիկեի օմֆալոսը (1045–1056)[36] (նկ. 29) և այլն։ Նմանատիպ հատակ է ունեցել նաև Տայքի Իշխանի տաճարը, որն ամենայն հավանականությամբ պատկանում է 1027–1032 թթ. վերակառուցմանը[37]։ Օմֆալոսների պատկերները բավականին տարածված էին նաև 9–12-րդ դդ. բյուզանդական,

31 Պետրոսյան 2008, 278–284։

32 Նույն տեղում, նկ. 148։

33 Օմֆալոս կամ օմֆալիա (հուն. պորտ) էր կոչվում Հունաստանի Դելֆի քաղաքում գտնվող Ապոլլոնին նվիրված հնագույն պաշտամունքային քարը, որը համարվում էր աշխարհի կենտրոնը։ Միջնադարյան օմֆալոսը այս խորհրդանիշի վերաիմաստավորված, վերացարկված երկրաչափական պատկերն է՝ կենտրոնական մեծ և կողային փոքր շրջանների տեսքով (նկ 29)։

34 Գրիգորյան 2012, նկ. 110բ։

35 Dadiani et al 2017, fig. 84–89, 129.

36 Казарян 2012, т. 1, 187–188.

37 Հակոբյան և այլք 2024։

ինչպես նաև վրացական քարե պատվարների (նկ. 26, 30), խոյակների, մկրտության ավազանների հարդարանքում[38]:

Հատկանշական է, որ երկրաչափական տարբեր ֆիգուրներից կազմված, հաճախ բուսական տարրերով բարդ վարդյակները հանդիպում են նաև վաղիսլամական ճարտարապետական դեկորում, օրինակ իրանական Սամանիդների դինաստիայի մայրաքաղաք Աֆրասիաբի (ժամանակակից Սամարղանդի մոտ) 10-րդ դ. գիպսե սալերին[39]: Փարպիի բարավորի երկու կողային վարդյակների հորինվածքին շատ մոտ է Իրաքից գտնված 9-րդ դ. խեցե ջնարակապատ ափսեի պատկերը, որտեղ նույն սկզբունքով և երկրաչափական ոճով համադրված և միահյուսված են բազմաթերթ ու խաչաձև ֆիգուրները՝ արմավիկների և կենտրոնում ծաղկի հավելումներով[40]: Բերված բազմաթիվ օրինակները ցույց են տալիս, որ միջնադարյան արվեստում տիեզերքի հիերարխիկ, կանոնակարգված կառուցվածքի, որոշակի վերացական գաղափարների արտահայտման համար հաճախ էր կիրառվում երկրաչափական վարդյակի ձևը: 9–11-րդ դդ. դրանց օրինակները տարբեր մշակույթներում ունեն բավականին մոտ գեղարվեստական լուծումներ՝ սիմետրիկ, պարզ ֆիգուրների միահյուսված համադրությամբ՝ կենտրոնում ծաղկանախշով կամ խաչով:

Ճակատների պատուհանների հարդարանքը

Փարպիի եկեղեցու ճակատների չորս լուսամուտներից երկուսը՝ հարավայինն ու արևելյանը, երկու կողմից ամփոփված են սլացիկ զույգ կիսասյուների մեջ, որոնք ունեն ուղղանկյուն հարթ խարիսխներ ու խոյակներ (նկ. 31–32): Նույն սկզբունքով են ձևավորված նաև թմբուկի բոլոր չորս պատուհանները, որոնց կիսասյուները սակայն ավելի խոշոր են (նկ. 2): Կառույցի արևմտյան և հյուսիսային ճակատների լուսամուտները չունեն կիսասյուներով ձևավորում, սակայն դժվար է ասել ՝ արդյոք այդպես է եղել միջնադարյան վերաշինման ժամանակ, թե դա մեր օրերի վերակազմության արդյունք է՝ հաշվի առնելով հուշարձանի՝ մեզ հասած դրվագների սակավությունը և դրանից ելնող հնարավոր անճշտությունները: Նմանատիպ զույգ սյուներով դեկորատիվ օրդերի կիրառումը պատուհանների ձևավորման մեջ հանդիպում է նաև Անիի 10–11-րդ դդ. ճարտարապետության մեջ (Աբուղարմրենց Ս. Գրիգոր, Անիի Մայր տաճար)[41] (նկ. 33), ինչպես նաև կրկնվում է 12-րդ դ. վերջի – 13-րդ դ. կեսի որոշ եկեղեցիների լուսամուտներին (Մակարավանքի փոքր՝ Ս. Աստվածածինը, Նոր Վարագավանքի Գլխավոր եկեղեցին): Սակայն Փարպիի ճակատային պատուհանների ձևավորումը, որը փաստացի արձագանքում է նրա շքամուտքի դեկորին, ուղղակի զուգահեռ չունի:

Ճակատային չորս լուսամուտներն էլ պսակված են լայն երեսակալ սալերով, որոնք վնասված են և այժմ լրացվել են նոր քարերով: Հարավային երեսա-

38 Niewöner 2021, 158–163, Dadiani et al 2017, fig. 492.
39 Денике 1939, 40, рис. 23–25
40 Грабар 2016, 219, рис. 107.
41 Казарян 2017, ил. 3-a, b.

կալից պահպանվել է միայն երիզող կիսակլոր հատվածը, որին քանդակված է մեզ ծանոթ նշատերևների գոտին (նկ. 31)։ Գոտուց ձախ երևացող ռելիեֆի դրվագը, ինչպես նաև մյուս երեք երեսակալների հարդարանքը հուշում են, որ սալի կորսված մասը նույնպես քանդակազարդ է եղել։ Հարկ է նշել, որ միայն հարավային լուսամուտի դեկորում են պահպանվել որմնասյուների նախնական խարիսխները, որոնք հարդարված են զույգ կիսարմավներով։ Ուստի պետք չէ բացառել, որ ճակատային մյուս պատուհանների խարիսխները (և միգուցե խոյակները) նույնպես կարող էին քանդակազարդ լինել։ Ինչ վերաբերում է թմբուկի պատուհաններին՝ ապա դրանց պահպանված նախնական խարիսխներն ու խոյակները հարթ են (նկ. 1)։

Ս. Թարգմանչացի արևմտյան ճակատի լուսամուտի երեսակալի կենտրոնում քանդակված է կենտրոնից դուրս եկող չորս արմավափունջ (նկ. 35)։ Վերջինից աջ մեզ ծանոթ եռագալար շրջանակներով կազմված քառակուսի է՝ մեջտեղում վեցաթև վարդյակով, իսկ ձախ մասում շրջանի և եռանկյունու միահյուսված երկրաչափական պատկեր է՝ մեջտեղում փոքր շրջանով։ Երեսակալի կամարաձև մասը ձևավորված է շրջաններից և զիգզագներից բաղկացած, նույնպես հյուսածո, երկրաչափական գոտիով։ Այս զարդաձևը կրկնվում է եկեղեցու հյուսիսային պատուհանի երեսակալի վերին մասում, որի ներքևի կամարաձև գոտին հարդարված է հյուսածո շղթայով և խաղողի որթագալարով (նկ. 36)։ Ինչպես տեսանք, խաղողի ողկույզներ էին պատկերված նաև շքամուտքի խոյակներին, ինչպես նաև եկեղեցու մոտ գտնվող մեծ և փոքր խաչքարերին (նկ. 16, 34)։ Առհասարակ խաղողի որթագալարի մոտիվը առավել տարածված է եղել վաղ միջնադարյան հուշարձանների դեկորում, ապա Բագրատունիների շրջանում այն համեմատաբար ավելի քիչ է հանդիպում, իսկ 13–14-րդ դդ. խաղողի մոտիվը հանդիպում է եզակի կառույցներում և փոքրաթիվ խաչքարերում՝ ինչպիսին է, օրինակ, Գեղարդավանքի Կաթողիկեի հայտնի շքամուտքը[42]։

Ս. Թարգմանչացի արևելյան լուսամուտի երեսակալին տեսնում ենք երկու՝ իրար ուղղված թռչունների պատկերներ, որոնց առաջնամասերը, ցավոք, չեն պահպանվել (նկ. 37)։ Սակայն, ելնելով արտահայտիչ փետուրներից և փարթամ պոչերից, կարելի է ենթադրել, որ դրանք փասիանի տեսակներ են։ Անշուշտ, նմանատիպ հորինվածքները բազմաթիվ են հայկական միջնադարյան քանդակում, ինչպես նաև մանրանկարչության մեջ, երբ թռչունները երիզում են մուտքերի, լուսամուտների կամ խորանների բացվածքները[43]։ Փարպիում թռչնազարդ է հենց ավագ խորանի լուսամուտը, ուստի, ելնելով միջնադարյան ընդունված խորհրդաբանությունից, թռչուններն այստեղ կարող էին կրել լույսի և հարության խորհուրդը[44]։

Թռչնաքանդակների հորինվածքով և ժամանակագրորեն Փարպիին ամենամոտ զուգահեռներից է Տայքի Պարխարի եկեղեցու (973) հյուսիսային

42 Mikayelyan 2023, 72–75.

43 Պետրոսյան 2024։

44 Պետրոսյան 2008, 297–299։

պատուհանի հարդարանքը (նկ. 38)[45]: Նշենք նաև, որ եկեղեցու մոտ դրված մեծ խաչքարի վերին մասում՝ խաչաթևերին նույնպես պատկերված են երկու թռչուն՝ կտուցներին խաղողի ողկույզներով (նկ. 39): Չնայած քանդակները չափազանց սխեմատիկ են, իսկ աջ կողմի թռչունը գրեթե ամբողջությամբ մաշված է, սակայն ամենայն հավանականությամբ դրանք սիրամարգեր են, ինչպես և Պարխարի թռչունները: Արևելյան երեսակալի ներքևի գոտին, ինչպես վերը տեսանք, կրկնում է եկեղեցու շքամուտքի, կարճ քիվերի և խաչքարի նշատերևների մոտիվը, ուստի թռչունները հստակորեն նույն շրջանում են քանդակվել:

Եկեղեցու վերջին վերակառուցման ժամանակ մի շարք քանդակազարդ բեկորներ ցավոք չեն օգտագործվել շարվածքում, որոնցից են թմբուկի հյուսածո օղակներով կամարուները (նկ. 9, 11): Նշատերևներով և սխեմատիկ ականթազարդով ևս մի չօգտագործված քար էլ այժմ ընկած է եկեղեցու մոտ, որը հավանաբար նույնպես պատուհանի երեսակալի մաս է (նկ. 40): Վերջինիս շատ մոտ հարդարանքով բեկոր էլ այժմ դրված է Փարպիի Ծիրանավոր եկեղեցու մոտ (նկ. 41): Երկու քարերի վրա էլ կամարաձև մասի հիմքում քանդակված է երեք գունդ: Չի բացառվում, որ դրանք մեկ երեսակալի մասեր են, և, ելնելով նախշերի ձևից ու ոճից, ամենայն հավանականությամբ, պատկանել են Ս. Թարգմանչացի հարդարանքին: Նշենք, որ այս զարդամոտիվը հար և նման է եկեղեցու մոտի մեծ խաչքարի վերին շրջանակի գոտուն (նկ. 42): Մյուս բեկորը, որն այժմ նույնպես Ծիրանավորի տարածքում է, տրամատավոր երիզով քար է՝ նշատերևներից բաղկացած քառաթերթ խոշոր վարդյակով (նկ. 43): Վերջինս բավականին մոտ է Ս. Թարգմանչացի արևելյան՝ թռչուններով լուսամուտի քանդակազարդ քարին՝ նույնատիպ վարդյակով, և տեսականորեն կարող էր լինել նրա զույգը (նկ. 44):

Ամփոփում

Փարպիի Ս. Թարգմանչաց եկեղեցու հարդարանքի մանրամասն քննությունը ցույց է տալիս, որ քանդակների գերակշիռ մասը, եթե ոչ ամբողջը, պատկանում է նրա վերաշինմանը և կարող է թվագրվել Բագրատունիների շրջանով՝ 10-րդ դ. վերջով – 11-րդ դ. առաջին կեսով: Ունենալով բազմաթիվ պատկերագրական և ոճական զուգահեռներ այդ ժամանակաշրջանի կառույցների հետ՝ միևնույն ժամանակ եկեղեցու քանդակային հարդարանքը բավականին ինքնատիպ է և հարուստ: Ս. Թարգմանչացի մոտ կանգնած մեծ խաչքարի և կառույցի դեկորատիվ մանրամասների համեմատությունը թույլ է տալիս ենթադրելու, որ դրանք կարող են կատարված լինել նույն վարպետի կողմից: 7-րդ դ. նախնական կառույցին պատկանող արտաքին անկյունային սյուներով Փարպիի եկեղեցին եզակի է ողջ միջնադարյան ճարտարապետության մեջ: Վերջիններիս կանգնեցման շարժառիթները այս փոքր եկեղեցում և հնարավոր գործառույթը դեռևս հստակ չեն և հետագա ուսումնասիրման կարիք ունեն:

[45] Պարխարի եկեղեցու մյուս պատուհանները նույնպես ձևավորված են խոշոր ուղղանկյուն քանդակազարդ երեսակալներով (Dadiani 2017, fig. 357–360), որոնք առհասարակ շատ մոտ են Փարպիի պատուհանների ձևավորմանը, բայց և գրեթե չեն հանդիպում կենտրոնական Հայաստանի 10–11 դդ. հուշարձաններում:

Лилит Микаелян
Институт Востоковедения Российско-Армянского университета, преподаватель
mikayelyanlilit@ysu.am

Заруи Акопян
Ереванский государственный университет, доцент, к. и. н.
Государственная Академия художеств Армении,
hakobyanzaruhy@ysu.am

ПРОБЛЕМА КЛАССИФИКАЦИИ И ДАТИРОВКИ СКУЛЬПТУРНОГО УБРАНСТВА ЦЕРКВИ СУРБ ТАРГМАНЧАЦ В ПАРПИ

Церковь Сурб Таргманчац (Святых Переводчиков) является частью богатого средневекового наследия села Парпи в Армении. На протяжении своей истории церковь несколько раз перестраивалась. Последние реставрационные работы проводились сравнительно недавно, в 2008 году, после расчистки и археологических раскопок на памятнике.

Сурб Тагманчац – небольшая крестово-купольная церковь, построенная во второй половине VII века, с единственным южным входом. Она была основательно перестроена в эпоху развитого средневековья, когда были заменены и многие элементы декора. Согласно ряду архитектурных особенностей, ученые относили период перестройки церкви или к XI–XII (М. Асратян, А. Казарян), или к XII–XIV векам (Н. Акопян, Д. Мириджанян). Однако поздние скульптурные вставки памятника не были рассмотрены с точки зрения их художественных особенностей. Исследование декора церкви, проведенное в статье, показало, что большую часть ее скульптурного убранства нужно отнести к эпохе Багратидов, к периоду конца X и первой половины XI века, о чем говорят иконографические и стилистические параллели со скульптурой других багратидских памятников. В пользу такой датировки свидетельствует и стоящий у входа в церковь монументальный хачкар с аналогичными декоративными мотивами.

Lilit Mikayelyan
Institute of Oriental Studies of the Russian-Armenian University, lecturer
mikayelyanlilit@ysu.am

Zaruhi Hakobyan
Yerevan State University, PhD in Art
State Academy of Fine Arts of Armenia
hakobyanzaruhy@ysu.am

THE ISSUE OF CLASSIFICATION AND DATING OF THE SCULPTURAL DECOR OF THE SURB TARGMANCHATS CHURCH IN PARPI

The village of Parpi in Armenia boasts a rich medieval heritage, exemplified by the Surb Targmanchats (Holy Translators) Church. It has undergone several reconstructions over the centuries, and the most recent restoration took place in 2008, following site clearance and archaeological excavations.

The Surb Targmanchats Church is a small cross-domed structure, originally built in the second half of the 7th century, with a single entrance on the southern side. It was completely rebuilt during the high Middle Ages, with many of its decorative elements renovated. Based on various architectural features, scholars have proposed different dates for the reconstruction: M. Asratyan and A. Kazaryan suggest it occurred in the 11th–12th centuries, while N. Hakobyan and D. Mirijanyan place it between the 12th and 14th centuries. However, the later additions to the church's sculptural decoration have not yet been examined in terms of their artistic characteristics. Within the scope of this study, it has become evident that the majority of the church's sculptural décor should be attributed to the Bagratid period — specifically, to the late 10th and early 11th centuries. This dating is supported by iconographic and stylistic parallels with sculptures found on other Bagratid monuments. Further evidence is provided by a monumental khachkar with similar decorative motifs, positioned at the entrance to the church.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ 2012
Գրիգորյան Գ., Հայաստանի վաղ միջնադարյան քառանիստ կոթողները, Երևան, ՀՊԹ հրատ., 2012, 288 էջ:

ԳՐԻԳՈՐՅԱՆ 1976
Գրիգորյան Վ., Վաղ միջնադարի հայկական քառախորան հուշարձանները // ԼՀԳ, 1976, հ. 1, էջ 74–90:

ԹՈՐԱՄԱՆՅԱՆ 1948
Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության, հ. 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1948, 378 էջ:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ 2001
Կարապետյան Ս., Անի ՌԾ (1050), Երևան, ՀՃՈՒՀ հրատ., 2001, 263 էջ:

ՀԱԿՈԲՅԱՆ և այլք 2024
Հակոբյան Զ., Ասրյան Ա., Տայքի Իշխան տաճարի դրվագազարդ հատակը և եկեղեցիների հատակների ձևավորման արևելաքրիստոնեական ավանդույթը // «Տայքը պատմության խաչուղիներում», Հոդվածների ժողովածու, Գյումրի, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2024, էջ 33–52:

ՀԱԿՈԲՅԱՆ և այլք 2024 ա
Հակոբյան Զ., Գրիգորյան Դ., Հայկական վաղագույն բեմառէջքների հարդարանքը և Անիի գեղարվեստական ավանդույթը, Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի, № 2 (14), 2024, էջ 137–145:

ՀԱԿՈԲՅԱՆ և այլք 2023
Հակոբյան Զ., Միքայելյան Լ., Ասրյան Ա., Ավետիսյան Թ., Հայաստանի 12–14-րդ դդ. խոնարհված և քիչ ուսումնասիրված եկեղեցական կառույցների քանդակային հարդարանքը, Թեմատիկ գլուխներ, կատալոգ, պատկերաշար, Մաս I, Երևան, ԵՊՀ հրատ., 2023, 356 էջ, հասանելի է՝ URL: http://publishing.ysu.am/hy/1712298628.

ՀԱԿՈԲՅԱՆ և այլք 2011
Հակոբյան Ն., Միրիջանյան Դ., Փարպիի «Ս. Թարգմանիչք» եկեղեցու պեղումները // Էջմիածին, Ե, 2011, էջ 82–87:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ 1960
Մնացականյան Ս., Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 1960, 304 էջ:

ՊԵՏՐՈՍՅԱՆ 2024
Պետրոսյան Ա., Մուտքի խորհուրդը. ավետարանների խորանների և եկեղեցիների շքամուտքերի պատկերագրական ու խորհրդաբանական ընդհանրությունները հայկական արվեստում // Գեղարվեստի ակադեմիայի Տարեգիրք, 16, 2024/1, էջ 41–63:

ՊԵՏՐՈՍՅԱՆ 2008
Պետրոսյան Հ., Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, Փրինթինֆո, 2008, 406 էջ:

АСРАТЯН 2000
Асратян М., Армянская архитектура раннего христианства, Москва, Инкомбук, 2000. 399 էջ:

ГРАБАР 2016
Грабар О., Формирование исламского искусства, Москва, «САДРА», 2016, 448 с.

ДЕНИКЕ 1939
Денике Б. Архитектурный орнамент Средней Азии. М.–Л., 1939, 223 с.

КАЗАРЯН 2012
Казарян А., Архитектура стран Закавказья VII в.: формирование и развитие традиции, т. 1–4, Москва, Locus Standi.

КАЗАРЯН 2017
Казарян А., Столичная школа армянской архитектуры эпохи Багратидов. Новый обзор развития, Вопросы всеобщей истории архитектуры, вып. 8, 1–2017, с. 87–116.

КАЗАРЯН 2022
Казарян А., Ретроспектива как творческий метод зодчих Армянского царства Багратидов // Academia. Ахитектура и строительство, 2022 (4), pp. 22–30.

CUNEO et al 1988
Cuneo P. et al, Architettura armena dal quarto al diciannovesimo secolo, vol 1–2, Rome: De Luca, 1988.

DADIANI et al 2017
Dadiani T., Khundadze T., Kvachatadze E., Medieval Georgian Sculpture, Tbilisi, G. Chubinashvili National Research Centre for Georgian Art and Heritage Preservation.

HAKOBYAN 2022
Hakobyan Z., The Chancel-Barrier Fragments and Certain Elements of the Sanctuary Design in Early Medieval Armenian // Liturgical Furnishings Between East and West (5th – 15th Centuries). Fragments, Objects, and Contexts (ed. by Fabio Coden), University of Verona, 2022, pp. 100–109.

MIKAYELYAN 2023
Mikayelyan L., Greco-Roman Ornamental Motifs in Armenia and Iran. Commonality and Sustainability of Tradition (5th–11th Centuries) // Convivium Supplementum, Re-Thinking Late Antique Armenia: Historiography, Material Culture, and Heritage, vol. 11. 2023, pp. 60–79.

NIEWÖNER 2021
Niewöner P., Byzantine Ornaments in Stone: Architectural Sculpture and Liturgical Furnishings, Berlin–Boston, 200p.



Նկ. 1. Փարպիի Ս. Թարգմանչաց եկեղեցին հարավ-արևմուտքից

Այն լուսանկարները, որոնց հեղինակը նշված չէ, արված են Լ. Միքայելյանի և Զ. Հակոբյանի կողմից։

Նկ. 2



Նկ. 3

Նկ. 4

Նկ. 5

Նկ. 2. Ս. Թարգմանչացը մինչև վերակառուցումը (ըստ՝ Ասրатян 2000)
Նկ. 3. Ս. Թարգմանչացի հատակագիծը (ըստ՝ Ասրатян 2000)
Նկ. 4. Եկեղեցու փարաձքի վաղ միջնադարյան քառանիստ կոթողը
Նկ. 5. Ս. Թարգմանչացի ներսույթը

Նկ. 6

Նկ. 7

Նկ. 8

Նկ. 9

Նկ. 10

Նկ. 6. Ս. Թարգմանչաց եկեղեցու հարավարևմտյան որմնասյունը
Նկ. 7. Գառնահովիտի Ս. Գևորգ եկեղեցու արևմտյան ճակատը, 7-րդ դ. երկրորդ կես (խորշերի սյուների թևավոր խաչերի վերականգնությունը՝ Արմինե Ապրեսյանի)
Նկ. 8. Ս. Թարգմանչաց եկեղեցու որմնասյան խոյակը
Նկ. 9. Եկեղեցու թմբուկի կամարունքի դրվագ
Նկ. 10. Անիի Մայր տաճարի (989-1010) հարավային ճակատի կամարաշարի արևմտյան խոյակը

Նկ. 11

Նկ. 12

Նկ. 13

Նկ. 14

Նկ. 11. Եկեղեցու թմբուկի կամարունքի չօգտագործված կտորներ
Նկ. 12. Իշխանի տաճարի հյուսիսային պատուհանի կամարունքը (Տայք, 10-րդ դ. վերջ – 11-րդ դ սկզիբ), (լուս. Ջավեն Սարգսյանի)
Նկ. 13. Ս. Թարգմանչաց եկեղեցու քիվերը
Նկ. 14. Մարմաշենի Կաթողիկե եկեղեցու քիվերը (988-1029)

Նկ. 15

Նկ. 16

Նկ. 17

Նկ. 15. Բղենո Նորավանքի նախասրահի (10-11-րդ դդ.) որմնամույթի դրվագ (լուս. Համլիկ Էվոյանի)
Նկ. 16. Եկեղեցու կողքի մեծ խաչքարը, 11-րդ դ. առաջին կես
Նկ. 17. Ս. Թարգմանչացի շքամուտքը

Նկ. 18

Նկ. 19

Նկ. 20

Նկ. 21

Նկ. 22

Նկ. 18. Ս. Թարգմանչացի շքամուտքի ձախ խոյակը
Նկ. 19. Բղենո Նորավանքի նախասրահի որմնախոյակը (լուս. Համլիկ Էվոյանի)
Նկ. 20. Իշխանի տաճարի ներսոյթի խոյակը (10-րդ դ. վերջ – 11-րդ դ սկզիբ), (լուս. Զավեն Սարգսյանի)
Նկ. 21. Ս. Թարգմանչացի մուտքի բարավորը (աղբյուրը՝ Wikimedia Commons)
Նկ. 22. Գանձակ գյուղի Ս. Գևորգ եկեղեցու հյուսիսային մուտքի բարավորը, 9–11-րդ դդ. (լուս. Սևակ Արևշատյանի)

Նկ. 23

Նկ. 24

Նկ. 25

Նկ. 26

Նկ. 23. Թեղենյաց վանքի Կաթողիկե եկեղեցու բեմառէջքի դրվագ, 11-րդ դ. առաջին կես
Նկ. 24. Փարպիի բարավորի վարդյակները
Նկ. 25. Ցախաց քարի 1041թ. խաչքարի դրվագ
Նկ. 26. Բյուզանդական պատվարի արխիտրավ, 9-12-րդ դդ.,
Իզմիրի թանգարան (ըստ՝ Niewöner 2021)

Նկ. 27

Նկ. 28



Նկ. 29

Նկ. 30

Նկ. 27. Բրդաձորի մեծ կոթողի դրվագ, 7-րդ դ., Վրաստանի ազգային թանգարան (լուս.՝ Պատրիկ Տոնապետյանի)
Նկ. 28. Շնողի քառանիստ կոթողի դրվագ, 7-րդ դ.
Նկ. 29. Աթոսի Իվիրոն վանքի Կաթողիկեի օմֆալոս, 1045-1056 (գծանկարը՝ Արմեն Ղազարյանի)
Նկ. 30. Պատվարի սալ, Գվելդեսի (Շիդա Քարթլի), 9-րդ դ. Վրաստանի ազգային թանգարան (ըստ Dadiani et al 2017)

Նկ. 31

Նկ. 32

Նկ. 33

Նկ. 34

Նկ. 31. Ս. Թարգմանչացի հարավային ճակատի պատուհանը
Նկ. 32. Ս. Թարգմանչացի արևելյան ճակատի պատուհանը
Նկ. 33. Անիի Աբուղարմրենց Ս. Գրիգոր եկեղեցու արևմտյան պատուհանը, 10-րդ դ. վերջ (լուս. Դիանա Գրիգորյանի)
Նկ. 34. Ս. Թարգմանչացի կողքի փոքր խաչքարը, 11-րդ դ.

Նկ. 35

Նկ. 36

Նկ. 37

Նկ. 35. Ս. Թարգմանչացի արևմտյան ճակատի լուսամուտի երեսակալը
Նկ. 36. Ս. Թարգմանչացի հյուսիսային ճակատի լուսամուտի երեսակալը
Նկ. 37. Ս. Թարգմանչացի արևելյան լուսամուտի երեսակալը

Նկ.38

Նկ.39

Նկ.38. Պարիսարի եկեղեցու հյուսիսային պատուհանի երեսակալը, 973թ., Տայք (լուս. Զավեն Սարգսյանի)
Նկ.39. Ս.Թարգմանչացի մեծ խաչքարի դրվագ

Նկ. 40

Նկ. 41

Նկ. 42

Նկ. 43

Նկ. 44

Նկ. 40. Ս. Թարգմանչացի տարածքի քանդակազարդ բեկոր
Նկ. 41. Փարպիի Ծիրանավոր եկեղեցու տարածքի բեկոր
Նկ. 42. Ս. Թարգմանչացի մեծ խաչքարի վերին գոտին
Նկ. 43. Փարպիի Ծիրանավոր եկեղեցու տարածքի քանդակազարդ բեկոր
Նկ. 44. Ս. Թարգմանչացի արևելյան ճակատի պատուհանի դրվագ

Աշոտ Մանուչարյան
պ.գ.թ.
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ,
ավագ գիտաշխատող, դոցենտ
ashot.manucharyan.1959@mail.ru

ՓԱՐՊԻՆ ԵՎ ՆՐԱ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախաբան

Արագածոտնի մարզի Փարպի գյուղը Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Այստեղ է ծնվել 5-րդ դ. պատմագիր Ղազար Փարպեցին: Արաբական տիրապետության շրջանում իր հաստատակամությամբ աչքի է ընկել Հայոց Մեծաց կաթողիկոս Հովսեփ Բ Փարպեցի Կտրիճը (795–806), որը մինչև վերջ դիմակայել է Հայ եկեղեցու ունեցվածքի նկատմամբ Հայաստանի արաբ ոստիկանի ոտնձգություններին[1]:

Թ. Թորամանյանը Փարպին անվանել է հնագիտական թանգարան: Գյուղում և շրջակայքում կան նախաքրիստոնեական ամենահին ժամանակներից մինչև 14–15-րդ դդ. քրիստոնեական շինությունների մնացորդներ, հետաքրքրական քարայրներ[2]:

Արձանագրությունները

Գյուղի չորս եկեղեցիներից և դրանց շրջակայքից մեր կողմից ընդօրինակվել է 43 արձանագրություն, որից հրատարակված է 9-ը, 6-ը՝ մեր կողմից («Էջմիածին», 2014, Գ, էջ 134–144):

Դրանցից հնագույնը Ծիրանավորի հարավային պատի բարավորի պռնկին մեծադիր բոլորաձև երկաթագրով հետևյալ արձանագրությունն է.

 Տ[ԷՅՐ ԱՆՆԱՍ ՎԱՆԱԿԱՆ[3]:

Թվագրվում է առնվազն 6-րդ դ.: Վաղ միջնադարում վանականը վանահայրն էր[4]: Պարտավի 768 թ. Բ. ժողովի Է. կանոնով սահմանվում էր վանքերի հիմնումը բնակավայրերում[5]:

Բագրատունյաց թագավորության շրջանում (874/85–1045), դատելով Ծի-

---

1 Օրմանեան 2001, 1066–1070:
2 Թորամանյան 1948, 226–227:
3 Մանուչարյան 2014, 134–144:
4 Մանուչարյան 2015, 123–134:
5 Կանոնագիրք հայոց 1973, էջ 8:

րանավորի մի շարք արձանագրություններից, Փարպին եղել է պետական կամ արքունապատկան գյուղ, որի խնդիրներով զբաղվել են թագավորներն իրենց գործակալների միջոցով: Մասնավորապես, Գագիկ Ա. Շահնշահ Բագրատունի թագավորի (990–1020 թթ.) հրամանով Մոշե գործակալը 1008 թ. վերացրել է կորեկից հարկվող տասանորդը, 50%-ով նվազեցրել բամբակի հարկը: Ըստ այդ արձանագրության՝ Փարպի գյուղից տարեկան ավելի քան 3 կգ բամբակ հարկվելու էր 2 խալից (վերջինս արաբական ծագմամբ անվանումն է տարողության չափի, որտեղ հավաքվել, պահվել է բամբակը: Ենթադրելի է, որ 1 խալը կշռել է ավելի քան 30 կգ)[6] (նկ.1):



Նույն ժամանակ Գագիկ թագավորի մեկ ուրիշ գործակալ՝ Վաչեն, ազատել է գյուղը գարու ու ցորենի տասանորդից[7]:

Մեկ այլ արձանագրության համաձայն՝ 50%-ով զեղչվել է նաև գինու բնահարկը: Եթե նախկինում գյուղը տարեկան վճարում էր 685, 5 լիտր գինի, ապա տալու էր դրա կեսը՝ շուրջ 343 լիտր, ընդ որում՝ նոր պտղից (բարից) պատրաստված: Այդ մասին իմանում ենք հետևյալ արձանագրությունից.



Յ⌈ԱՆՈՒՆ ԱՅ⌉ / ԱՅՍ ԻՄ ԳԻՐ Է /
…Ս, ՈՐ ԹՈՂԻ .Չ. (700) / ՋԳԻՆ[Ո]
ՅՍ ԿԱՊ⌈ՃԱՑ⌉ / ԲԱՐԷ ԵՐԿՈՒՍՈՒ
ՄԻՆ: Ո⌈Ր⌉ ՀԱԿԱՌԱԿ⌋ ԿԱ, ՆՋ/ՈՎ
Է ՀՈԳՈՎ: Մ/ԵՋ Ի Ն…[8]

Արձանագրությունը թերի է: Այն իրավական բնույթի է. կատարվել է գինու բնահարկի գանձման 50% զեղչ: Կապիճը եղել է չափածառայող աման, որը

6 Մանուչարյան 2014, 138:

7 Նույն տեղում, 140–141:

8 Գրչանկարը, որը 1980-ական թթ. կատարել է ճարտարապետ Աշոտ Մանասյանը, մեզ տրամադրել է հնագետ Արման Նալբանդյանը, որին հայտնում ենք մեր շնորհակալությունը:

մի գրիվի տասներորդ մասն էր[9]: Ըստ Ստ. Մալխասյանցի՝ գրիվի կշռորդը կազմել է 9 կգ 792 գրամ[10], հեղուկի դեպքում, պարզ է՝ 9,792 լիտր, որի 1/10 մասը լինում է 0,9792: Ստացվում է, որ նախկինում Փարպի գյուղից տարեկան գանձվել է 685,44 (700 × 0,9795) լիտր գինի, իսկ հիմա հարկվելու է կեսը՝ 342,72:

Այսպիսով, տեսնում ենք, որ Փարպի գյուղը միջնադարում զբաղվել է այգեգործությամբ, գինեգործությամբ, բամբակագործությամբ, հացահատիկային մշակաբույսերի արտադրությամբ:

Գագիկ Ա թագավորը 50%-ով նվազեցնում է նաև տեղական պաշտոնյաներից հարկվող տարեկան տուրքը՝ 200 դրամի փոխարեն դարձնելով 100 (1 դրամը կշռել է 2,97 գ մաքուր արծաթ)[11] (նկ. 2):



Ավելի վաղ, Աշոտ Ողորմած արքայի օրոք (953–977), վերացվել է Փարպիի լեռնաբաժը, այսինքն՝ անցահարկը[12] (նկ. 3):



Այն, որ Ծիրանավորը կոչվել Է Ս. Աստվածածին, փաստվում է գյուղի VII դ. Թարգմանչաց եկեղեցու մոտ 991 թ. հետևյալ արձանագրությամբ[13].



9 Ղազարեան 2000, 633:

10 Հայերէն բացատրական բառարան 1944, 477:

11 Մանուչարյան 2014, 139:

12 Նույն տեղում, էջ 139–140:

13 Մեր դաշտային օրագրից:

Այս վիմագիրը, անշուշտ, այստեղ է բերվել Ծիրանավորից: Ս. Մարիամ Աստվածածնի հետ կապված կան Սպիտակավոր, Կարմրավոր, Ծիրանավոր անուններով եկեղեցիներ: Սպիտակավորը խորհրդանշում է մաքրություն, անապատություն, Կարմրավորը՝ վասն մարդկության փրկության խաչի վրա հեղված Հիսուս Քրիստոսի արյունը, Ծիրանավորը՝ երկնային թագավորությունը: Կա տեսակետ, որ Ծիրանավոր կոչվող եկեղեցիները կառուցված են նախկին մեհյանների վրա: Այդ դեպքում պետք է ենթադրել, որ Փարպիի Ծիրանավորի տեղում եղել է Անահիտ դիցամոր մեհյանը:

Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ Ծիրանավորն օժտված է մարդկանց և կենդանիներին կատաղություն անբժշկելի հիվանդությունից բուժելու հատկությամբ[14]:

Գյուղի մյուս եկեղեցին՝ Ս. Գևորգը (ուղղանկյուն հատակագծով բազիլիկ շինություն), որը գտնվում է Ծիրանավորից ոչ հեռու, կիսավեր է: Նրա կառուցումը թվագրվում է 19 դ., չնայած կան պատերին ագուցված ավելի վաղ ժամանակների արձանագրություններ: Մասնավորապես, արևելյան պատին արտաքուստ, աջ պատուհանի վերին ձախ անկյունում ագուցված է 1167 թ. արձանագիր քար[15].

Նույն վայրում գլխիվայր ագուցված արձանագրության համաձայն՝ այն կառուցել են Գրիգորն ու իր եղբայրները, միաժամանակ պատարագ պատվիրելով իրենց հոր հիշատակի համար, հնարավոր է 13-րդ դ., սելջուկներից գյուղն ազատագրելուց հետո[16] (նկ. 4):



Իսկ Փարպին, ինչպես փաստում է Ծիրանավորի արևմտյան մուտքի վերևում փորագրված արձանագրությունը, Հայոց և Վրաց ամիրսպասալար Զաքարեն ազատագրել է 1191 թ.[17] (նկ. 5):

---

14 Օրբէլեան 1910, 301:
15 Մեր դաշտային օրագրից:
16 Մեր դաշտային օրագրից:
17 Մանուչարյան 2014, 135–137:



Գյուղի հարավարևելյան կողմում՝ ձորակի մեջ գտնվում է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին: Ուղղանկյուն հատակագծով կառուցված բազիլիկ այդ փոքր եկեղեցին Թ. Թորամանյանը թվագրում է 5-րդ դ.: Այս եկեղեցուն ևս վերագրվել է շան կծածից բուժելու հատկություն[18]:

Ս. Թարգմանչաց և Ս. Գրիգոր եկեղեցիները վերանորոգել է ծագումով փարպեցի գործարար Բաբկեն Առաքելյանը 2005–2008 թթ.:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արևմտյան դռան բարավորին և աջ կողքը փորագրված է Աղբուղա Զաքարյանի (ծոռն էր Զաքար է ամիրսպասալարի) 1304 թ. արձանագրությունը, ըստ որի՝ նա ապահարկել է Փարպի գյուղն այգիներից հարկվող տասանորդից: Փաստորեն, Աղբուղան կրկնել է սելջուկյան տիրապետությամբ խախտված ապահարկությունը:



ՅԱՆ/ՈՒՆ ՀԱՒՐ ԱՄԵՆԱԿԱԼԻ, / ԿԱՄԱՒ ՈՐԴՈ ՄԻԱԾՆԻ ԵՒ
ՄԻՋՆՈՐԴՈՒԹԼԵԱՄԲ $\overline{\text{ՍԲ}}$ ՀՈԳԻՈՅՆ ԵՄ՝ ԱՂԲ
ՈՒՂՂԱ, ՈՐԴԻ ԻՒ/ԱՆԷԻ, ՈՐԴՈ ՄԵԾԻ ՇԱՀԱՆՇԱՀԻ, ԵՄ՝ ԱՂԲՈ/
ՒՂԱ, ԹՈՂԻ ԶՓԱՐՊՈ ԱՅԳԵԼԱՅՑ ՇԱՐԻԱՏՆ ԵՒ ԱՐԱՐԻ /
⌈Յ⌉ԻՇԱՏԱԿ ԱԶԳԷ ՅԱԶԳ: ԱՐԴ, ՄԻ ՈՔ Ի ՄԵՐՈՑ / ԿԱՄ ՅԱԻ
⌈ՏԱՐԱՑ ԽԱՓԱՆ⌉ԵԼ ԿԱՄԻ ⌈ԵՒ⌉ / ՈՐ ԽԱՓԱՆԷ, ⌈Յ⌉ԺԸ (318)
ՀԱԼՅՐԱՊԵՏԱՑ / ՆԶՈՎԱԾ ԼԷ⌋ ԵՒ ՅԱՄԷՆ ԱԶԳԷ / ՆԱԼԱԹ, ՉԾԳ
(1304) ԹՎԻՍ:

Ծանոթ. Ե. Տեր-Մինասյանը չի վերծանել 6-րդ տողում հիշատակվող ՇԱՐԻԱՏՆ բառը[19], մինչդեռ Մխ. Տեր-Մկրտչյանն ավելի վաղ ճիշտ է կարդացել[20]:

Արձանագրությունն իրավական բնույթի է. տեղական ավատատեր Աղբուղա Զա-

18 Սիմոնյան, Երանոսյան, 1978, 34:

19 Տեր-Մինասյան 1961, 55:

20 Տէր-Մկրտչեան վրդ. Մ. 1903, 30:

քարյանը վերացրել է Փարպիի այգիներից հարկվող շարիատը՝ տասանորդը:

Վերջին տողի ՆԱԼԱԹ-ն արաբերեն لعنة (լանաթ) բառի տարադարձություն է, որը նշանակում է «անեծք», «նզովք»[21]:

Աղբուղա Ջաքարյանը (1260–1326), ըստ վիմագրական վկայությունների, իշխում էր Թալինից, Դաշտադեմից մինչև Աշտարակ, Փարպի:

Ուշ միջնադարից Փարպիի իշխանավորների մասին պատկերացում կազմում ենք մասնավորապես Ս. Գրիգոր եկեղեցուց արևմուտք՝ գերեզմանատանը կանգնեցված հայտնի խաչքարագործ Բաղիի խաչքարի արձանագրությունից (16-րդ դ. 90-ական թվականներ), որտեղ հիշատակվում են տիկին Չինարը և նրա ամուսին Էմին բեկը[22] (նկ. 6):



Բեկը թուրքերի մոտ բարձր աստիճանավորի, ազնվականի տիտղոս է[23]: Ըստ էության՝ Էմինը Փարպիի տերն է, իշխանավորը: Բացի Էմին բեկից և Չինար տիկնոջից, նույն գերեզմանատան 16–17-րդ դդ. արձանագրություններում հիշատակվում են նաև Ամիր բեկ, Նուր բեկ, Նվարդ խանում անունները[24]:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակի արևմտյան հատվածում պահպանվում է Մաստարայից, Աշտարակից, Մուղնիից և այլ բնակավայրերի կոթողներից հայտնի խաչքարագործ վարպետ Հայրապետի (16-րդ դ. վերջին քառորդ) գեղաքանդակ խաչքարը՝ Տէր Բարսեղի բարեխոսության համար[25] (նկ. 7, 8):



Փարպիի բոլոր արձանագրություններն ընդգրկված են «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի Արագածոտնի մարզի պրակում:

---

21 Баранов 1977, 723:

22 Մեր դաշտային օրագրից:

23 Հայերէն բացատրական բառարան 1944, 367:

24 Մեր դաշտային օրագրից:

25 Մեր դաշտային օրագրից:

Ашот Манучарян
к. и. н.
Институт археологии и этнографии НАН РА, старший научный сотрудник, доцент
ashot.manucharyan.1959@mail.ru

ПАРПИ И ЕГО НАДПИСИ

Парпи – одно из старейших сел Армении. Здесь родились историограф V в. Газар Парпеци и Армянский католикос Овсеп II Парпеци (795–806).

Заслуженный исследователь армянской архитектуры Т. Тораманян называл Парпи музеем под открытым небом.

Из четырех церквей села (Циранавор Св. Богородица, Св. Геворг, Св. Переводчики, Св. Григор Просветитель) и их окрестностей мы скопировали 43 надписи, 9 из которых опубликованы, 6 нами. Они являются важными первоисточниками не только для изучения истории села, но и средневековой Армении. Самая ранняя из этих надписей датируется VI веком. Особый интерес представляют надписи периода царства Багратуни (874/85–1045). Из них выясняется, что Парпи в тот период был королевской или государственной деревней, проблемами которой занимались короли лично или через своих агентов. В частности, царь Гагик I Багратуни (990–1020) отменил десятину на пшеницу, ячмень и просо, а также снизил на 50% налог на хлопок и вино. Оказывается, что раньше село давало государству 6 кг хлопка и около 685,5 литров вина в год, теперь оно должно давать половину из них. Ранее, во времена правления царя Ашота Милостивого (953–977), плата за проезд через село Парпи была отменена.

После 1060–1070-х годов в Парпи, как и во всей Армении, правили сельджуки. По данным 1191 года надписи церкви Циранавор, село Парпи освободил амирспасалар Армении и Грузии Закаре Закарян (1187–1211/2). Его правнук князь Агбуга в 1304 году отменил десятину с садов деревни Парпи.

Судя по надписям исторического кладбища Парпи, XVI–XVII вв. селом управляли Нур бек, Амир бек, Нвард ханум.

Известные мастера Айрапет (70-е годы XVI века) и Баги (90-е годы XVI века) изготовили хачкары на историческом кладбище села Парпи.

Ashot Manucharyan
PhD,
Institute of Archaeology and Ethnography of the NAS RA,
Senior Researcher, Associate Professor
ashot.manucharyan.1959@mail.ru

PARPI AND HIS INSCRIPTIONS

Parpi is one of the oldest villages in Armenia. The historiographer of the 5th century was born here Ghazar Parpetsi and Armenian Catholicos Hovsep II Parpetsi (795–806).

A grateful researcher on the study of Armenian architecture, T. Toramanyan, called Parpi an open museum under the sky. From the four churches of the village

(Tsiranavor St. Theotokos, St. Gevorg, St. Translators, St. Gregory the Illuminator) and their surroundings, we copied 43 inscriptions, 9 of which were published, 6 by us. They are important primary sources not only for studying the history of the village, but also of medieval Armenia. The earliest of these inscriptions dates from the 6th century. Of particular interest are the inscriptions from the period of the Bagratuni kingdom (874/85–1045). From them it turns out that Parpi at that time was a royal or state village, the problems of which were dealt with by the kings personally or through their agents. In particular, King Gagik I Bagratuni (990–1020) abolished the tithe on wheat, barley and millet, and also reduced the tax on cotton and wine by 50%. It turns out that previously the village gave the state 6 kg of cotton and about 685.5 liters of wine per year, now it must provide half of them. Earlier, during the reign of King Ashot the Gracious (953–977), tolls for travel through the village of Parpi were abolished.

After the 1060–1070s, the Seljuks ruled in Parpi, as in all of Armenia. According to the 1191 inscription of the Tsiranavor church, the village of Parpi was liberated by the amirspasalar of Armenia and Georgia Zakare Zakaryan (1187–1211/2). His great-grandson Prince Aghbuga abolished the tithe from the gardens of the village of Parpi in 1304.

Judging by the inscriptions of the historical cemetery Parpi, 16–17 th centuries the village was ruled by Nur bek, Amir bek, Nvard khanum.

Famous masters Airapet (70s of the 16th century) and Baghi (90s of the 16th century) made sculptural khachkars in the historical cemetery of the village of Parpi.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԹՈՐԱՄԱՆՅԱՆ 1948
Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, ժող. 2-րդ, Երևան, 1948, էջ 226–227:

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ 1973
Կանոնագիրք հայոց, աշխ.՝ Վ. Հակոբյանի, Երևան, 1973, էջ 8:

ՀԱՅԵՐԷՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ 1944
Հայերէն բացատրական բառարան, կազմեց Ստ. Մալխասեանց, հ. I, Երևան, 1944, էջ 477:

ՂԱՋԱՐԵԱՆ 2000
Ղազարեան Ռ., Գրաբարի բառարան, հ. Ա., Երևան, 2000, էջ 633:

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ 2014
Ա. Մանուչարյան, Փարպիի Ծիրանավորի արձանագրությունները, «Էջմիածին», 2014, Գ, էջ 134–144:

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ 2015
Մանուչարյան Ա., Վանահայր հոգևոր պաշտոնի վաղմիջնադարյան անվանումները, Տարեգիրք, Ժ, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, Երևան, 2015, էջ 123–134:

ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՐԱՆՈՍՅԱՆ 1978
Սիմոնյան Հ., Երանոսյան Հ., Շաղվերտի ավազանի պատմական հուշարձանները, «Երևանի համալսարան», 1978, № 3, էջ 34:

ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ 1961
Տեր-Մինասյան Ե., Ամբերդաձորի հնությունները և արձանագրությունները, «Էջմիածին», 1961, Ե, էջ 55:

ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆ 1903
Տէր-Մկրտչեան վրդ. Մ., Իմ գործակալութեան ժամանակ հաւաքած մի քանի արձանագրութիւններ, «Բանասէր», Պարիս, 1903, էջ 30:

ՕՐԲԷԼԵԱՆ 1910
Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 301:

ՕՐՄԱՆԵԱՆ 2001
Օրմանեան արքեպս. Մ., Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, սյուն 1066–1070:

БАРАНОВ
Баранов Х., Арабско-русский словарь, М., 1977, էջ 723:

Նկ. 1

Նկ. 2

Նկ. 3

Նկ. 4

Նկ.5

Նկ.6

Նկ.7

Նկ.8

Կարեն Հովհաննիսյան
պ.գ.թ.
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, գիտաշխատող
Երևանի պետական համալսարանի հումանիտար հետազոտությունների ինստիտուտ, գիտաշխատող
karenhovhannisyan@ysu.am

ՓԱՐՊԻԻ ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԸ

Նախաբան

ՀՀ տարածքում առկա են 200-ից ավելի Թուխ Մանուկ սրբավայրեր, իսկ պատմական Հայաստանից հայտնի մյուս նույնանուն սրբավայրերի հետ դրանց թիվը անցնում է 300-ը, սակայն այս սրբավայրերի մասին ուսումնասիրությունները սակավ են: Թուխ Մանուկ սրբավայրերի մասին հայտնի են շուրջ տասնյակ հոդվածներ, որոնք ամփոփված են Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակած «Թուխ Մանուկ. նստաշրջանի նյութեր»[1] ժողովածուում: Բացի այս ժողովածուն, մի քանի գրքերում և հոդվածներում ևս հպանցիկ անդրադարձ է արվել Թուխ Մանուկներին, սակայն դրանք այլ խնդիրներ են լուծում: Առանձին տեղ է գրավում Հ. Մարությանի հոդվածը, որտեղ հեղինակը Թուխ Մանուկ սրբավայրերը դիտարկում է որպես «Տան սուրբ»[2]:

Սույն հոդվածի հեղինակը ևս հրատարակել է Թուխ Մանուկներին նվիրված շուրջ տասնյակ հոդվածներ, ինչպես նաև 2020 թ. այս թեմայով ատենախոսություն է պաշտպանել (հոդվածը չծանրաբեռնելու համար հեղինակի հոդվածները չեն նշվում): Տվյալ հոդվածի համար նյութ է ծառայել 2013 թ. հեղինակի և Լիլիթ Սիմոնյանի համատեղ գիտարշավը Փարպի: Այդ գիտարշավի ժամանակ հավաքած նյութը հատուկ չի հղվելու: Թուխ Մանուկ սրբավայրերի մասին ընդհանուր դիտողությունները տրվում են հեղինակի կողմից շուրջ 15 տարի կատարվող ուսումնասիրությունների և պաշտպանած ատենախոսության հիման վրա:

Ընդհանուր դրույթներ

Թուխ Մանուկ սրբավայրերը տարածված են Արագածոտնի, Գեղարքունիքի, Շիրակի, Կոտայքի, Վայոց ձորի, Արարատի, Արմավիրի, Լոռու մարզերում և Երևան քաղաքում: Վերջերս այդ սրբավայրից հայտնաբերեցինք, ի զարմանս մեզ, նաև Սյունիքի մարզում՝ Վերիշեն գյուղում[3]:

---

1 Թուխ Մանուկ 2001:
2 Մարության 2001, 337–346:
3 Սիմոնյան, Հայրիյան 2022:

Մենք Թուխ Մանուկ ենք անվանում այն սրբավայրերը, որոնց այդ անվանումն է տալիս ժողովուրդը: Քանի որ չկա որևէ ժողովրդական սրբավայր, որի արտաքին և ներքին տեսքից կարելի է իմանալ դրա անունը (նույնն էլ եկեղեցիների դեպքում է), ապա անվան միակ աղբյուրը մնում է ժողովուրդը:

Թուխ մանուկների դեպքում ամենաբարդ հարցերից մեկն է՝ ո՞վ է այդ Թուխ Մանուկը, ում անունով կոչվում է սրբավայրը: Այս հարցը չունի միանշանակ պատասխան, քանի որ այդ սուրբը միայն ժողովրդական է, ուստի միակ աղբյուրը ժողովուրդն է: Ըստ ժողովրդական մեկնաբանությունների՝ Թուխ Մանուկը կարող է լինել հանուն հավատի և հայրենիքի նահատակված պատանի կամ երիտասարդ (նահատակ) և զինվոր, անմահ ծերունի սուրբ, նույնիսկ կարող է լինել իգական սեռի: Բայց առավել շատ Թուխ Մանուկը կապվում է Քրիստոսի հետ:

Թուխ Մանուկ սրբավայրերը անպայման չէ, որ լինեն ժողովրդի կողմից կառուցված որևէ շինություններ: Դրանք կարող են լինել ժայռեր և ժայռաբեկորներ, խաչքարեր, մենհիրներ, քարակույտեր, ավետարաններ, եկեղեցու հիմքեր, պատի խորշեր, նույնիսկ վանքեր և այլն:

Կան գյուղեր, որոնք ունեն մի քանի Թուխ Մանուկ սրբավայրեր: Ամենաշատ թվով՝ 12 այդպիսի սրբավայր մեկ գյուղում հանդիպել ենք Գեղարքունիքի Ակունք գյուղում: Այստեղ, ինչպես նաև Արագածոտնի Սուսեր գյուղում, Թուխ Մանուկ ասում են առհասարակ իրենց գյուղի սրբավայրերին:

Փարպիում կա երեք Թուխ Մանուկ սրբավայր: Դրանցից երկուսը տան սրբեր են՝ մեկը քարաշեն մատուռ է մասնավոր տան բակում, մյուսը՝ փոքր խորշ է մասնավոր տան պատի մեջ: Երրորդ Թուխ Մանուկը համայնքային է, այսինքն այն տնօրինում և խնամում են բոլոր գյուղացիները:

Փարպիի Դարբազյանների Թուխ Մանուկ սրբավայրը

Այս սրբավայրը այնքան էլ հին չէ, հայտնի է անցած դարի կեսերից: Տոհմի մեծերը ժամանակին տեսել են այգում քայլող պատանու (ըստ բանասացի՝ 13–14 տ.), որը ոչ ոքի հետ չի խոսել: Նրա ցույց տված տեղում, որը պատի մեջ բացված փոքր խորշ է, սկսել են երբեմն մոմ վառել:

Այս սուրբը հիմնականում բուժում է մանկական հիվանդություններ: Առհասարակ, Թուխ Մանուկ սրբավայրեր հաճախ են դիմում հիվանդություններ, հատկապես երեխաների, բժշկելու փափագով: Կարող ենք ասել, որ գրեթե բոլոր Թուխ Մանուկներն ունեն նման գործառույթ:

Տան անդամները և հազվադեպ ուխտավորները աքաղաղ կարող են մատաղ անել սրբավայրում: Մատաղը նույնպես շատ տարածված երևույթ է, հատկապես երբ փափագն իրականանում է:

Տանտիկնոջ պատմելով, երբ օտարներից մեկը, որպես նվիրատվություն, գիպսե խաչքար, փայտե խաչ և Քրիստոսի գունավոր պատկեր է բերում-դնում, տան աղջիկ երեխային երազ է գալիս, թե Սուրբը խռովել է և այլևս չի պահպանելու իրենց: Ստիպված հանում են այդ իրերը, խորշը քահանան օրհնում է, որից հետո ամեն ինչ կրկին բնականոն հունով է ընթանում:

Մյուս անգամ նույն աղջիկ երեխան է լսել Սրբի ձայնը, որ պահանջել է. «Լուսավորեք ինձ»: Այդ օրվանից ամեն շաբաթ օր մոմ են վառում սրբավայրում (առհասարակ, ժողովրդական սրբավայրերում շատ ընդունված է շաբաթ օրերին՝ կիրակնամուտին մոմ վառելը):

Մենք մեր դաշտային աշխատանքների ժամանակ հաճախ ենք հանդիպում նման պատմությունների, երբ Սուրբը հայտնվում է երազում և պահանջներ ներկայացնում. «Միսում եմ» կամ «Տեղս թաց է» (պետք է տանիքը ծածկել), «Լուսավորեք ինձ» (մոմ վառեք, այսինքն՝ պաշտեք կամ ինչ-որ մասունքներ ծածկված են հողով, պետք է դրանք ազատել) և այլն:

Իրենք՝ տան անդամները, միշտ էլ տեսնում են սրբին, որը պատանու տեսք ունի, նա երբեմն մեկ-երկու խոսք կարող է ասել աղջկան կամ տղային, բայց մեծ մասամբ լուռ պտտվում է այգով ու բակով և անհետանում:

Պատանու տեսքով Թուխ Մանուկի հայտնվելը բավականին տարածված է, օրինակ՝ Բասենի[4], Լուսագյուղի, Մաստարայի, Ագարակի (Արագածոտնի մարզ), Կարմիրգյուղի, Վարդենիկի, Գեղհովիտի (ձիավոր) (Գեղարքունիքի մարզ), Տուֆաշենի (կարմիր զգեստներով), Ջրառատ-Խանվալիի (Շիրակի մարզ) Թուխ Մանուկներում և այլն (նկ.1):

Փարպիի Բաբոյենց Թուխ Մանուկ սրբավայրը

Այս սրբավայրի մասին տան անդամները ոչինչ չպատմեցին: Միայն ասացին, որ Թուխ Մանուկ է, ինչ-որ հոգևորականներ էլ եկել են ու հաստատել: Քանի որ սա ընտանեկան սրբավայր է՝ տան սուրբ, ապա ուրիշներից տեղեկություն չկարողացանք գրանցել: Կարելի է ենթադրել, որ այս սրբավայրը մնացել էր նեղ ընտանեկան, և, ի տարբերություն այլ տան սրբերի, օտարներն այնտեղ չեն այցելում:

Տան բակում կառուցված է մի մատուռ, դատելով տեսքից՝ ոչ այնքան վաղուց, որի մեջ ամփոփված են խաչքարերի և այլ ձևավոր քարերի բեկորներ, պատի մի անկյունում, մուտքի մոտ, ագուցված է տապանաքար և մի քանի շուշպաներ կան:

Տիրոջ ասելով, այս հնությունների մի մասը կազմել է նախնական սրբավայրը, իսկ մյուսները հայտնաբերվել են նույն վայրում՝ մատուռը կառուցելիս: Հաշվի առնելով, որ սրբի տունը գտնվում է Ծիրանավոր եկեղեցուն մոտ, ուղիղ գծով մոտ 100 մ, ապա հնարավոր է, որ հնությունների բեկորները կապ ունենան նրա հետ (նկ.2):

Փարպիի դաշտի Թուխ Մանուկ սրբավայրը

Ի տարբերություն վերը նշված Փարպիի մյուս երկու Թուխ Մանուկ սրբավայրերի, որոնք տան սրբեր են, այս երրորդը հանրային սուրբ է: Այն գտնվում է Փարպիի Ս.Դավիթ մատուռից ոչ հեռու, դաշտի մեջ: Մեծ քարերով շրջան է կառուցված, որի մեջ կանգնեցված են երկու խաչքար, որոնց պատվանդանները

[4] Մխիթարեանց 1901, 164:

կարծես թե տապանաքարեր են, որոնց մեջ խաչքարեր կանգնեցնելու համար հետագայում փոսեր են արվել: Երկու խաչքարերի մյուս երեսներին կան հետաքրքիր պատկերներ՝ մեկի վրա արև, մյուսին՝ սկավառակը բռնած թռչուն՝ կանգնած, հավանաբար, նույնպես արևի վրա: Խաչքարերի առկայությունը ոչինչ չի ասում սրբավայրի ստեղծման ժամանակի մասին, քանի որ ինչպես սրբավայրը կարող էր ձևավորվել խաչքարերի շուրջը, այնպես էլ խաչքարերը կարող էին բերվել այլ վայրերից:

Գյուղի ծերերը վստահ են, որ Թուխ Մանուկի տակ, հողի մեջ մեծ եկեղեցի կա, որը քանդել են արաբները: Եթե դա իրոք այդպես է (հնագիտական որևէ ուսումնասիրություն այս վայրում չի կատարվել), ապա, հնարավոր է, որ սրբավայրի խաչքարերն այստեղից են հայտնաբերվել:

Այս Թուխ Մանուկը կակազող երեխաներ է բուժում: Երեխայի շապիկը պետք է տանել սրբավայր, մոմ վառել, խունկ ծխել, աղոթել, հետո շապիկը կապել սրբազան թփին:

Բանասացներից մեկի պատմելով, իր թոռը, որ ապրում է Ռուսաստանում, լավ չէր խոսում: Երբ թոռը եկել է գյուղ, տատի երազին կարճահասակ, կիսախուզած մորուքով տարեց տղամարդ (60–70 տ.) է գալիս և հայտնում, որ եկել է անձամբ նրա մոտ: Կինը վախեցած հարցրել է, թե նա ո՞վ է և իր ո՞ր մեղքի համար է եկել: Տղամարդը պատասխանել է, որ ինքը Թուխ Մանուկն է: Կինը առաջարկել է հյուրասիրվել, Թուխ Մանուկը մերժել է. «Դու որ խոսեցիր, ես կշտացա»: Հետո կարգադրել է, որ երեխայի կապույտ շորը թփից կախի և հեռացել է: Կինը իսկույն հասկացել է Թուխ Մանուկի ակնարկը, որ սուրբը թոռան լեզուն «կբացի»: Ինքը, հարսը և երեխան ոտքով գնում են սրբավայր, մոմ են վառում, խունկ ծխում և երեխայի շորը թողնում այնտեղ: Որոշ ժամանակ անց երեխան սկսում է նորմալ խոսել:

Առհասարակ, հիվանդների շորերն ընդունված է թողնել սրբավայրում: Մյուս բանասացի պատմելով, երբեմն սրբավայրի տարածքում պարկերով երեխայի հագուստ են գտել, ինչը վկայում է, որ այս Թուխ Մանուկ հաճախ են այցելում երեխաներին բժշկելու նպատակով (նկ. 3):

Ամփոփում

Այսպիսով, Փարպիի Թուխ Մանուկ սրբավայրերից երկուսի դեպքում կարող ենք փաստել, որ դրանք բուժող (հատկապես երեխաներին) սրբեր են: Այս գործառույթը բնորոշ է բավական թվով Թուխ Մանուկներին:

Ինչպես և մյուս Թուխ Մանուկների դեպքում, սրբի արտաքին տեսքի մասին կարելի է դատել միայն երազներից և տեսիլքներից: Փարպիի Թուխ Մանուկներից մեկը հայտնվում է պատանու տեսքով, մյուսը՝ ծերունու:

Թեև մեր այցելությունների ժամանակ չենք հանդիպել ուխտավորների, այդուհանդերձ ակնհայտ է, որ դաշտի Թուխ Մանուկ սրբավայր այցելում են և խնամում:

Տան սրբերի դեպքում դրությունն այլ է, դրանք միշտ խնամված են, քանի որ գտնվում են տան տարածքում:

Մենք հաճախ ենք հանդիպել, որ երազի, տեսիլքի միջոցով հայտնաբերված սրբավայրերի տեղում հին եկեղեցիների հիմքեր, խաչքարեր, այլ հնություններ են գտնվել: Այնպես որ, հնարավոր է, դաշտում գտնվող Թուխ Մանուկի «տակ» իրոք եկեղեցի լինի:

Карен Оганнисян
к. и. н.
Институт археологии и этнографии НАН РА, научный сотрудник
Институт гуманитарных исследований ЕГУ, научный сотрудник
karenhovhannisyan@ysu.am

СВЯТИЛИЩА ТУХ МАНУК СЕЛА ПАРПИ

В селе Парпи существует три святилища Тух Манук. Относительно двух из них мы можем зафиксировать, что они являются исцеляющими (в особенности касается детей) святыми. Данная функция присуща достаточному количеству святилищ Тух Манук.

Как и в случае других Тух Мануков, о внешнем облике святого можно судить только по снам и видениям. Один из святых Тух Мануков села Парпи является в образе юноши, а другой – старика.

Хотя во время наших посещений мы не встречали паломников, тем не менее очевидно, что люди посещают и заботятся о святилище Тух Манук, который находится в поле (один из трех Тух Мануков села Парпи).

В случае домашних святых дело обстоит несколько иначе – они всегда ухожены, поскольку находятся в черте дома.

Часто на месте или территории святилищ, которые были обнаружены благодаря снам и видениям, находили основания древних церквей, хачкары, другие древности. Поэтому, возможно, под святилищем Тух Манук, который находится в поле, действительно есть церковь.

Karen Hovhannisyan
PhD
Institute of Archaeology and Ethnography of the NAS RA, Researcher,
Institute of Humanities Research, YSU, Researcher
karenhovhannisyan@ysu.am

SHRINES OF TUKH MANUK OF PARPI VILLAGE

There are three Tukh Manuk sanctuaries in the village of Parpi. We can state that two of them are healing (especially for children) saints. This function is inherent in a sufficient number of Tukh Manuk sanctuaries.

As with other Tukh Manuks, the saint's appearance can only be judged by dreams and visions. One of the saints of the Tukh Manuk of Parpi village appears as a young man, and another as an old man.

Although we did not encounter any pilgrims during our visits, it is clear that people visit and care for the Tukh Manuk shrine in the field (one of three Tukh Manuks in Parpi village).

In the case of household saints, the situation is somewhat different – they are always well-groomed, since they are located within the boundaries of the house.

Often, on the site or territory of sanctuaries that were discovered thanks to dreams and visions, the foundations of ancient churches, khachkars, and other antiquities were found. Therefore, perhaps, under the Tukh Manuk sanctuary, which is located in a filed, there really is a church.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ 2001
Թուխ Մանուկ, Նստաշրջանի նյութեր, խմբ. Ս. Հարությունյան, Երևան, «Հայաստան», 2001, 132 էջ:

ՄԱՐՈՒԹՅԱՆ 2001
Մարության Հ., «Տան սուրբ» երևույթը, ակունքների հարցը և մերօրյա դրսևորումները // Հայոց սրբերը և սրբավայրերը, Երևան, «Հայաստան», 2001, էջ 337–346:

ՄԽԻԹԱՐԵՄՆՑ 1901
Մխիթարեանց Աղ., Փշրանքներ Շիրակի ամբարներից, Էմինեան ազգագրական ժողովածու, գ. Ա., Մոսկուա-Ալեքսանդրապօլ, 1901, 302 էջ:

ՍԻՄՈՆՅԱՆ, ՀԱՅՐԻՅԱՆ 2022
Սիմոնյան Լ., Հայրիյան Լ., (Դաշտային ազգագրական նյութեր), ՀՀ Սյունիքի մարզ, Գորիս-Վերիշեն, 2022:

Նկ.1. Դարբազյանների Թուխ Մանուկը

Նկ. 2. Բաբոյենց Թռխ Մանուկը (հարված ներսից)

Նկ. 3. Դաշտի Թռխ Մանուկը

Տիգրան Միքայելյան
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ,
աղբյուրագիտության և պատմագրության բաժին, գիտաշխատող
mtigran2002@yahoo.com

ԲԱԶՄԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԻ ԹԱՔԻԱՆ

Արագածոտնի մարզի Բազմաղբյուր գյուղի դպրոցի մոտակայքում է գտնվում մուսուլմանական մի կառույց՝ թաքիա (նկ. 1)։ Մենք այս շինությունը համարում ենք թաքիա, այլ ոչ թե այլ նշանակության կառույց, հիմնվելով գյուղի հին անվան վրա, որը եղել է Թաքիա կամ Թեքքե։ Իսլամում, այդ թվում և շիա իսլամում, թաքիան մի շինություն է, որը կապված է սուֆիների (իսլամում միջնադարում և ուշ միջնադարում գործող միստիկական, կրոնական ժուժկալության, հոգևոր արժեքներին հետևող ուղղությունների ներկայացուցիչներ) գործունեության հետ[1]։

Թաքիաներ կան մուսուլմանական շատ երկրներում, դրանք առավելապես եղել են սուֆիների հավաքատեղիներ և ունեցել են տարբեր անվանումներ՝ կախված ժամանակաշրջանի և հատկապես տարածաշրջանի առանձնահատկություններից և տեղացի մուսուլման բնակչության լեզվից։ Այս տիպի կառույցները իրանական մշակույթի ազդեցության երկրներում կոչվել են *խանակա* (khānaqāh), *դարգահ* (dargāh) և կամ *թաքիա* (takya կամ takiya)։ Արաբական միջավայրում մոտավորապես նույն նշանակության կառույցները հաճախ անվանվել են *զավիա* (zāwiya արաբ. زَاوِيَة; հոգնակի՝ زَوَايَا, zawāyā), *ռիբաւո* ribāṭ (արաբ. رِبَاط; հոգնակի՝ بُطُ, rubuṭ)[2]։ Ռիբատ անվանումը հատկապես օգտագործվել է Մաղրիբում՝ արաբական Աֆրիկայում[3]։

արաբերեն	պարսկերեն	օսմաներեն	ժամանակակից թուրքերեն	ադրբեջաներեն	վրացերեն	ուզբեկերեն	արաբաներեն	բոսնիերեն
زَاوِيَة *zawiya* «անկյուն» رِبَاط ribāṭ «հենակետ»	تکیه *takya* «աջակցություն», «բարձ»	tekye تکیه tekke	tekke	təkyə	ტეკია takya	takya	teqeja	tekija

1 Clayer 2000, 414–416.
2 Clayer 2000, 415.
3 Böwering et al. 2010, https://www.iranicaonline.org/articles/kanaqah

Բազմաղբյուր գյուղի հին անունը հուշում է այն մասին, որ դիտարկվող շինությունը «թաքիա» է, քանի որ գյուղի հին անվանումը Թաքիա է եղել: Սակայն մուսուլմանական աշխարհում տարածված են եղել ավելի մեծ չափի թաքիաներ (նկ. 2, 3): Թաքիան, ինչպես նշվեց, կապված է սուֆիների գործունեության հետ. այն սուֆիների հավաքատեղի էր, որտեղ մեծի՝ շեյխի գլխավորությամբ նրանք ծեսեր էին կատարում: Թաքիան ավանդաբար կառուցվում էր սուֆի շեյխի կամ սրբի գերեզմանի վրա[4]: Այն նաև կարող էր կացարան հանդիսանալ ճանապարհորդող սուֆիների, և, ընդհանուր առմամբ, ուխտավորների համար: Օրինակ, Օսմանյան կայսրությունում մի խումբ թաքիաներ կոչվում էին «ուզբեկների» թաքիա, քանի որ այնտեղ ապաստանում էին միջինասիացի ուխտավորները[5] (նկ. 4):

Շիա իսլամում թաքիաներում կարող էր նշվել աշուրան[6], որը սգո միջոցառում է ի հիշատակ Արաբական խալիֆայության չորրորդ բարեպաշտ խալիֆա և առաջին շիա իմամ (գերագույն առաջնորդ) Ալի իբն Աբի Թալիբի և նրա որդու՝ 3-րդ շիա իմամ Հուսայն իբն Ալի իբն Աբի Թալիբի և միաժամանակ Մուհամմադ մարգարեի թոռան և նրա հետևորդների նահատակության մուսուլմանական տոմարի (հիջրայի) տասներորդ մուհառռամ ամսի 61թ. կամ 680թ. հոկտեմբերի 10-ին կայացած Քերբելայի ճակատամարտում: Աշուրան որպես սգո միջոցառում նշվում է շիա մուսուլմանների կողմից յուրաքանչյուր տարի:

Պետք է նշել նաև, որ նախկինում մուսուլմանական աշխարհի մաս կազմող և այժմ իսլամի կրոնական գերիշխանության ներքո չգտնվող երկրներում, օրինակ, Հունաստանում, «թաքիա» անվանումը կարող է ուղղակի նշանակել սրբի գերեզմանատեղի[7]:

Բազմաղբյուր գյուղի կառույցը ուղղանկյուն, մոտ 5×5 մ չափեր ունեցող շինություն է: Այն գտնվում է թեք տեղանքում, այգիների մեջ: Այցելուի համար այդ կառույցը առանց տեղացիների օգնության դժվար է գտնել:

Արտաքին պատերը շարված են վարդագույն, շագանակագույն կամ մուգ գորշ գույնի տուֆից, ընդ որում, շարվածքի մեջ կան տարբեր չափսեր ունեցող քարեր՝ փոքրից մինչև մեծ: Ներսից շինության պատերը շարված են անմշակ, տձև բազալտե քարերից, որոնք անհավասար կերպով սվաղած են կրաշաղախով (նկ. 5): Վերին հատվածը զուրկ է տանիքից, այն փաստորեն դարձել է հողածածկ: Շինության արևելյան մասում առկա է ուղղանկյունաձև մուտք: Քանի որ մուտքի առջևի աստիճանները չկան, շենք մուտք գործելու համար այցելուն պետք է ոտքը դնի ստորին մասից դուրս ընկած քարի վրա:

Մուտքից վերև տեղադրված է արաբատառ արձանագրությամբ «բարավորը» (նկ. 6)[8]: Այն մոտ 20–30 սմ հաստություն և 80×40 սմ երկարություն ունեցող

4 Böwering et al. 2010; Clayer 2000, 415.

5 Bebitov 2022, 116.

6 Mu'jam 2019, 236.

7 Clayer 2000, 417.

8 Արձանագրության՝ 1980-ական թվականների լուսանկարի տրամադրման համար շնորհակալություն ենք հայտնում Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնին:

վարդագույն տուֆե սալիկ է, որի վրա խոշոր տառերով քանդակված է հետևյալ արձանագրությունը՝

بسم الله الرحمن الرحيم

لا إله إلا الله

محمد رسول الله علي ولي الله كاتب علي بنا

Թարգմանությունը.
Հանուն գթած ողորմած Աստծոյ
Չկա աստված բացի Ալլահից
Մուհամմադը մարգարեն է Ալլահի և Ալին նրա սուրբը գրող Ալի շինարար

Նշենք, որ արձանագրությունը քանդակված է արաբերենի *նասխ* գրատեսակով: Արձանագրության սկզբնամասում՝ աջ կողմի ստորին հատվածում՝ մինչև *լա* («չկա») բառը՝ սալիկի անկյունում քանդակված է տերևներով ցողունի տեսք ունեցող բուսական զարդանախշ: Նմանատիպ զարդանախշ վեր է բարձրանում *լա* («չկա») բառի մեջտեղից, այդ բուսանախշը ցողունով միանում է աջ մասի հետ: Մեկ այլ, չափերով փոքր, ոչ խիտ տերևներով բույսի պատկեր քանդակված է «*իլահա*»՝ «աստված, աստվածություն» բառից առաջ՝ իր հերթին երկու կլորավուն նախշերից բաղկացած դեկորատիվ զարդից վերև: Արձանագրության աջ մասում՝ վերին հատվածում, տեսնում ենք թռչնի, թերևս, աղավնու տեսքով մեկ այլ զարդանախշ, որի մեջտեղում փորագրված է շրջան, վերջինիս մեջտեղում էլ՝ անցքով կլոր զարդանախշ է զետեղված:

Թաքիան երկհարկանի է, բաղկացած է ստորգետնյա (որտեղ հավանաբար գտնվում է շեյխի կամ սրբի գերեզմանը) և վերգետնյա հարկերից՝ բուն թաքիայից: Վերգետնյա հարկի հատակին մեծ անցք է փորված, որտեղից էլ կարելի է տեսնել շինության ստորգետնյա հարկը (նկ. 7):

Կառույցի շրջակայքում եղել է ոչ մեծ գերեզմանոց՝ դատելով մուսուլմանական տապանաքարերի քանակից: Տապանաքարերը թվագրվում են լավագույն դեպքում 19-րդ դ. կեսերով, իսկ մեծ մասը՝ այդ դարի վերջերով: Համենայն դեպս, մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ավելի վաղ ժամանակաշրջանով թվագրվող տապանաքարեր չկան:

Թաքիայի կառուցման տարեթիվն անհնար է ճշգրիտ կերպով պարզել, քանի որ արձանագրությունը նման տարեթիվ չունի: Սակայն, դատելով շինության պահպանվածության աստիճանից և շուրջը եղած գերեզմանատան տապանաքարերից, մեծ հավանականությամբ կարելի է նշել, որ ներկայիս տուֆապատ թաքիան վերանորոգվել է 19-րդ դ. վերջին կամ 20-րդ դ. սկզբին:

Նշենք, որ 1590 թ. օսմանյան իշխանությունների կողմից հարկատու բնակչության թիվը պարզելու նպատակով անցկացված մարդահամարի ժամանակ գյուղը հիշատակվում է որպես Կարբիի գավառակի Փիրթաքյասի բնակավայր: Հատկանշական է, որ «փիր» բառը նշանակում է սուֆի սուրբ[9]: Այս տեղե-

[9] Böwering et al. 2010.

կությունը թույլ է տալիս ենթադրելու, որ գյուղում թաքիա կարող է գոյություն ունեցած լինել դեռևս 16-րդ դ.: Գյուղն, ըստ հարկացուցակի տվյալների, ուներ տասը հարկատու, որոնք, ամենայն հավանականությամբ, հայեր չէին, այսինքն մուսուլման էին: Օսմանյան մարդահամարներում բնակիչների ազգությունը չի մասնավորեցվել, սակայն հայտնի է, որ, օրինակ, 1728 թ. Թաքիայից 8 կմ հեռու գտնվող Կարբի բնակավայրն ամբողջությամբ հայաբնակ է եղել[10]: Գյուղում կային մեկ մեծ հողատարածք՝ չիֆլիք, երեք այգի, պարտեզ և հողատարածք: Գյուղից հարկվող չափը 9400 աքչե էր, ինչը մեծ գումար չէ, մշակել են ցորեն և գարի[11]:

Գյուղը Բազմաղբյուր է վերանվանվել 1949 թ. դեկտեմբերի 1-ին: 1931 թ. լույս տեսած Ջավեն Կորկոտյանի «Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում» աշխատությունից տեղեկանում ենք, որ հայ բնակչությունն այստեղ հաստատվել է 1922 թ. սկսած, իսկ մինչ այդ թաթարներ են ապրել (1919 թ. մարդահամարում դրանք անվանվել են «թուրքեր»)[12]: Միևնույն ժամանակ նշենք, որ ադրբեջանական աղբյուրները մուսուլմանական բնակիչների անհետացումը վերագրում են «ադրբեջանցիների դեպորտացիայի» կեղծ թեզին[13]:

Ամփոփելով, հարկ է հավելել, որ Արևելյան Հայաստանի տարբեր մասերում ապրել է մուսուլմանական բնակչություն, հաճախ թյուրքախոս: Մուսուլմանական, ներառյալ թյուրքախոս տարրի ներթափանցումը Արևելյան Հայաստան, ամենայն հավանականությամբ, զանգվածային է դարձել 15-րդ դարից սկսած և մեծապես խրախուսվել թուրքմենական և իրանական հարստությունների՝ մասնավորապես Սեֆյանների կողմից[14]: Միաժամանակ վերջիններիս կողմից դուրս էր մղվում տեղի հայ բնակչությունը: Հայտնի փաստ է, որ 1604 թ. Շահ Աբբասի հրամանով 1603–1612 թթ. Օսմանյան կայսրության դեմ պատերազմի տարիներին «այրված հողի» մարտավարության հետևանքով հայերի մի ստվար զանգված տեղահանվեց Իրանի Սպահան քաղաք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑԻ 1988
Առաքել Դավրիժեցի. Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Երևան, «Սովետական գրող», 1988, 589 էջ:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 1972
Հայ ժողովրդի պատմություն, հատոր IV, Հայ ժողովուրդը ֆեոդալիզմի վայրէջքի

10 Միրզաբեկյան 2020, 346:

11 Հարկացուցակի 69-րդ տող: Օսմանյան հարկացուցակի տեղեկությունները բանավոր կերպով մեզ հաղորդել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Աղբյուրագիտության և պատմագրության բաժնի գիտաշխատող Գեորգի Միրզաբեկյանը, որին հայտնում ենք մեր շնորհակալությունը:

12 Կորկոտյան 1932, 106–107:

13 Bayramov 2002, 5, 269:

14 Հայ ժողովրդի պատմություն 1972, 98–99: Iskandar Munshi 1981, 856–857: Առաքել Դավրիժեցի 1988, 52–53:

ժամանակաշրջանում XIV–XVIII դդ., Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Երևան, 1972, 684 էջ:

ՄԻՐՋԱԲԵԿՅԱՆ 2020
Միրզաբեկյան Գ., Կարբի քաղաքի 1728 թ. օսմանյան հարկացուցակը որպես Հայաստանի պատմության սկզբնաղբյուր, Արևելյան աղբյուրագիտություն ժողովածու, 2, Երևան, 2020, էջ 334–363:

ԿՈՐԿՈՏՅԱՆ 1932
Կորկոտյան Զ., Խորհիրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831–1931), Երևան, 1932, 185 էջ:

BAYRAMOV 2002
Bayramov, İ., Qərbi Azərbaycanın Türk mənşəli toponimləri, Baki, 2002, 346 s.

BEBITOV 2022
Bebitov, M., History of Uzbek takiyas in Istanbul and Economic Relations with the Ottoman State, Modern Journal of Social Sciences and Humanities Vol. 5 (2022), 114–119. https://mjssh.academicjournal.io/index.php/mjssh

BÖWERING ET AL. 2010
Böwering G., Melvin-Koushki, M., «Kānaqāh», Encyclopaedia Iranica, 2010. Retrieved 2025-05-03. https://www.iranicaonline.org/articles/kanaqah

CLAYER 2000
Clayer, N., Tekke, The Encyclopedia of Islam, New Edition, volume X T-U, Brill, Leiden, 2000, 414–417.

ISKANDAR MUNSHI 1981
Iskandar Munshi. History of Shah ʻAbbas the Great (Tārīkh-e ʻĀlamārā-ye ʻAbbāsī). Translated by Roger M. Savory. Vol. 2. Persian Heritage Series 28. Boulder: Westview Press, 1981.

MUʻJAM 2019
Muhammad Sadiq Muhammad al-Karbasi, Muʻjam al-mašāriʻ al-husaynia – al-juz' al-thālith: da'irat al-maʻārif al-husaynia, al-markaz al-husayni lildirāsāt, Landan, 2019 (Hussaini Encyclopedia, Lexicon of Hussaini Projects (Volume Three), Mohammad Sadiq (al-Karbasi), The Hussaini Center for Research, London, United Kingdom, First Edition, 2019. https://books.google.am/books?id=X46ODwAAQBAJ&pg=PT220&redir_esc=y#v=onepage&q&f=false

Նկ. 1. Բազմաղբյուրի թաքիան (լուս.՝ հեղինակի)

Նկ. 2. Խանաղահ Հարունիե, Իրան, քաղաք Թուս, 13-րդ դ. (լուս.՝ https://it.wikipedia.org/wiki/Khanqah#/media/File:Haruniyeh.jpg)

Նկ. 3. Թաքիա Սուլայմանիա, Դամասկոս, Սիրիա, 16-րդ դ. (լուս.՝ https://en.wikipedia.org/wiki/Sulaymaniyya_Takiyya#/media/File:Takiyya_as-S%C3%BCleimaniyya_Mosque_01.jpg)

Նկ. 4. «Ուզբեկների» թաքիա, Սրամբուլ, 18-րդ դ. կեսեր (լուս.՝ https://en.wikipedia.org/wiki/Sufi_lodge#/media/File:Uzbek_Dervish_Lodge.jpg)

Նկ. 5. Բազմաղբյուրի թաքիան ներսից (լուս.՝ Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի, 1980-ականներ)

Նկ. 6. Բազմաղբյուրի թաքիայի արաբերեն արձանագրությունը (լուս.՝ հեղինակի)

Նկ. 7. Փորվածք թաքիայի մեջտեղում (լուս.՝ հեղինակի)

Արմեն Ասատրյան
Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն ՊՈԱԿ,
գիտաշխատող,
asatryan.armen@inbox.ru

ՓԱՐՊԻՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐՈՒՄ

Նախաբան

Փարպի գյուղը ոչ միայն Արագածոտնի, այլև Հայաստանի հնագույն բնակավայրերից է[1]: Այն հիշատակվում է 5-րդ դ., որպես «ճարտասան և ճարտար պատմիչ» Ղազար Փարպեցու ծննդավայր: Այստեղ է ծնվել նաև միջնադարյան նշանավոր իմաստասեր Գրիգոր Տաթևացու մայրը:

Փարպին հարուստ է բազմաթիվ պատմաճարտարապետական հուշարձաններով, որոնց մեջ Ծիրանավոր ու Թարգմանչաց եկեղեցիները հայկական ճարտարապետության գլուխգործոցներից են: Այս առումով Թորոս Թորամանյանը նշել է, որ «Փարպին մի հնագիտական թանգարան է ճարտարապետության տեսակետից»:

Փարպիի արխիվային վավերագրերը

Գյուղի մասին բազմաթիվ վավերագրեր են պահպանվել Հայաստանի Ազգային արխիվի ֆոնդերում: Այդ վավերագրերից են՝ «Երևանցի Կարապետ Կոստանդիանովի միջոցներով Փարպի գյուղի եկեղեցին վերանորոգելու մասին» (1838թ.)[2], «Փարպի գյուղի հասարակության խնդրագիրը եկեղեցու գավթում ուսումնարան բացելու մասին» (1870թ.),[3] «Երևանի հայոց կոնսիստորիայի հայտարարությունը՝ Փարպի գյուղի եկեղեցին վերանորոգելու թույլատվության մասին» (1874–1875թթ.)[4], «Փարպեցի Աբրահամ Հարությունյանի որդուն Էջմիածնի հոգևոր սեմինարիա ընդունելու մասին» (1842–1844թթ.)[5], «Փարպի գյուղում հասարակության խնդրանքով՝ հանգուցյալ ծխական քահանա Ստեփանի որդուն՝ Ծերունին, գյուղական քահանա ձեռնադրելու մասին» (1853թ.)[6] և բազմաթիվ այլ վավերագրեր: Մեծ թվով փաստաթղթեր են պահպանվել նաև գյուղի ծխական-եկեղեցական դպրոցի գործունեության վերաբերյալ: Այն հիմնվել է

1 Փիլիպոսյան 2005; Ավետիսյան 2013:
2 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 320:
3 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5620:
4 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 6536:
5 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1228:
6 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3012:

1879 թ. և կոչվել է Ղազար Փարպեցու անունով: Օրինակ, 1910 թ. վավերագրերից մեկում նշված է, որ դպրոցում դասավանդել է 2 ուսուցիչ, սովորել՝ 48 աշակերտ, որոնցից 11-ը՝ աղջիկ[7]:

«Երևանցի Կարապետ Կոստանդիանովի միջոցներով Փարպի գյուղի Սուրբ Գրիգոր եկեղեցին վերանորոգելու մասին» (1838 թ.) արխիվային գործից տեղեկանում ենք հետևյալը.

1838 թ. մայիսի 7-ին Երևանի հայոց վիճակային կոնսիստորիան հայտարարությամբ դիմել է Սինոդին. «*Կօնսիստորիայս լուաւ զինդրագիր Երևանայ բնակչի Կարապետ Կոստանդիանովի, ի 27-ն ապրիլի, յորում գրէ թէ՝ վասն գտանելոյ զփրկութիւն հոգւոյ իւրոյ, կամի նորոգել զՍուրբ Գրիգոր եկեղեցին գտանեցեալն ի գիւղն Փարբու, բայց լսելով նորա, թէ Մկրտիչ վարդապետն նորոգեալ է փայտիւ, այժմ խնդրէ ի կօնսիստորիայէս հրամայել ում հարկն է թոյլատրել նմա վասն նորոգելոյ վերոգրեալ եկեղեցին քարամբ, և նա խօսեցեալ ընդ վարպետաց ծախս կարէ լինել երեսուն և հինգ թուման, օրէնք հրամայեն. Բարձրագոյն կամօք հաստատեալ կարգադրութեան յաղագս կառավարութեան գործոց լուսաւորչական եկեղեցւոյ, յօդուած 77, պարբերութիւն 12, թոյլատրութիւն կառուցանելոյ զԱստուածահաճոյ շինուածս և առաջարկութիւն առ լուսաւորչական հայոց Սիւնհոդոսն Էջմիածնի, յաղագս շինելոյ զնոր վանօրայս, զեկեղեցիս, և զդպրոցս, կարգաւորեաց. որովհետև Երևանայ բնակիչ Կարապէտ Կօնստանդիանովն իւր սեփհական ծախիւք կամի նորոգել քարամբք զեկեղեցին Փարբու, վասն գտանելոյ զփրկութիւն հոգւոյն իւրոյ, վասն որոյ համաձայն վերոյգրեալ օրինաց գայսմանէ յայտնել Սիւնհոդոսիդ և խնդրել զհրաման»*[8]: *Մայիսի 20-ին Սինոդը հրամայում է. «Հրամայել կոնսիստորիին Երևանու յայտնել Սիւնոդոսիս կարելին արագութեամբ, թէ որովհետև ի գեղջն Փարբի գոյ այժմ շէն եկեղեցի, յորում շարունակի և ցարդ ժամերգութիւն, որ և բաւական համարի ընդ թուոյ հայազգի բնակչացն տեղւոյն, զինչ ուրեմն առանձին հարկաւորութիւն տեսանէ կոնսիստորիայն ի վերանորոգելոյ զսահմրեալ եկեղեցին նոյն Փարբի գեղջ, որ ոչ նայելով ընդ այն, զի ի տարւոյ անտի կայ ամայացեալ»*[9]:

Նույն թվականի հոկտեմբերի 7-ին Երևանի հայոց կոնսիստորիան հայտարարում է Սինոդին, որ քաղաքի բարեկարգիչ Տեր Իսահակ քահ. Տեր Ստեփաննոսյանցի նախաձեռնությամբ և Տեր Խաչատուր քահ. Տեր Խաչատրյանի միջոցով կոնսիստորիա է հրավիրվել կոնդեցի Կարապետ Կոստանդիանովը, որին հորդորել են այդ գումարը տրամադրել Երևանի Հոգևոր սեմինարիայի օգտին, որտեղ ուսանում էին բազմաթիվ հոգևորականների զավակներ, չքավոր և որբ երեխաներ: Սակայն Կարապետ Կոստանդիանովը, չհրաժարվելով իր բարի մտադրությունից, պատասխանում է. «*…թէ որովհետև համարի նա զյիշեալ Սուրբ Գրիգոր եկեղեցին աքանչելագործ եկեղեցի առաջի ամենայն հաւատացեալ…*

[7] ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 340:
[8] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 320, թ. 1:
[9] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 320, թ. 2 շրջ.:

արբոյ հօրն մերոյ Գրիգոր Լուսաւորչի հիմնարկողի այնր եկեղեցւոյ, որ և ի նմին մատուցեալ է որպէս ինքն լուեալ է զմեղսաքաւիչ սուրբ պատարագն, վասն որոյ և ինքն յաւուրս այսոսիկ ոսկւոյ այնր եկեղեցւոյ, գոլով, ընկալեալ զշնորհս աքանչելից այնր եկեղեցւոյ աներկմիտ ոսկւեալ է առաջի Աստուծոյ, ի մէջ յիշեալ սուրբ տաճարին նորոգել զայն գոյիս չափ արդեամբ իւրով, վասն որոյ և ոչ կամի ի բաց կալ յոսկւորութենէ իւրմէ, իսկ եթէ ընդ հակառակն ոչ բարեհաճեացի կոնսիստորիայն հրամայել զնորոգութիւն այնր եկեղեցւոյ, յայն ժամ և ոչ նա յանձն առնու ընծայել ինչ յօգուտ այլոյ երեք շինութեան կամ կառուարութեան ամենախոնարհ և իսկութեամբ յայտնելով նորա զայս ամենայն Երևանայ հայոց վիճակաւոր կոնսիստորիային սպասէ բարեպատեհ տնօրէնութիւն սորին»[10]:

Կոնդեցի Կոստանդիանովի մերժման մասին կոնսիստորիան հայտնել է Սինոդին[11]: 1838 թ. հոկտեմբերի 21-ին Սինոդը հրամայում է Երևանի կոնսիստորիային, որ Կարապետ Կոստանդիանովին դարձյալ հրավիրի Ատյան և համոզի, որպեսզի վերջինս գումարը նվիրաբերի այլ աստվածահաճո գործի համար, իսկ եթե դարձյալ մերժի, ապա թույլատրել, որ այդ գումարով վերանորոգվի Փարպիի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին[12]:

1870 թ. մարտի 28-ին Փարպի գյուղի հասարակությունը խնդրագիր է ներկայացնում Աշտարակի գործակալ Սարգիս ավագ քահանա Կարապետյան Բզնունյանցին՝ գյուղում ծխական ուսումնարան բացելու խնդրանքով. «*Մեք ցանկամք ունենալ ի գաւիթ եկեղեցւոյ մերոյ ուսումնարան, բայց եկեղեցին մեր ունի առձեռն պատրաստի դրամ 185 մանեթ և 41 կոպեկ: Հասարակութիւնս անճար լինելով տկարանամք ի մերոյ յանձնական արդեանց առնուլ ծախս ի վերայ յիշեալ ուսումնարանի: Վասն որոյ յոյժ աղերսանօք խնդրիմք յարժանապատութեանդ միջնորդել ուր հարկն է թոյլատրել ի վերոյիշեալ եկեղեցապատկան դրամոց 85 րուբլի առնուլ ծախս ի վերայ նորաշէն ուսումնարանի:*

1. Բաբոյ Յարութիւնեան, 2. Յովհաննես Դիլանեան, 3. Գէորգ Յովակիմեան, 4. Ստեփան Սարգսեան, 5. Վարդանէս Յովակիմեան, 6. Մեսրովբ Պապոյեան, 7. Գալուստ Ստեփանեան, 8. Յարութիւն Վարդանեան, 9. Զաքար..., 10. Սողոմոն..., 11. Խաչատուր Տէր-Մկրտչեան, 12. Խաչատուր Յակոբեան, 13. Աւագ Թամրազով, 14. Եղկիար Նիկողոսեան, 15. Սուդիա Մակար Ներսիսով, 16. Երեցփոխան Առաքել Յակոբեանց և ծխատեր Ստեփաննոս քահանա Տէր-Ստեփաննոսեան»[13]:

Հունիսի 18-ին Սարգիս ավագ քահանա Բզնունին դիմում է Երևանի հայոց կոնսիստորիային և ներկայացնում է գյուղացիների խնդրանքը. «*Քանակիչք Փարպի գեղջ մատուցին յիմ անուան զիւրեանց խնդրագիրն, յաղագս թոյլատրելոյ ի դրամոց եկեղեցւոյն իւրեանց, ութսուն և հինգ րուբլի, վրան ծախուց շինութեան նորոգ ուսումնարանին նոյն գեղջ, որ ի գաւթին եկեղեցւոյն իւրեանց,*

[10] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 320, թ. 3:
[11] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 320, թ. 3 և շրջ.:
[12] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 320, թ. 5:
[13] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5620, թ. 5:

ուսփի զայն խնդրագիր ընդ այսմ խոնարհաբար պատիւ ունիմ մատուցանել յայտարարութիւն Սինոդին և խնդրում եմ զվաղահաս տնօրինութիւն»[14]: Սինոդը թույլատրում է Փարպի գյուղի հասարակությանը ծխական ուսումնարանի շինության համար օգտագործել նաև եկեղեցապատկան 85 ռուբլին:

«Երևանի հայոց կոնսիստորիայի հայտարարությունը՝ Փարպի գյուղի եկեղեցին վերանորոգելու թույլատվության մասին» (10 դեկտեմբերի 1874 թ. – 3 հունվարի 1875 թ.)[15] արխիվային գործից տեղեկանում ենք հետևյալը. 1874 թ. դեկտեմբերի 12-ին Երևանի հայոց վիճակային կոնսիստորիան դիմում է Ս. Էջմիածնի Սինոդին և տեղեկացնում, որ Փարպի գյուղի հասարակությունը ցանկություն է հայտնել վերանորոգելու Ս. Գևորգ եկեղեցին, և խնդրում է թույլտվություն՝ ծախսելու եկեղեցապատկան 200 ռ. լուսամուտների շինության և ձաշոց մատյան գնելու նպատակով: Միաժամանակ նշվել է, որ եկեղեցին 1874 թ. հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 254 ռ. 94 կ. գումար[16]:

1875 թ. հունվարի 3-ին Սինոդը որոշում է. «*Տալ հրաման կոնսիստորիային հայոց Երևանայ, վասն թոյլատրելոյ հոգաբարձուաց վերանորոգութեան եկեղեցւոյն հայոց Փարպի գեղջ ի գործ դնել յեկեղեցական գումարաց զ200 րուբլիս ի պէտս վերանորոգութեան լուսամտից Սուրբ Գէորգ եկեղեցւոյ տեղւոյն և վճարման գնոյն ճաշոց մատենի: Եւ այսու զայս գործ համարել վերջացեալ, յաղագս տալոյ ի դիւանն ի պահ*»[17]:

Արխիվային վավերագրերից մեկը Փարպի գյուղի բնակիչ Հովսեփ Հայրապետյանին հոգևոր կոչում տալու մասին է (1877–1878 թթ.)[18]: 1898 թ. քահանաներ ձեռնադրելու և տեղափոխելու մասին վավերագրում նշված են մեծ թվով փարպեցիների անուններ[19]: Իսկ 1925 թ. հոգևորականների մասին վավերագրում նշված է Փարպիի Հակոբ քահանան[20]:

Խորհրդային տարիներին ևս Փարպիի պատմամշակութային հուշարձանները գտնվել են պատկան մարմինների, հատկապես Հուշարձանների պահպանության կոմիտեի ուշադրության կենտրոնում: Հուշարձանների պահպանության հսկիչների կողմից պահպանվել և խնամվել են գյուղի հուշարձանները: Այդ մասին են վկայում մի շարք արխիվային վավերագրեր, որոնք վերաբերում են Փարպիի պատմամշակութային հուշարձաններին:

1939 թ. օգոստոսին Լուսժողկոմատը կազմակերպում է Արագածի գավառագիտական արշավախումբ (էքսպեդիցիա), որի առջև նպատակ է դրվում ուսումնասիրել Արագած լեռան հարավային և արևելյան լանջերին գտնվող պատմական հուշարձանների պահպանության արդի դրությունը: Այդ նպատակով Վ. Դարյանի գլխավորած արշավախումբը, ի թիվս այլ բնակավայրերի, այցելում է

14 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5620, թ. 4:
15 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 6536:
16 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 6536, թ. 1:
17 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 6536, թ. 2:
18 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 6785:
19 ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 253, թ. 39, 55:
20 ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3153, թ. 16:

նաև Փարպի: Հաշվետվությունում նշված է, որ բոլոր հուշարձանների պահպանությունը միանգամայն վատ է: Մի շարք հուշարձաններ օգտագործվում են կոլտնտեսականների կողմից, հաճախ նույնիսկ առանց թույլտվության, որպես պահեստ, ինչպես օրինակ՝ Փարպիի պատմական 5-րդ դ. ֆեոդալական ամրոցը (նկատի է առնվել Ծիրանավոր եկեղեցին): Նշված է, որ հուշարձանի վերաբերյալ զբաղեցնողների հետ պայմանագրեր չեն կնքվել, այն դեպքում, երբ Լուսժողկոմատը պարտավորեցրել էր հուշարձանների կոմիտեին նման պայմանագրեր կնքելու:

Վ. Դարյանը հաշվետվությունում գրում է, որ «*հաճախ ստացվում է այն տպավորությունը, որ խորհրդային իշխանությունը դեմ չէ եկեղեցուն, այլ ընդհակառակը՝ այն պահպանում է և վերանորոգում նույնիսկ: Այդ կարծիքը կա գյուղացիների որոշ շերտերի մեջ: Այլ կերպ ինչով բացատրել այն հանգամանքը, երբ Փարպի գյուղի Սուրբ Գրիգոր կոչված 13-րդ դ. մենաստանը ծառայում է մինչև օրս սրբատեղի, որտեղ շրջակա մի շարք գյուղերից, անգամ հեռու տեղերից ռեպտ են գալիս կատաղած շան կծած մարդուն բժշկելու և այլ նպատակների համար: Եվ այդ կատարվում է բավական հաճախ*»[21]:

1948 թ. պատմական հուշարձանների պահպանության կոմիտեն Աշտարակի շրջանում հնագիտա-հետազոտական աշխատանքներ է նախաձեռնում[22]:

Արշավախումբը Հովսեփ Եղիազարյանի գլխավորությամբ սեպտեմբերի 18-ից մինչև հոկտեմբերի 10-ը ընկած ժամանակահատվածում ուսումնասիրում է շուրջ 70 հուշարձան, որոնց թվում նաև Փարպի գյուղի հուշարձանները: Հաշվետվությունում նշված է, որ «*գիտարշավի աշխատանքներում առանձնապես նշանակալից է այն, որ մի շարք հուշարձաններ հայտնի էին ընդհանրապես, միայն անունով և նրանց ճարտարապետական արժեքը հայտնի չէր, և հետազոտությունները հնարավորություն տվեցին ճշտելու նման հուշարձանների կարևորությունը ճարտարապետության և արվեստի պատմության համար*»: Թվարկվում է, որ այդպիսի հուշարձաններից է նաև Փարպիի Թարգմանչաց եկեղեցին, որն անհրաժեշտ է առաջնահերթ մաքրել փլատակներից և կարևոր բեկորները դասավորել:

Գիտական արշավախմբի հաշվետվությունում նկարագրվում են Փարպիի եկեղեցիները և գրի առնվում մի շարք արձանագրություններ:

Ծիրանավոր եկեղեցի. Գտնվում է գյուղի մեջ, հյուսիսարևմտյան անկյունում: Կառուցման ժամանակը հայտնի չէ, ըստ մշակման ձևի պատկանում է 5-րդ դ.: Միանավ բազիլիկ է, քարաշեն, թաղակապ ծածկով, կողերի պատերը ներսից ունեն երեքական ուղղանկյուն, լայն որմնասյուներ՝ խոյակներով, որոնք միանում են առաստաղը գոտկող կամարներով և որմնակամարներով՝ պատերի մեջ առաջացնելով երկուական մեծ խորշեր: Արևելյան կողմից ունի պայտաձև աբսիդ՝ ցածր բեմով: Արևմտյան և հարավային կողմերից ունի դռներ, նույն և արևելյան կողմերից՝ մեկական լայն կամարակապ լուսամուտներ: Արևմտյան

[21] ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 533:
[22] ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 1351:

դռան ճակատակալ քարի վրա քանդակված է հավասարաթև խաչ՝ շրջանակի մեջ առնված և շրջագիծը զարդարված սեպաձև քանդակներով: Շարված է կարմրագույն տուֆի սրբատաշ մեծ քարերով:

Միջին դարերում ամրացված է լայն ամրոցապատերով, որոնք եկեղեցու վրա կազմում են երկրորդ հարկ ՝ այն վերածելով անառիկ դղյակի: Այդ կրկնապատերը փակել են հարավային մուտքը, իսկ արևմտյան կողմից ամրոցապատերի մուտքի վրա դրված է քարե մեծ դուռ: Կրկնապատերի ստորին մասերը շարված են անմշակ, մեծ որձաքարերով, կրաշաղախով, իսկ վերևի ամբողջ մասերը՝ նույն տուֆի թույլ տաշված քարերով, կրաշաղախով: Երկրորդ հարկ բարձրանում են եկեղեցու ներսից, հյուսիսարևմտյան անկյունից, փայտե սանդուխքով: Կանգուն վիճակում է՝ քանդված է երկրորդ հարկի ծածկը և պատերի վերին մասերը: Ունի վիմական արձանագրություններ:

Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի. Գտնվում է գյուղի հարավային եզրին, միջին դարերին բնորոշ փոքր շենք է, ուղղանկյուն հատակագծով, հավանաբար՝ թաղակապ ծածկով: Հյուսիսային պատի մնացած մասի վրա պահպանվել է մի կրոնշտեյն: Դուռն արևմտյան կողմից է՝ կիսակլոր ճակատակալ մեծ քարով: Շարված է եղել կարմիր տուֆի սրբատաշ քարերով, կրաշաղախով: Ավերակ է՝ քանդված է ծածկը, արևելյան ու հարավային պատերը և մյուս պատերի վերի որոշ մասեր: Հետագայում (19-րդ դ.) քանդված պատերը լրացրել են անմշակ, փոքր քարերով, ծածկել են փայտով և դարձրել ուխտատեղի: Արևմտյան պատի հին մասի վրա փորված են խաչեր, որոնք հավանաբար 10–12-րդ դդ. են: Ներսում կա երեք խաչքար, որ բերվել են այլ տեղից և վերաբերում են 13–14-րդ դդ.: Պահպանվել է մի արձանագրություն՝ դռան ճակատակալ քարի վրա:

Գերեզմանոց. Տարածվում է Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շուրջը, բավականին մեծ է, տապանաքարերը գլխավորապես կարմիր տուֆից են, տարբեր ձևով մշակված՝ տափակ-քառակողմ, սուր եռանկյունաձև, օրորոցաձև, դագաղի կափարիչի ձևով և այլն: Կան բազմաթիվ խաչքարեր՝ սովորական ձևով քանդակազարդված, ոմանք ունեն տապանագրություններ: Քայքայված վիճակում է՝ եզրերից քանդված է խաղողի այգիներ տնկելու պատճառով, գերեզմանաքարերի մի մասը տեղահան է արված, մի զգալի մասը թաղված է գետնի մեջ: Խաչքարերը մեծ մասամբ ընկած են, մի մասը՝ ջարդված կամ հողով ծածկված, իսկ մի մասն էլ օգտագործված է որպես գերեզմանաքար: Գերեզմանոցում, եկեղեցու արևելյան պատի տակ, ընկած է մի քար՝ վրան հավասարաթև խաչ՝ շրջագծի մեջ առնված և եզրերը երկրաչափական մոտիվների զարդաքանդակներով եզրափակած:

Գերեզմանոցում կան մնացորդ-բեկորներ, որոնք վերաբերում են 7-րդ դ. և ցույց են տալիս, որ նրա հիմնադրումը 10-րդ դ. ուշ չի կարող լինել: Մինչև այժմ էլ շարունակվում են թաղումները (պահպանվել են մի քանի արձանագրություններ):

Թարգմանչաց եկեղեցի. Գտնվում է գյուղի հարավարևելյան կողմում, այգիների մեջ, բարձրադիր վայրում, Աշտարակ տանող ճանապարհի ձախ կող-

մում, Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու դիմաց՝ դեպի արևելք: Կենտրոնական գմբեթակիր կառուցվածք է, խաչաձև հատակագծով, խաչաթևերն արտաքուստ ուղղանկյուն են, ներքուստ կիսակլոր, արևելյան խաչաթևում կառուցված է բեմ: Ներսից խաչաթևերի միացման անկյուններից ձգվում են գլանաձև կիսասյուներ, որոնք, կամարներով միանալով, իրենց վրա են կրել գմբեթը. կիսասյուների խարիսխները ուղղանկյուն են՝ գծավոր-գոտկանման քանդակներով: Դուռը հարավային կողմից է՝ ճակատակալ մեծ քարով, զարդարված բուսական ու երկրաչափական նրբագեղ քանդակներով. շրջանակավոր է՝ կողքերից գլանաձև որմնասյունավոր, որոնց խարիսխներն ուղղանկյուն են, հարթ, իսկ խոյակները պատված են բուսական շքեղ զարդաքանդակներով: Արևելյան աբսիդի պատերի վրա պահպանվել են սվաղի մնացորդներ՝ հաստատելով, որ հուշարձանը ներսից սվաղված է եղել: Սվաղի վրա նկատվում են որմնանկարների հետքեր: Շարված է բազմագույն տուֆի սրբատաշ քարերով, կրաշաղախով, սալահատակված է: Ավերակ վիճակում է՝ ամբողջապես քանդված է ծածկը՝ գմբեթի հետ և պատերի վերևի մասերը: Խաչիկ վարդապետ Դաղյանը 20-րդ դ. սկզբներին փլատակներից մասամբ մաքրել է տալիս եկեղեցու ներսը և շրջապատը, պատերի քանդված մասերը լրացնում այդ բեկորներով և փայտով ծածկելով՝ վեր է ածում պաշտամունքի վայրի (այդ ծածկը ներկայումս քանդված է):

Նկատվում է, որ հուշարձանը եղել է շքեղ քանդակազարդված, որովհետև շուրջը թափված բեկորների մեջ նկատվում են լուսամուտների քանդակազարդ պսակների բեկորներ, կարնիզաքարեր՝ պատած կողովահյուս քանդակներով, ճակատակալ քարի նմանությամբ այլ քարեր, որոնք վկայում են, որ հուշարձանն ունեցել է լայն շերտով շքեղ քանդակազարդ պարագոտի և այլն: Կիսասյան մի բեկորի վրա պահպանվել է սվաղը՝ կարմիր ներկի հետքերով: Բացի այդ բեկորներից, հուշարձանի շուրջը թափված են քառակող կոթողների, խաչքարերի ու մահարձանների բազմաթիվ բեկորներ 6–12-րդ դդ. բնորոշ զարդաքանդակներով: Մի մեծ խաչարձան կանգնեցված է եկեղեցու հարավային պատի տակ, դռան արևելյան կողմում, որի խաչքարի քանդակները հողմահարվել ու քայքայվել են: Թե՛ հուշարձանի և թե՛ բեկորների վրա կան հիշատակագրության մնացորդներ: Մշակման ձևերով հուշարձանը (եկեղեցին) բնորոշ է 7-րդ դ. (պահպանվել են մի քանի արձանագրությունների հատվածներ):

Քարայրեր. Գտնվում են ձորի քարափներում, ոմանք շատ մեծ են, առաջամասերը փակված են քարաշար-կրաշաղախ ամրոցապատերով և վեր են ածվել թշնամիներից պաշտպանության ապաստարանների: Ոմանց մեջ փորված են ջրամբարներ, հացահատիկի և այլ պահեստ-ամբարներ, ներսից կրով սվաղված են[23]:

Հովսեփ Եղիազարյանի գլխավորությամբ մեկ ուրիշ գիտական արշավախումբ Փարպի և շրջակա գյուղերն է այցելել 1949 թ.: Արշավախմբի զեկուցագրում նշված է, որ «արշավախումբը ստուգել և արձանագրել է երկրաշարժի պատճառով վնասված հուշարձանների վիճակը: Կատարված ստուգումից

[23] ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 1351:

պարզվեց, որ երկրաշարժի պատճառով քանդվել է Փարպու Ծիրանավոր եկեղեցու արևելյան աբսիդի կոնքի մասը և արտաքին ամրոցապատը»[24]:

Հարկ է նշել, որ Հովսեփ Եղիազարյանը Փարպի էր այցելել նաև 1938 թ. ապրիլի 23-ին՝ հուշարձանների պահպանության հսկիչի աշխատանքը ստուգելու համար: Նա գրել է, որ հսկիչի աշխատանքը «*գոյա բավարար և հարկ եղած ցուցումներ արեցի հետագա աշխատանքների համար*»[25]:

1879 թ. հոկտեմբերին կազմվել է գործ՝ Փարպի գյուղի բնակիչ հրեա Ռահիմ Դանիելյանի կողմից հայկական դավանություն ընդունելու մասին[26]: Հոկտեմբերի 25-ին Ռահիմ Դանիելյանը խնդրագիր է ուղղել Սինօդին, որ, բնակվելով Փարպի գյուղում՝ հայերի մեջ, զբաղվել է այգեգործությամբ և այլ աշխատանքներով, սովորել է խոսել հայերեն, միևնույն ժամանակ եկեղեցում սովորել է քրիստոնեական կրոն, ուստի ցանկություն է հայտնել իրեն ընդունելու հայոց գրիգորյան հավատքի մեջ: Նա գրել է, որ դեռ մանկությունից անհամբերությամբ է սպասել այդ օրվան, քանի որ նաև իր մայրը հայուհի է հարևան Կոշ գյուղից: Նշենք, որ վավերագրերից նկատելի է, որ հրեա Ռահիմ Դանիելյանը ծնունդով Պարսկաստանից էր: 1880 թ. հունվարի 31-ին Սինոդի կառավարչական մասը Աշտարակի գործակալ բարեկրոն Թովմաս քահանային պատվիրել է. «*Ի հետևումն ընկալնուլ ի Սինօդիս լուծման, իշխանի փոխարքային Կովկասու ի 14-ն յունվարի տարւոյս № 277, կառավարչական մասն Սինօդի պատուիրէ Ձեզ կատարել տալ ի վերայ վերաբնակչի ի Փարպի գեղջ հրէի Ռահիմայ Դանիէլեան զիտորիարդ մկրտութեան ըստ ծեսի մերս Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ*»[27]:

Հայաստանի Ազգային արխիվում պահպանվել են նաև Փարպի գյուղի 1853–1879 թթ.[28], 1880–1899 թթ. չափաբերական մատյանները[29], ինչպես նաև Ցարական Ռուսաստանի կողմից անցկացրած տարբեր տարիների մարդահամարները: Խորհրդային առաջին տարիներին կազմվել են տնաթերթիկները[30]:

Ամփոփում

Գյուղի մասին Հայաստանի Ազգային արխիվի տարբեր ֆոնդերում պահպանվել են բազմաթիվ վավերագրեր: Այդ վավերագրերից են՝ «Երևանցի Կարապետ Կոստանդիանովի միջոցներով Փարպի գյուղի եկեղեցին վերանորոգելու մասին» (1838թ.), «Փարպի գյուղի հասարակության խնդրագիրը եկեղեցու գավթում ուսումնարան բացելու մասին» (1870թ.), «Երևանի հայոց կոնսիստորիայի հայտարարությունը՝ Փարպի գյուղի եկեղեցին վերանորոգելու թույլատվության մասին» (1874–1875թթ.), «Փարպեցի Աբրահամ Հարությունյանի որդուն

24 ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 1352:
25 ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 1380:
26 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 7228:
27 ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 7228, թ. 6:
28 ՀԱԱ, ֆ. 47, ց. 2, գ. 617:
29 ՀԱԱ, ֆ. 47, ց. 2, գ. 623:
30 ՀԱԱ, ֆ. 163, ց. 1, գ. 3759:

Էջմիածնի հոգևոր սեմինարիա ընդունելու մասին» (1842–1844 թթ.), «Փարպի գյուղում հասարակության խնդրանքով՝ հանգուցյալ ծխական քահանա Ստեփանի որդուն՝ Ծերունին, գյուղական քահանա ձեռնադրելու մասին» (1853 թ.) և այլ բազմաթիվ վավերագրեր: Մեծ թվով փաստաթղթեր են պահպանվել նաև գյուղի ծխական-եկեղեցական դպրոցի գործունեության մասին, որը հիմնվել է 1879 թ. և կոչվել Ղազար Փարպեցու անունով: Պահպանվել են նաև Փարպի գյուղի 1853–1899 թթ. չափաբերական մատյանները, ինչպես նաև Ցարական Ռուսաստանի կողմից անցկացրած տարբեր տարիների մարդահամարները: Իսկ խորհրդային առաջին տարիներին կազմվել են տնաթերթիկները:

Армен Асатрян
Научно-исследовательский центр историко-культурного наследия,
научный сотрудник,
asatryan.armen@inbox.ru

ПАРПИ В АРХИВНЫХ ДОКУМЕНТАХ

О селе сохранились многочисленные документы в различных фондах Национального архива Армении. Сохранились документы: «О ремонте церкви села Парпи на средства Карапета Костандянова из Еревана» (1838), «Прошение общества села Парпи об открытии школы в церковном дворе» (1870), «Заявление Армянской консистории Еревана о разрешении ремонта церкви села Парпи» (1874–1875), «О приеме сына Авраама Арутюняна из Парпи в духовную семинарию Эчмиадзина» (1842–1844), «По ходатайству и просьбе сельчан для служения в сельской церкви Парпи был назначен сын покойного приходского священника Степана Церун» (1853) и многие другие документы. Сохранилось также большое количество документов о деятельности сельской приходско-церковной школы, которая была основана в 1879 году и названа в честь Газара Парпеци. Сохранились также обмерные журналы села Парпи 1853–1899 годов, переписи населения, проводившиеся царской Россией в разные годы. А в первые годы советской власти уже составлялись домовые списки.

Armen Asatryan
Scientific Research Center of Historical and Cultural Heritage, Researcher
asatryan.armen@inbox.ru

PARPI IN ARCHIVAL DOCUMENTS

Extensive archival materials pertaining to Parpi are preserved in various collections of the National Archives of Armenia. Among the documented records are: the 1838 account of the renovation of the village church funded by Karapet Kostandianov of Yerevan; a 1870 petition by the local community to establish a school within the churchyard; the 1874–1875 statement of the Armenian Consistory of Yerevan granting permission to renovate the church; the 1842–1844 admission request for Abraham Harutyunyan's son to the theological seminary of Etchmiadzin; and the 1853 petition to ordain Tserun, son of the late parish priest Stepan, as the village priest.

Numerous other documents shed light on the establishment and operation of the village's parish school, founded in 1879 and named after the historian Ghazar Parpetsi. Additionally, property measurement registers from 1853 to 1899 and various population censuses conducted under Tsarist Russian rule have been preserved. In the early Soviet period, detailed residential listings were also compiled, contributing further to the documentary heritage of the village.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ 2013
Ավետիսյան Է., Իմ գյուղաշխարհը՝ Փարպին, Երևան, «Էդիտ պրինտ» հրատ., 2013, 712 էջ:

ՓԻԼԻՊՈՍՅԱՆ 2005
Փիլիպոսյան Ռ., Փարպի (Փարպի գյուղի պատմությունը), Երևան, 2005, 254 էջ:

ՀԱԱ, ֆոնդ 47, ցուցակ 2, գործ 617
Փարպի գյուղի 1853–1879 թթ. չափաբերական մատյանները:

ՀԱԱ, ֆոնդ 47, ցուցակ 2, գործ 623
Փարպի գյուղի 1880–1899 թթ. չափաբերական մատյանները:

ՀԱԱ, ֆոնդ 48, ցուցակ 1, գործ 340
Փարպի գյուղի ծխական-եկեղեցական դպրոցի գործունեության վերաբերյալ վավերագիր (1910 թ.):

ՀԱԱ, ֆոնդ 56, ցուցակ 1, գործ 320 (թերթ 1–5)
«Երևանցի Կարապետ Կոստանդիանովի միջոցներով Փարպի գյուղի եկեղեցին վերանորոգելու մասին» (1838թ.):

ՀԱԱ, ֆոնդ 56, ցուցակ 1, գործ 1228
«Փարպեցի Աբրահամ Հարությունյանի որդուն Էջմիածնի հոգևոր սեմինարիա ընդունելու մասին» (1842–1844 թթ.):

ՀԱԱ, ֆոնդ 56, ցուցակ 1, գործ 3012
«Փարպի գյուղում հասարակության խնդրանքով՝ հանգուցյալ ծխական քահանա Ստեփանի որդուն՝ Ծերունին, գյուղական քահանա ձեռնադրելու մասին» (1853 թ.):

ՀԱԱ, ֆոնդ 56, ցուցակ 1, գործ 5620 (թերթ 4–5)
Փարպի գյուղի հասարակությանը խնդրագիրը Աշտարակի գործակալ Սարգիս ավագ քահանա Կարապետյան Բզնունյանցին՝ գյուղում ծխական ուսումնարան բացելու խնդրանքով (1870 թ. մարտի 28):

ՀԱԱ, ֆոնդ 56, ցուցակ 1, գործ 6785
Փարպի գյուղի բնակիչ Հովսեփ Հայրապետյանին հոգևոր կոչում տալու մասին (1877–1878 թթ.):

ՀԱԱ, ֆոնդ 56, ցուցակ 1, գործ 7228 (թերթ 6)
Փարպի գյուղի բնակիչ հրեա Ռահիմ Դանիելյանի կողմից հայկական դավանություն ընդունելու մասին գործը (1879 թ. հոկտեմբեր):

ՀԱԱ, ֆոնդ 56, ցուցակ 1, գործ 6536 (թերթ 1–2)
«Երևանի հայոց կոնսիստորիայի հայտարարությունը՝ Փարպի գյուղի եկեղեցին վերանորոգելու թույլատվության մասին» (10 դեկտեմբերի 1874 թ. – 3 հունվարի 1875 թ.):

ՀԱԱ, ֆոնդ 56, ցուցակ 16, գործ 253, թերթ 39, 55
Քահանաներ ձեռնադրելու և տեղափոխելու մասին վավերագիր (1898 թ.):

ՀԱԱ, ֆոնդ 163, ցուցակ 1, գործ 3759
Խորհրդային առաջին տարիներին կազմված տնաթերթիկները:

ՀԱԱ, ֆոնդ 409, ցուցակ 1, գործ 3153, թերթ 16
Հոգևորականների մասին վավերագիր (1925 թ.):

ՀԱԱ, ֆոնդ 1063, ցուցակ 1, գործ 533
Լուսժողկոմատի կազմակերպած Արագածի գավառագիտական արշավախմբի (էքսպեդիցիա) հաշվետվությունը (1939 թ. օգոստոս):

ՀԱԱ, ֆոնդ 1063, ցուցակ 1, գործ 1351
Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի կողմից Աշտարակի շրջանում կատարված հնագիտա-հետազոտական աշխատանքների հաշվետվությունը (1948 թ.):

ՀԱԱ, ֆոնդ 1063, ցուցակ 1, գործ 1352
Հովսեփ Եղիազարյանի գլխավորությամբ Փարպի և շրջակա գյուղեր այցելած գիտական արշավախմբի զեկուցագիրը (1949 թ.):

ՀԱԱ, ֆոնդ 1063, ցուցակ 1, գործ 1380
Հովսեփ Եղիազարյանի կողմից Փարպի այցելության զեկուցագիրը հուշարձանների պահպանության հսկիչի աշխատանքը ստուգելու մասին (1938 թ. ապրիլի 23):



ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 320



ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 320



ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 320



ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 5620



ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 6536



ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 6536

Համո Սուքիասյան
պ. գ. թ.
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, ավագ գիտաշխատող, դոցենտ
hamosukiasyan@gmail.com

ՓԱՐՊԻ ԳՅՈՒՂԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ (19–20-ՐԴ ԴԴ.)

Նախաբան

Փարպին Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Թեև մատենագրական աղբյուրներում այն հիշատակվում է 5-րդ դարից, այդուհանդերձ բնակեցված է եղել շատ ավելի վաղ ժամանակներից: «Աշխարհացույց»-ի համաձայն՝ այն գտնվել է Մեծ Հայքի Այրարատ նահանգի Արագածոտնի գավառի սահմաններում: Հին շրջանում և միջնադարում գյուղը շարունակաբար Հայաստանի տարածքում գոյություն ունեցած հայկական թագավորությունների մաս է կազմել: 11-րդ դ. կեսերին Անիի Բագրատունյաց թագավորության անկումից հետո այն մի քանի դար օտար տիրապետության ներքո է գտնվել:

Ռուսական կայսրության շրջանում

Պարսկական տիրապետության վերջին շրջանում՝ 18-րդ դ. վերջին և 19-րդ դարի սկզբին, Փարպի գյուղի տարածքը մտնում էր Երևանի խանության Կարբիբասարի մահալի (կենտրոնը՝ Աշտարակ) մեջ: Գրեթե ամբողջությամբ գյուղատնտեսության վրա հիմնված խանությունում վարչական բաժանումներ կատարելիս հաշվի էր առնվում ոռոգման համակարգը: Ըստ այդմ էլ՝ Քասաղ (Կարբի) գետի ավազանում գտնվող բնակավայրերը կենտրոնացվել էին մեկ վարչատարածքային միավորի մեջ: Կարբիբասարի մահալն արևելքից սահմանակցում էր Զանգիբասարի, արևմուտքից՝ Սարդարապատի, հյուսիսից՝ Սեյիդլի-Ախսախլի մահալներին: Մահալները կառավարում էին խանի կողմից նշանակված կառավարիչները, որոնք միաժամանակ վարչական և ոստիկանական գործառույթներ էին իրականացնում[1]: 19-րդ դ. 30-ական թվականներին Արևելյան Հայաստանը գրավելուց հետո Ռուսական կայսրությունն առժամանակ պահպանեց վարչատարածքային բաժանման նշյալ համակարգը:

Արևելյան Հայաստանում ռուսական արքունիքը ոչ թե ինքնավար հայկական պետություն ստեղծեց, ինչն ակնկալում էին հայ ազատագրական շարժման

[1] Шопен 1852, 445; Գրիգորյան 1958, 33–35:

գործիչները (Խ. Լազարյան, Ա. Խուդաբաշյան, Հ. Արղության և ուրիշներ), այլ միանգամայն այլ վարչատարածքային միավոր կազմավորեց: Նիկոլայ I ցարի 1828 թ. մարտի 21-ի հրամանագրով կայսրության կազմում, որպես առանձին վարչական միավոր, կազմակերպվեց Հայկական մարզը: Նորաստեղծ մարզի սահմաններում ընդգրկվեցին Երևանի ու Նախիջևանի նախկին խանությունները և Օրդուբադի գավառը: Սրանք իրենց հերթին բաժանվում էին մահալների: Թեև Հայկական մարզը գոյություն ունեցավ ընդամենը 12 տարի (մինչև 1840 թ.), այդուհանդերձ հայահավաքման տեսակետից կարևոր նշանակություն ունեցավ[2]: Նա դարձավ այն կորիզը, որի շուրջը հետագայում ստեղծվեց անկախ հայկական պետությունը:

Ռուսական կայսրությանը միանալու շրջանում Արևելյան Հայաստանի բնակավայրերի վերաբերյալ վիճակագրական ընդարձակ տեղեկություններ է պարունակում ռուս պատմաբան, ազգագրագետ Իվան Շոպենի (1798–1870) «Պատմական հուշարձան Հայկական մարզի կացության մասին՝ այն Ռուսական կայսրությանը միանալու ժամանակաշրջանում» աշխատությունը, ուր նկարագրվում է Հայկական մարզի վարչական ու տնտեսական համակարգը, բնակավայրերը, դրանց բնակչության թիվն ու ազգային, սոցիալական կազմը, ապրելակերպը, բնական հարստություններն ու հուշարձանները: Ռուսական տիրապետության հաստատման շրջանում Երևանի խանության բնակավայրերի զգալի մասն ավերված ու անբնակ էր: Հայաստանի տարածքում օտարների վարած պատերազմների պատճառով հայ բնակչությունը գաղթել կամ փախուստի էր դիմել: Այսպես՝ Ի. Շոպենի հաղորդման համաձայն, 1831 թ. Հայկական մարզի 831 բնակավայրից 310-ն ավերակ էր: Երևանի գավառի Կարբիբասարի մահալում կար 9 ավերակ բնակավայր: Մահալի մեջ ընդգրկված Փարպի գյուղը բնակեցված էր[3]: 1831 թ. ցուցակագրության համաձայն այն ուներ 185 բնակիչ (որից 157-ը՝ հայ, 28-ը՝ մուսուլման)[4]:

Ռուսական տիրապետության հիմնական ժամանակամիջոցում Արևելյան Հայաստանն ընդգրկված էր Կովկասի փոխարքայության (1844–1917 թթ.) մեջ: 1840 թ. Այսրկովկասում ստեղծվում է Վրացա-Իմերեթական նահանգ և Կասպիական մարզ: Հայկական մարզի տարածքն ընդգրկվում է Վրացա-Իմերեթական նահանգի մեջ: 1849 թ. կազմակերպվում է Երևանի նահանգը: 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին Երևանի նահանգի մեջ մտնում էին Երևանի, Նախիջևանի, Շարուր-Դարալագյազի, Էջմիածնի, Սուրմալուի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի գավառները:

Այժմ տեսնենք, թե Փարպին ինչպիսի վարչական պատկանելություն և ժողովրդագրական պատկեր ուներ: Վարչական կառավարումը դյուրին իրականացնելու նպատակով Ռուսական կայսրությունում գյուղական մանր ու մեծ բնակավայրերը միավորում էին գյուղական հասարակությունների, իսկ այս

2 Պարսամյան 1947, 137–138:
3 Шопен 1852, 502, 510–517:
4 Կորկոտյան 1932, 108:

վերջինները՝ ոստիկանական տեղամասերի մեջ, որոնք էլ գավառների մեջ էին ընդգրկվում: 1886 թ. ռուսական իշխանությունների կողմից Այսրկովկասում անցկացված վիճակագրության համաձայն՝ Փարպի գյուղն ընդգրկված էր Երևանի նահանգի Էջմիածնի գավառի երրորդ ոստիկանական տեղամասի (Աշտարակ) Բյուրականի (Պիրագան) գյուղական հասարակության մեջ: Բացի Փարպիից, այստեղ ընդգրկված էին նաև Ագարակ, Աղձք, Տեղեր, Ինաքլու (այժմ՝ Անտառուտ), Քյոթակլու (Առաջին աշխարհամարտից հետո լքվել է), Ղոշաբուլաղ (1918–1920 թթ. լքվել է), Նազրվան (այժմ՝ Ղազարավան), Թաքիա (այժմ՝ Բազմաղբյուր), Օրգով և Բյուրական գյուղերը: Փարպին ուներ 112 տուն, 739 բնակիչ, որից 91 տուն, 599 բնակիչը հայեր էին, 21 տուն, 140 բնակիչը՝ թուրքեր[5]: Ռուսական կայսրության գոյության մայրամուտին Փարպին Ագարակ, Անղրսաղ (1959 թ. լքվել է), Նազրվան, Պերսի (հետագայում՝ Բուրավետ, 1963 թ. լքվել է), Թաքիա գյուղերի հետ ընդգրկված էր Երևանի նահանգի Էջմիածնի գավառի երկրորդ ոստիկանական տեղամասի (Աշտարակ) Փարպիի գյուղական հասարակության մեջ[6]: Հայաստանի Հանրապետության օրոք (1918–1920 թթ.) Փարպին մտել է Էջմիածնի գավառի Աշտարակի գավառամասի մեջ:

Խորհրդային իշխանության տարիներին

1918 և 1920 թթ. դեպի Անդրկովկաս թուրքական արշավանքների և 1921 թ. քաղաքացիական կռիվների պատճառով տուժած Հայաստանը տնտեսապես վերաշինելու նպատակով կարևոր խնդիր էր համարվում ավարտուն վարչական բաժանումներ կատարելը: Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ 1920 թ. դեկտեմբերի վերջերին, հանրապետությունը ժամանակավորապես բաժանվել էր վեց գավառի՝ Երևանի, Էջմիածնի, Ղարաքիլիսայի, Դիլիջանի, Նոր Բայազետի, Դարալագյազի: Արդեն 1921 թ. հուլիսի 20-ին Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ՀՍԽՀ) ժողովրդական կոմիսարների խորհրդի հրատարակած «ՀՍԽՀ վարչական վերաբաժանումների մասին» դեկրետով հանրապետությունը բաժանվեց ութ գավառի: Դրանցից Էջմիածնի գավառը բաղկացած էր Ջանգիբասարի, Սամաղարի, Աշտարակի, Ապարանի, Սարդարապատի, Փարաքարի գավառակներից: Գավառակների սահմանների փոփոխումը, կենտրոնների որոշումը, գավառների միջև դրանց վերաբաժանումը, նոր կենտրոնների որոշումը և գավառից կամ գավառակից քաղաքների առանձնացումը կատարում էր Հայաստանի ժողկոմխորհը՝ ներքին գործերի ժողկոմատի առաջարկությամբ և համապատասխան հեղկոմի միջնորդությամբ: ՆԳԺԿ-ին էր վերապահված նաև ըստ գավառակների հանրապետության բնակավայրերի ցուցակի կազմումը[7]: 1922 թ. աշնանը Խորհրդային Հայաստանում կատարված գյուղատնտեսական ցուցակագրության ժամանակ Աշտարակի գավառակի (կենտրո-

5 Свод 1893, [III. Города и уезды Эриванской губернии].

6 Кавказский 1916, 133 (отдел статистический).

7 ՀՍԽՀ դեկրետների 1921, պրակ II, 83–84:

նը՝ Աշտարակ) մեջ ընդգրկված էր 33 բնակավայր, այդ թվում՝ Փարպի գյուղը: Այն ուներ 251 տուն բնակչություն[8]:

Փարպի գյուղի վերը նշված վարչատարածքային պատկանելությունը պահպանվեց մինչև 1920-ական թվականների վերջին Խորհրդային Հայաստանում իրականացված նոր վարչական բաժանումը: 1929 թ. ապրիլին կայացած ՀամԿ(բ)Կ 16-րդ կոնֆերանսը որոշեց Խորհրդային Միության կազմի մեջ մտնող հանրապետությունների և մարզերի տնտեսական զարգացման նպատակով վարչատարածքային փոփոխություններ կատարել: Նոր վարչական միավորներ կազմակերպելիս հիմք էր ընդունվելու արտադրական սկզբունքը, տարածքի տնտեսական զարգացման հեռանկարը: Խորհրդային մյուս հանրապետությունների օրինակով Խորհրդային Հայաստանում ևս վարչատարածքային փոփոխություններ կատարող հանձնաժողով ստեղծվեց (ղեկավար՝ Մարտին Սահակյան)[9]: Շրջանացման մասին ՀՍԽՀ կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահության 1929 թ. հուլիսի 26-ի որոշմամբ հանրապետությունը բաժանվեց հինգ գավառի՝ Երևանի, Լենինականի, Լոռու, Սևանի և Զանգեզուրի: Մասնավորապես Երևանի գավառը կազմված էր տասը շրջանից: Դրանցից Աշտարակի շրջանի (կենտրոնը նույնանուն գյուղն էր) մեջ ընդգրկված բնակավայրերից մեկն էլ Փարպի գյուղն էր: Սույն որոշումը կյանքի կոչվեց հոկտեմբերի 1-ից[10]:

Այդուհանդերձ, վերը նշված փոփոխությունն ընդամենը մեկ տարվա կյանք ունեցավ, քանի որ այն սպասված արդյունքը չունեցավ: «Կուսակցական և խորհրդային ապարատը գյուղին, կոլտնտեսություններին ու մասսաներին մոտեցնելու» հիմնավորմամբ՝ 1930 թ. ամռանը հանրապետությունում առաջ բերվեց գավառների վերացման, շրջանների խոշորացման Հայպետպլանի նախագիծը: ՀՍԽՀ կենտգործկոմը և ժողկոմխորհը 1930 թ. օգոստոսի 5-ին համատեղ որոշում ընդունեցին գավառները վերացնելու մասին, որով ստեղծվելու էր վարչատարածքային միավորների երկաստիճան համակարգ՝ գյուղական խորհուրդ և շրջան: Կենտգործկոմի նախագահության 1930 թ. սեպտեմբերի 9-ի որոշմամբ գավառների փոխարեն կազմակերպվեց 25 շրջան: Փարպին ընդգրկվեց Աշտարակի նորաստեղծ շրջանի (կենտրոնը՝ Աշտարակ) կազմում[11]: 1931 թ. Աշտարակի շրջանի տարածքը 853 քառ. կմ էր, այն ներառում էր 42 գյուղ՝ 7097 տուն, 33735 բնակչությամբ: Այդ ժամանակ Փարպին ուներ 270 տուն, 1193 բնակիչ, որից արական սեռի՝ 611, իգական սեռի՝ 582: Դրանցից 1000-ը հայեր էին, 93-ը՝ թուրքեր[12]:

Հետպատերազմյան առաջին տարիներին Փարպի գյուղն ընդգրկված էր նույնանուն գյուղխորհրդի մեջ: 1948 թ. հունվարի 1-ի դրությամբ Աշտարակի շրջանի մեջ ընդգրկված էր 25 գյուղխորհուրդ: Փարպիի գյուղխորհրդի տարածքում

8 Ցուցակ 1923, 34–37:

9 Հարությունյան 2015, 13–15:

10 Որոշում 1929, N 177, 2:

11 ՀՍԽՀ օրենքների 1930, բաժին I, N 10, 365–366; ՀՍԽՀ օրենքների 1930, բաժին I, N 11, 386–387:

12 ՀՍԽՀ բնակավայրերի 1936, 7, 20:

ներառված էր միայն նույնանուն բնակավայրը[13]: Ընդհանրապես, հանրապետությունում մեծ թիվ էին կազմում մանր գյուղական խորհուրդները: Իշխանությունները համարում էին, որ գյուղխորհուրդների խոշորացումը կնպաստի տեղական կառավարման արդյունավետության բարձրացմանը, վարչարարության նվազեցմանը: Արդեն 1954 թ. ամռանը Հայկական ԽՍՀ-ում լայնածավալ կերպով գյուղական խորհուրդների խոշորացում կատարվեց: Գյուղխորհուրդների խոշորացման մասին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1954 թ. հուլիսի 3-ի հրամանով Աշտարակի շրջանում Փարպիի և Բազմաղբյուրի գյուղխորհուրդների միավորմամբ կազմակերպվեց Փարպիի գյուղական խորհուրդը՝ Փարպի, Բազմաղբյուր, Նազրվան և Բուրավետ գյուղերի կազմով: Կենտրոնը Փարպին էր[14]: Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության տեղեկատու բաժնի հրատարակած վարչատարածքային վիճակագրական տեղեկատուի համաձայն՝ 1971 թ. մայիսի 1-ի դրությամբ Փարպիի գյուղխորհրդի մեջ ընդգրկված էին Փարպի, Բազմաղբյուր և Նազրվան գյուղերը[15]: Տեղեկատուում Բուրավետ գյուղը չկար, որը պայմանավորված էր նրանով, որ 1963 թ. այն լքվել էր: Այս բաժանումը պահպանվեց մինչև խորհրդային իշխանության ավարտը[16]:

Հայաստանի Հանրապետության օրոք

ՀՀ Գերագույն խորհրդի նախագահության 1991 թ. փետրվարի 14-ի՝ «Մեկից ավելի բնակավայր ընդգրկող ժողովրդական պատգամավորների ավանային և գյուղական խորհուրդները տարանջատելու և ժողովրդական պատգամավորների նոր ավանային և գյուղական խորհուրդներ կազմելու մասին» հրամանագրով Աշտարակի շրջանում գյուղխորհուրդների ապախոշորացում կատարվեց: Փարպիի գյուղխորհրդից անջատվեցին և նոր գյուղական խորհուրդներ կազմակերպվեցին Բազմաղբյուր և Նազրվան գյուղերում: Այդուհետ Փարպիի գյուղխորհրդի կազմում մնաց միայն նույնանուն բնակավայրը[17]:

1994 թ. մայիսին Արցախյան պատերազմում զինադադարի հաստատումից հետո ՀՀ իշխանությունները, տնտեսության կայունացմանը զուգընթաց, այլ հարցերի թվում ձեռնամուխ եղան խորհրդային շրջանից ժառանգած տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի վերափոխմանը: 1995 թ. հուլիսի 5-ին ՀՀ Սահմանադրության ընդունումից հետո այս խնդիրների հստակեցումը գործնական հարթություն տեղափոխվեց: 1995 թ. նոյեմբերի 7-ին ՀՀ Ազգային ժողովի ընդունած վարչատարածքային բաժանման մասին օրենքի համաձայն հանրապետության տարածքը բաժանվեց տասը մարզի (ավելացրած մարզի կարգավիճակ ունեցող Երևան քաղաքը): Փարպի գյուղն ընդգրկվեց Աշտարակի, Ապարանի, Արագածի և Թալինի վարչական շրջանների միավորմամբ ձևավորված Արագածոտնի մարզի (մարզկենտրոնը՝ Աշտարակ) կազ-

---

13 Հայկական ՍՍՌ 1948, 17:
14 Հայկական ՍՍՌ 1954, N 5, 9:
15 Հայկական ՍՍՌ 1971, 24:
16 Հայկական ՍՍՌ 1988, 18:
17 ՀՀ Գերագույն 1991, N 3, 27:

մում: Մարզի մեջ ներառվեց երեք քաղաքային և 116 գյուղական բնակավայր: Սույն օրենքով հաստատվեցին նաև մարզերի մեջ ընդգրկված բնակավայրերի ցանկը և դրանց վարչական սահմանները: Մարզի հարավարևմտյան մասում գտնվող Փարպի գյուղական համայնքը հյուսիս-արևելքից սահմանակցեց Ղազարավանին, արևելքից՝ Կարբիին, հարավ-արևմուտքից՝ Աշտարակ քաղաքին, հարավից՝ Օշականին և Ոսկեվազին, արևմուտքից՝ Ագարակին, հյուսիս-արևմուտքից՝ Բազմաղբյուրին[18]:

Վարչատարածքային ռեֆորմին հաջորդեց քաղաքային, ավանային և գյուղական խորհուրդների լուծարումը և տեղական ինքնակառավարման նոր մարմինների ձևավորումը: 1996 թ. հունիսի 30-ին ընդունվեց «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը[19]: Այդուհետ Փարպի գյուղում անցկացվեցին համայնքի ղեկավարի և ավագանու անդամների ընտրություններ:

Տեղական ինքնակառավարման համակարգում առկա մասնատվածությունը վերացնելու և համայնքային ֆինանսական միջոցներն արդյունավետ օգտագործելու նպատակով 2013 թ. Հայաստանի Հանրապետությունում սկսեցին բազմաբնակավայր համայնքներ ձևավորելու նպատակով աշխատանքներ իրականացնել: Արդեն 2015 թ. սկսվեց համայնքների խոշորացման գործընթացը[20]: Հաջորդ տարիներին այն մեծ ծավալներ ընդունեց:

Հանրապետությունում ընթացող համայնքների խոշորացման գործընթացում ՀՀ Ազգային ժողովը 2021 թ. սեպտեմբերի 24-ին փոփոխություններ կատարեց «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքում, որով հանրապետության մարզերում նոր խոշորացված համայնքներ կազմակերպվեցին: Ի շարս այլ համայնքների՝ Արագածոտնի մարզում կազմակերպվեց Աշտարակ խոշորացված համայնքը: Այն ընդգրկեց 30 բնակավայր՝ Աշտարակ քաղաքը և Ագարակ, Աղձք, Անտառուտ, Ավան, Արագածոտն, Արուճ, Արտաշավան, Բազմաղբյուր, Բյուրական, Դպրևանք, Լեռնարոտ, Կարբի, Կոշ, Ղազարավան, Նոր Ամանոս, Նոր Եդեսիա, Նոր Երզնկա, Ոսկեհատ, Ոսկեվազ, Սաղմոսավան, Սասունիկ, Վերին Սասունիկ, Տեղեր, Ուշի, Ուջան, Փարպի, Օհանավան, Օշական, Օրգով գյուղերը[21]: 2022 թ. հունվարի 1-ի դրությամբ Փարպի գյուղի մշտական բնակչության թիվը 2450 էր[22]:

Ամփոփում

19–20-րդ դդ. Փարպի գյուղի պատմությունը սերտորեն կապված է եղել մոտակա Աշտարակի հետ: Ռուսական տիրապետության շրջանում այն սկզբում ընդգրկված էր Երևանի նահանգի Էջմիածնի գավառի երրորդ ոստիկանական տեղամասի (Աշտարակ) Բյուրականի գյուղական հասարակության կազմում, ապա՝ Փարպիի գյուղական հասարակության մեջ: 1918–1920 թթ.՝ Հայաստանի

---

18 ՀՀ օրենքը 1995, https://arlis.am/documentview.aspx?docid=59732; Զաքարյան 2018, 52:

19 ՀՀ օրենքը 1996, https://www.arlis.am/

20 Ալթունյան 2021, 38–39:

21 ՀՀ օրենքը 2021, https://www.arlis.am/documentview.aspx?docid=156516

22 Հայաստանի Հանրապետության Արագածոտնի 2022, 17:

Հանրապետության գոյության ընթացքում, գյուղը պահպանեց նույն վարչատարածքային կարգավիճակը: Խորհրդային իշխանության հաստատումից հետո Փարպին սկզբում ընդգրկվեց Էջմիածնի գավառի Աշտարակի գավառակի մեջ (1921–1930 թթ.), ապա՝ Աշտարակի շրջանի կազմում (1930–1995 թթ.): 1995 թ. ՀՀ-ում իրականացված վարչատարածքային փոփոխությունների արդյունքում Աշտարակի շրջանի մյուս գյուղերի հետ Փարպին դարձավ առանձին համայնք՝ ընդգրկվելով Արագածոտնի մարզում: 2021 թ. գյուղն ընդգրկված է Աշտարակ խոշորացված համայնքի մեջ:

Амо Сукиасян
к. и. н.
Институт истории НАН РА, старший научный сотрудник, доцент
hamosukiasyan@gmail.com

СЕЛО ПАРПИ В КОНТЕКСТЕ АДМИНИСТРАТИВНО-ТЕРРИТОРИАЛЬНЫХ ИЗМЕНЕНИЙ АРМЕНИИ (XIX–XX ВВ.)

В статье рассматривается история села Парпи в контексте административно-территориальных изменений, происходивших в Армении с XIX по XX вв. На основе разных источников и административных актов прослеживаются этапы включения села в различные административные единицы в периоды российского владычества, Первой Республики Армения и советской власти. Особое внимание уделяется статусу села в годы административной реформы 1995 года и последующему включению Парпи в укрупнённую общину Аштарак в 2021 году. Исследование выявляет устойчивость локальной идентичности села на фоне трансформации государственных и административных границ.

Hamo Sukiasyan
PhD
Institute of History of the NAS of the RA, Senior Researcher,
Associate Professor
hamosukiasyan@gmail.com

PARPI VILLAGE IN THE CONTEXT OF ADMINISTRATIVE-TERRITORIAL CHANGES IN ARMENIA (19TH–20TH CENTURIES)

This article examines the history of the village of Parpi in the context of administrative-territorial changes that took place in Armenia from the 19th to the 20th centuries. Drawing on archival sources and official administrative documents, the study traces the stages of the village's incorporation into various administrative units during the periods of Russian rule, the First Republic of Armenia, and the Soviet era. Particular attention is paid to the village's status during the administrative reform of 1995 and its subsequent inclusion in the enlarged Ashtarak community in 2021. The study highlights the resilience of Parpi's local identity amidst the transformation of state and administrative boundaries.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԱԼԹՈՒՆՅԱՆ 2021
Ալթունյան Կ., Համայնքների խոշորացումը Հայաստանի Հանրապետությունում, «Գիտական Արցախ», 2021, N 1, էջ 35–46:

ԳՐԻԳՈՐՅԱՆ 1958
Գրիգորյան Վ. Ռ., Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում (1780–1800), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958, 228 էջ:

ՋԱՔԱՐՅԱՆ 2018
Ջաքարյան Լ. Ս., Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի ձևավորումն ու զարգացումը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Մետրո» հրատ., 2018, 194 էջ:

ԿՈՐԿՈՏՅԱՆ 1932
Կորկոտյան Զ., Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831–1931), Երևան, Պետհրատ, 1932, 182 էջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ… 2022
Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզը թվերով. 2022, վիճակագրական ժողովածու, Երևան, 2022, 35 էջ, https://armstat.am/file/doc/99533598.pdf (այց.՝ 26.04.2025 թ.):

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ 1954
Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի տեղեկագրեր, 5 հուլիսի 1954, N 5, էջ 5–23:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ 1948
Հայկական ՍՍՌ վարչա-տերիտորիալ բաժանումը առ 1 հունվարի 1948 թ., Երևան, Հայպետհրատ, 1948, 87 էջ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ 1971
Հայկական ՍՍՌ վարչա-տերիտորիալ բաժանումը առ 1-ը մայիսի 1971 թ., Երևան, «Հայաստան» հրատ., 1971, 274 էջ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ 1988
Հայկական ՍՍՌ վարչա-տերիտորիալ բաժանումը առ 1-ը օգոստոսի 1988 թ., Երևան, «Հայաստան» հրատ., 1988, 211 էջ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 2015
Հարությունյան Հ. Մ., Նոր Բայազետի գավառը 1920–1930 թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, 279 էջ:

ՀՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ 1991
ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, 15 փետրվարի 1991, N 3, էջ 24–28:

ՀՀ ՕՐԵՆՔԸ 1995
ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին», 1995 թ., https://arlis.am/documentview.aspx?docid=59732 (այց.՝ 26.04.2025 թ.):

ՀՀ ՕՐԵՆՔԸ 2021
ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, 2021 թ., https://www.arlis.am/documentview.aspx?docid=156516 (այց.՝ 26.04.2025 թ.):

ՀՀ ՕՐԵՆՔԸ 1996
ՀՀ օրենքը Տեղական ինքնակառավարման մասին, 1996 թ., https://www.arlis.am/ (այց.՝ 26.04.2025 թ.):

ՀՍԽՀ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ 1936
ՀՍԽՀ բնակավայրերի ցուցակ, Երևան, Հայկենտգործնկոմի հրատ., 1936, 88 էջ:

ՀՍԽՀ ԴԵԿՐԵՏՆԵՐԻ 1921, ՊՐԱԿ II
ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու (1921 թ. ապրիլի 2-օգոստոսի 1), պրակ II, Էջմիածին, 1921, 100 էջ:

ՀՍԽՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ 1930, ԲԱԺԻՆ I, N 10
ՀՍԽՀ օրենքների և կարգադրությունների ժողովածու, Երևան, 1930, բաժին I, N 10, էջ 365–366:

ՀՍԽՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ 1930, ԲԱԺԻՆ I, N 11
ՀՍԽՀ օրենքների և կարգադրությունների ժողովածու, Երևան, 1930, բաժին I, N 11, էջ 386–392:

ՈՐՈՇՈՒՄ 1929, N 177
Որոշում ՀՍԽՀ կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահության ՀՍԽՀ տերիտորիայի շրջանացման մասին, «Խորհրդային Հայաստան», Երևան, 6 օգոստոսի, 1929, N 177, էջ 2:

ՊԱՐՍԱՄՅԱՆ 1947
Պարսամյան Վ. Ա., Ա. Ս. Գրիբոեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1947, 280 էջ:

ՑՈՒՑԱԿ 1923
Ցուցակ Խորհրդային Հայաստանի բնակավայրերի, Երևան, ՀՍԽՀ վիճակեևտվարի հրատ., 1923, 84 էջ:

КАВКАЗСКИЙ 1916
Кавказский календарь на 1917 год, Отдел статистический, Тифлис, Гл. упр. Кавказ. наместника, 1916, 128, 368, 1075, 98 с.

СВОД 1893
Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г., Тифлис, Тип. И. Мартиросианца, 1893, 899 с.

ШОПЕН 1852
Шопен И., Исторический памятник состояния Армянской области в эпоху её присоединения к Российской империи, Санкт-Петербург, Тип. Имп. Акад. Наук, 1852, 1232 с.

Դավիթ Դավթյան
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ,
կրտսեր գիտաշխատող,
davit.davtyan@iae.am

ՓԱՐՊԻ ԳՅՈՒՂԻ ԶԲՈՍԱԾՐՋԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԸ

Նախաբան

Հոդվածը նպատակ ունի վերհանել Փարպիի զբոսաշրջային ռեսուրսները, բացահայտել զբոսաշրջության մի շարք ուղղությունների առանձնահատկությունները, որոնք կնպաստեն գյուղում զբոսաշրջության զարգացմանը:

Փարպի գյուղը հարուստ է պատմա-ճարտարապետական հետաքրքիր հուշարձաններով, գյուղում առկա են նաև արտադրական ձեռնարկություններ, որոնք կարող են գրավիչ լինել զբոսաշրջիկների համար: Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում գյուղական տուրիզմը՝ իր ենթատեսակներով (բերքահավաք, գյուղական աշխատանք և զբաղմունքներ, տոներ և ավանդույթներ, գաստրոտուրիզմ): Գյուղում զարգացած է ռեկրեատիվ կամ պասիվ տուրիզմը (հանգստյան գոտիներ, հանգստյան տներ), փոխարենը բավական աշխատանք կա տանելու ակտիվ կամ արկածային տուրիզմի զարգացման ուղղությամբ:

Զբոսաշրջության ռեսուրսների գնահատումը, համապատասխան և նպատակաուղղված աշխատանքները կարող են նպաստել ոլորտի աշխուժացմանն ու զարգացմանը:

Փարպիում զբոսաշրջության զարգացման հիմնական ուղղությունները

Արագածոտնի մարզի Փարպի գյուղը Հայաստանի հնագույն գյուղերից է, որը հարուստ է զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ ռեսուրսներով: Այդ տեսանկյունից գյուղը հարկ է դիտարկել Շաղվերդ (Շաղվարդ) գետի վերին հոսանքի համապատկերում՝ հարևան Բազմաղբյուր և Ղազարավան գյուղերի հետ (նկ.1):

Փարպի գյուղում զբոսաշրջության զարգացման համար մեր կողմից հիմնական ուղղություններ են դիտարկվում ճանաչողական (առավելապես պատմամշակութային), գյուղական (ագրոտուրիզմ), ռեկրեացիոն կամ պասիվ և արկածային կամ ակտիվ տուրիզմի տեսակները:

Ճանաչողական տուրիզմը մեզանում առավելապես դիտարկվում է որպես մշակութային-ճանաչողական զբոսաշրջություն՝ պատմամշակութային հուշարձաններ այցելելու, բնության մեջ լինելու նպատակով, մինչդեռ դրա տար-

րերն առկա են նաև տուրիզմի մյուս տեսակներում: Այս առումով գյուղում ճանաչողական տուրիզմի հիմնական տեսակներ կարող են դիտվել նաև մշակութային և արդյունաբերական տուրիզմի տեսակները: Ընդ որում, մշակութային տուրիզմի ռեսուրս են ոչ միայն պատմաճարտարապետական հուշարձանները, այլև մշակութային տարբեր կառույցները, ինչպես նաև արվեստագետների արհեստանոցները (նկ. 2):

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Փարպի գյուղի և շրջակայքի պատմաճարտարապետական հուշարձանները (Ս. Գրիգոր, Ծիրանավոր, Թարգմանիչք, Ս. Գևորգ եկեղեցիներ, մահմեդական դամբարան), որոնք հիմնադրվել են վաղ միջնադարից (4–7-րդ դդ.) և անընդմեջ հասնում են մինչև ուշ միջնադար (17–18-րդ դդ.) (նկ. 3): Այս հուշարձանների կողքին գյուղում կան նաև մշակութային ուշագրավ կառույցներ՝ մշակույթի տուն, տարբեր արհեստանոցներ: Գյուղի մշակույթի տանը գործում է պարի խմբակ, դպրոցում անցկացվում են ըմբշամարտի պարապմունքներ, կա «Արմաթ» ինժեներական լաբորատորիա, ուշագրավ են նաև խաչքարագործ ու բրուտագործ վարպետների արհեստանոցները (նկ. 4):

Ճանաչողական նպատակներով կարելի է այցելել նաև արտադրական-արդյունաբերական ձեռնարկություններ (հյութեր արտադրող «ArLeAM», պահածոների «Վարգա-Ֆուդ» ընկերություններ, «Արագած» գինու-կոնյակի գործարան և այլն): Վերջին տարիներին մեծ տարածում ստացած տարբեր ինտենսիվ այգիներում ու ջերմոցներում («ՆԱԿԻ», «ArLeAM», «LGK Agro») կարելի է ծանոթանալ բերքի աճեցման պայմաններին ու նորագույն տեխնոլոգիաներին (նկ. 5):

Գյուղական տուրիզմը Հայաստանում, այդ թվում նաև Փարպի գյուղում, ունի մեծ ներուժ, սակայն ամենաքիչն է օգտագործվում: Զբոսաշրջության ոլորտում մեծ հետաքրքրություն են ներկայացնում գյուղական կյանքը՝ գյուղական զբաղմունքները և այլն, յուրահատուկ ավանդույթներն ու տոները: Ագրոտուրիզմը ենթադրում է նաև օրգանական գյուղմթերքի օգտագործում: Այս առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում բերքահավաքը, գյուղմթերքի վերամշակումը, գյուղական ուտեստների պատրաստումը (գաստրոտուրիզմ) և այլն:

Գյուղական տուրիզմի ամենահետաքրքիր բաղադրիչներից է խաղողի, խնձորի, ընկույզի, թթի բերքահավաքը: Փարպի գյուղի շրջակայքը հարուստ է վայրի բույսերով և սնկերով, ուստի փարպեցիները զբաղվում են նաև հավաքչությամբ: Գյուղացիները Արագածի մոտակա փեշերից հավաքում են ավելուկ, սիբեխ, գազարանուկ, սինձ, մասուր, ալոճ, սարի ծամոնի խեժ, տորոնի արմատներ, սնկի տարբեր տեսակներ, ինչպես նաև ձնծաղիկ, սարի լալա, կակաչ և այլն (նկ. 6): Այն հետաքրքրական է քաղաքներից ու արտերկրից ժամանած զբոսաշրջիկների համար, որոնք ցանկանում են իրենց ձեռքով պատրաստել տարբեր կերակուրներ, համտեսել գյուղի բարիքները (նկ. 7):

Փարպի գյուղի ուտեստներից ուշագրավ են քյալագյոշը, ավելուկով ճաշը, չրապուրը, գորովին (ոչխարի միս թոնրի մեջ), արշտան, ընկույզով լոբախաշուն ու ոսպախաշուն, կարտոֆիլով եփած կաղամբը (քյալամբաստին), բոզբաշը, մսով և պասուց տոլման, խաշիլը, ճմուռը, թոնրի խորովածը և կողաց կարտոֆիլը, բազմաթիվ թթուները (կաղամբ, լոլիկ և այլն):

Հարուստ է նաև աղանդերի և ոգելից խմիչքների տեսականին՝ թոնրի գաթա, կաթնահունց (անխորիզ գաթա թոնրի մեջ), չրեր (ծիրան, սալոր, թութ, տանձ), ալանի (լցոնած դեղձի չիր ընկույզով, մեղրով), քաղցր շարոց (սուջուխ), մուրաբաներ (ընկույզի, դդմի, ծիրանի, դդմիկի, վարդի թերթիկների), կոմպոտներ (ծիրանի, բալի, դեղձի), մրգօղիներ (թթի, խաղողի և այլն) (նկ. 8):

Զբոսաշրջիկները կարող են մասնակցել տարբեր աշխատանքների, յուրահատուկ արարողությունների ու տոների՝ հաց թխելու (լավաշ, գաթա), արշտա պատրաստելու, քաղցր շարոցի համար ընկույզ շարելու և շփոթ պատրաստելու, անասուն մորթելու, խաղողաթաղի, մատաղի, Զատկի (ձու ներկել, այց եկեղեցի), Համբարձման (ջանգյուլում, վիճակ), Մարտի 8-ի, ամանորի, հարսանիքի (փեսայի ծնողների՝ կոխ բռնելու ծես, հարսանիք գյուղի փողոցներում, հարսանեկան երգեր, կենացներ) մասնակցություն և այլն:

Գյուղում և շրջակայքում զբոսաշրջիկներին կարելի է առաջարկել բազմաթիվ զբաղմունքներ, որոնք գյուղացիների համար առօրեական են, սակայն քաղաքներից և արտերկրից ժամանածներին կարող են հետաքրքրել: Օրինակ, երկրագործությանն ու անասնապահությանն առնչվող զբաղմունքներ՝ մարգերի փորում, քաղհան, խոտհունձ, կենդանիների խնամք: Կարելի է առաջարկել ձկնորսություն Շաղվերդ գետում և այլն (նկ. 9):

Հայաստանում վերջին տարիներին մեծ աշխատանք է կատարվում գյուղական տուրիզմի զարգացման համար: Մեծ տարածում են ստացել տարատեսակ փառատոները, որոնք միշտ չէ, որ արտահայտում են տեղական նիստն ու կացը, սովորույթները և այլն: Փարպին իր հազարամյա ավանդույթներով, տեսարժան վայրերով, ինչպես նաև օրգանական մրգերով ու բանջարեղենով, ամենատարբեր գյուղական զբաղմունքներով ու գյուղական տուրիզմի բազմաթիվ տեսակներով կարող է ներկայանալ զբոսաշրջության օրեցօր զարգացող այս ձևաչափում (նկ. 10):

Ռեկրեատիվ տուրիզմը կամ առավել պասիվ հանգիստը հատկապես արձակուրդների ժամանակ այսօր թերևս զբոսաշրջության ամենազարգացած ճյուղն է գյուղում: Այստեղ գործում են հանգստյան բազմաթիվ գոտիներ, որտեղ առկա են տաղավարներ ու լողավազաններ: Հետզհետե շատանում են մեծ ու փոքր հանգստյան տները կամ B&B-ներ, որոնք հարմարավետ գյուղական տներ են, մեկ կամ մի քանի սենյականոց համարներով, առկա են մեկ կամ երկու տեղանոց մահճակալներ, սանհանգույց, հաճախ նաև աշխատասենյակ, բուխարի և այլն:

Մեկ տասնյակի հասնող *հանգստյան գոտիները (*«Փարպի հաուս», «Գետափնյա», «Աշոտ Երկաթ», «Փարպիի ձոր», «Բազմաղբյուրի ձոր», «Փարպի գարդեն», «Արծվի թևեր», «Շարդի գարդեն» և այլն), գտնվում են հիմնականում Շաղվերդ գետակի ձորում (նկ. 11): Այստեղ հանգստանում են հիմնականում Երևանից ու այլ քաղաքներից եկած դպրոցական, աշխատանքային տարբեր կոլեկտիվներ, իրականացվում են ամենատարբեր միջոցառումներ թե՛ գյուղացիների, թե՛ դրսից ժամանած այցելուների համար: Պետք է ասել, որ տուրիզմի այս տեսակը մեզանում ամենատարածվածներից է: Երաժշտությունը կարելի է կազմակերպել օդափոխվող փակ տարածքներում, որոնք կարելի է օգտագործել նաև ձմռան ամիսներին:

Գյուղում հանգստյան տների թիվը հետզհետե մեծանում է, որը բացատրվում է մայրաքաղաքին մոտ գտնվելու հանգամանքով: Այսօր Փարպիում և շրջակայքում գործող գյուղական տները («Լևոնս դոմ», «Վիլլա միմի», «Ելոու» և այլն), այցելուներին առաջարկում են կտրվել քաղաքային առօրյայից, առանձնանալ գյուղական միջավայրում, մաքուր օդի և օրգանիկ այգիների մեջ, շրջագայել գյուղի և շրջակայքի տեսարժան վայրերով (նկ. 12):

Արկածային տուրիզմը քիչ է զարգացած գյուղում և շրջակայքում, սակայն ունի մեծ ներուժ, և անհրաժեշտ աշխատանք իրականացելու դեպքում կարող է մեծ հետաքրքրություն առաջացնել դրսի և տեղացի զբոսաշրջիկների շրջանում: Այն կարող է լինել ցանկացած ճամփորդական գործունեություն, որը ներառում է երեք բաղադրիչ՝ ֆիզիկական ակտիվություն, մշակութային փոխանակում և բնության հետ կապ: Արկածային տուրիզմի տեսակներից գյուղում կարող է զարգանալ *ձիավարությունը*, քանի որ հարևան Աշտարակում («Այրուձի») և Ուշիում («Կենտավր») գործող ձիաբուծարանները կարող են տրամադրել անհրաժեշտ քանակի ձիեր Փարպիի շրջակայքում ձիավարություն կազմակերպելու նպատակով (նկ. 13ա):

Հեծանվային լեռնագնացությունը (մաունթինբայքինգ) արկածային տուրիզմի աճող ճյուղերից է: Արագածի փեշերը, լեռնային ճանապարհները կարող են դառնալ այս ուղղության սիրահարների սիրված երթուղիներից: Նույնը կարելի է ասել նաև *լեռնադահուկային տուրիզմի* մասին, քանի որ Արագածի փեշերը շատ հարմար են այս սպորտաձևի համար: Բյուրական գյուղից կամ բարձր-լեռնային այլ վայրերից կարելի է կազմակերպել դահուկային երթուղիներ՝ հաշվի առնելով տեղական առանձնահատկություններն ու անվտանգության խնդիրները (նկ. 13 բ, գ):

Պարապլանով թռիչքը կամ *պարապլաներիզմը* այսօր Հայաստանում տուրիզմի աճող տեսակներից է: ՀՀ տարբեր վայրերում՝ Սևան, Արայի լեռ, Հատիս լեռ, ինչպես նաև Արագածի վրա, կազմակերպվում են պարապլանով թռիչքներ: Պարապլաներիստների համար գյուղին մոտ Արագած լեռան լանջերը շատ հարմար են նման թռիչքների համար: Կարելի է մեքենայի միջոցով ամբողջ հանդերձանքով բարձրանալ գյուղից բարձր գտնվող վայրեր ու թռիչքներ կազմակերպել դեպի գյուղ (նկ. 13դ):

Լեռնային վազքը կամ *սքայրանինգը* նույնպես մեծ տարածում է ստանում Հայաստանում: Այն աթլետիկայի և ալպինիզմի տարրեր պարունակող մարզաձև է, որի մի շարք փառատոներ են կազմակերպվել Հայաստանի տարբեր շրջաններում, այդ թվում նաև Արագածի վրա: Լեռնային վազքի մրցումներ կարելի է կազմակերպել ինչպես ներքևից, այսինքն գյուղից դեպի Արագածի փեշեր, այնպես էլ հակառակ ուղղությամբ՝ բարձրից իջնելով դեպի գյուղ (նկ. 13ե):

Արկածային տուրիզմի առավել հետաքրքիր ու տարածված տեսակներից է *քայլարշավային տուրիզմը* կամ *հայքինգը*: Բազմաթիվ արշավային խմբեր տարվա բոլոր եղանակներին իրականացնում են ամենատարբեր բարդության և երկարության քայլարշավներ, որոնց մասնակցում են ինչպես տեղացիներ, այնպես էլ մեծ թվով զբոսաշրջիկներ: Այս առումով Աշտարակի տարածաշրջա-

նը, նաև Փարպի գյուղը, մոտ լինելով Երևանին, դուրս են մնացել քայլարշավային երթուղիներից, չնայած Արագած լեռան գագաթներն ու լանջերը քայլարշավի սիրահարների ամենասիրված վայրերից են (նկ. 13գ):

Փարպին և շրջակայքը կարող են դառնալ քայլարշավային համեմատաբար թեթև բարդության ու կարճ տարածություն (3–10 կմ) ունեցող երթուղիների վայր: Կարելի է Փարպի գյուղն ընտրել քայլարշավի ինչպես մեկնակետ, այնպես էլ վերջնակետ:

Ներկայացնենք քայլարշավային չորս տարբեր կարճ երթուղիներ, որոնք, մեկնարկելով համեմատաբար բարձրադիր վայրերից, ավարտվում են Փարպիում կամ հարևան Բազմաղբյուր և Ղազարավան գյուղերում (նկ. 14):

Քայլարշավային երթուղի-1. Մեկնարկի կետ (Տառերի պուրակից Ամբերդ տանող ճանապարհ)–Անգրսակ (14–20-րդ դդ. գյուղատեղի, ամրոց, ջրամբար)–Փերսի կամ Բուրավետ (11–19-րդ դդ. գյուղատեղի, դամբարանադաշտ, եկեղեցի, գերեզմանոց)–«Աշոտ Երկաթ» («Փերսի») ամրոց (մ.թ.ա. 3–1-ին հազ., 10–13-րդ դդ., դամբարանադաշտ, ջրամբար)–Արզնի-Շամիրամի ջրանցք (1973 թ., 92 կմ)–վերջնակետ (մահմեդական դամբարան, 14-րդ դ.) (նկ. 15ա):

Քայլարշավային երթուղի-2. Մեկնարկի կետ (Ուշիի Ս. Սարգիս վանք, 5–13-րդ դդ.)–«Ուշի» ամրոց-գյուղատեղի (մ.թ.ա. 2–1-ին հազ., 10–18-րդ դդ.)–«Ղազարավան» քաղաքատեղի (մ.թ.ա. 2–1-ին հազ., 5–17-րդ դդ., գյուղատեղի, դամբարանադաշտ, միջնաբերդ, եկեղեցի, գերեզմանոց)–Շահվերդ գետի կիրճ (գեղեցիկ բնապատկեր)–վերջնակետ (Ղազարավան գյուղի հս-արլ. ծայրամաս) (նկ. 15բ):

Քայլարշավային երթուղի-3. Մեկնարկի կետ (Բյուրական գյուղի արևելյան եզր)–Արտավազիկ եկեղեցի (5–6-րդ դդ., որմնափակ խաչքար)–դամբարանադաշտ (մ.թ.ա. 2–1-ին հազ.)–Արզնի-Շամիրամի ջրանցք (1973 թ., 92 կմ)–«Քարե դռնով» քարայր-կացարան (17–18-րդ դդ., մենհիր, դամբարանադաշտ)–«Թաղիա» ամրոց (մ.թ.ա. 7-րդ դ.–միջնադար)–Ծիրանավոր եկեղեցի (5-րդ դ.)–վերջնակետ (Փարպի գյուղի արևմտյան եզր) (նկ. 15գ):

Քայլարշավային երթուղի-4. Մեկնարկի կետ (Աշտարակ–Ագարակ ավտոճանապարհ)–«Արծիվ Վասպուրականի» հուշարձան (1979 թ., հեղ.՝ Ջ. Թորոսյան)–«Վերին Նավեր» դամբարանադաշտ (մ.թ.ա. 2–1-ին հազ.)–կրոմլեխներ–«Արագած» գինու-կոնյակի գործարան–ԵԱՋ հուշարձան (20-րդ դ., խաչքար)–Ս. Արդար Դավիթ մատուռ (ուշ միջնադար, խաչքար, կոթող)–Թուխ Մանուկ սրբավայր (10–13-րդ դդ., խաչքար, կոթողներ)–ջերմոցներ («ՆԱԿԻ» ՍՊԸ)–վերջնակետ (Փարպի գյուղի հարավարևմտյան ծայրամաս) (նկ. 15դ):

Այժմ փորձենք ներկայացնել այս երթուղիների մանրամասները, ինչպես նաև նրանցում գտնվող ուշագրավ բնական ու պատմական հուշարձանները:

Քայլարշավային երթուղի-1. Սկսվում է Արագած լեռան փեշերին ձգվող դեպի Ամբերդ տանող ճանապարհից (աշխարհագրական կոորդինատները՝ 40°23'39.98"N, 44°18'37.06"E, բարձրությունը ծովի մակարդակից՝ 1930 մ) և Շաղ-

վերդ գետակի հոսանքի ուղղությամբ իջնում է հարավ: Մոտ 2 կմ անցնելուց հետո կհասնենք Շահվերդի կիրճի աջ ափին տարածվող Անգրսակ (Անղրսաղ) կոչվող գյուղի ավերակներին (40°22'45.51"N, 44°19'17.78"E, 1770 մ): Գյուղի պատմությունը հավանաբար սկսվում է զարգացած միջնադարից՝ հասնելով մինչև 20-րդ դ.: Այն լքվել է 1959 թ. կոլտնտեսությունների միավորման պատճառով[1]: Անղրսաղ փոքրիկ գյուղի մասին հիշատակում է նաև Ալիշանը, որպես այլազգիներով բնակեցված գյուղ Փերսի գյուղի մոտ[2]:

Անգրսակ գյուղատեղիի կենտրոնական մասում պահպանվել են ուշմիջնադարյան ամրոցի, իսկ հարավային մասում՝ նույն ժամանակաշրջանով թվագրվող ջրամբարի հետքերը[3] (նկ. 16):

Շաղվերդ գետի կիրճի հարևանությամբ ճանապարհը շարունակելով դեպի հարավ, մոտ 1,9 կմ անց կհասնենք Փերսի գյուղի ավերակներին (40°21'39.84"N, 44°19'11.50"E, 1540 մ): Գյուղը 1949 թ. անվանակոչվել է Բուրավետ, իսկ 1963 թ. լքվել է բնակավայրերի խոշորացման պատճառով[4]: Գյուղում պահպանվել են միջնադարյան եկեղեցու ավերակներն ու ուշ շրջանի գերեզմանոցը՝ գյուղի արևելյան եզրին[5]:

Լքված գյուղից մոտ 1,1 կմ հարավ-արևմուտք տարածվում է ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերի քաղաքատեղի-բնակավայրը (մ.թ.ա. 3–2-րդ հազ.), որը գտնվում է ընդարձակ սարահարթում վեր բարձրացող Բազմակն կոչվող բլրի վրա և նրա ստորոտին՝ զբաղեցնելով ավելի քան 10 հա մակերես: Բազմակնը բազմաշերտ հուշարձան է, որտեղ իրար են հաջորդում բրոնզե դարից մինչև միջնադարյան ժամանակաշրջանը ներառող մշակութային շերտերը, սակայն հնավայրի դեմքը հիմնականում բնորոշում են ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերի հուշարձանները՝ մի քանի պարիսպներով ամրոց-միջնաբերդը, անտաշ քարերից շինված բնակելի տները, ջրամբարը, ընդարձակ դամբարանադաշտը[6] (նկ. 17):

1924 թ. հուշարձանախումբ է այցելել Հուշարձանների պահպանության կոմիտեի արշավախումբը՝ Թորոս Թորամանյանի ղեկավարությամբ: Վերջինս ուսումնասիրել է ամրոցը՝ իր հետաքրքիր բուրգերով ու պարիսպներով, ինչպես նաև ամրոցին կից բերդաքաղաքը՝ բազմաթիվ անտաշ քարերով և առանց շաղախի շինված տներով[7] (նկ. 18):

Փերսի (Բազմակն) քաղաքատեղիից փոքր-ինչ դեպի հարավ-արևմուտք ձգվում է մի նեղ ճանապարհ, որը մի ձորակի մոտով անցնելուց հետո մոտ 1,6 կմ

1 Հակոբյան և այլք 1986, 158:

2 Ալիշան 1890, 158:

3 Հուշարձանների պետական ցուցակ, 2.68. Ղազարավան գյուղ, տես https://www.arlis.am/documentview.aspx?docid=36898

4 Հակոբյան և այլք 1986, 760: Փերսի (Բուրավետ) գյուղի բնակիչները վերաբնակվել են Արտաշավան և Պռոշյան գյուղերում:

5 Հուշարձանների պետական ցուցակ, 2.24. Բազմաղբյուր գյուղ, տես https://www.arlis.am/documentview.aspx?docid=36898

6 Սիմոնյան, Երանոսյան 1978, 38–39:

7 Թորամանյան 2013, 56–57: Մեծանուն ճարտարապետը աշխատության մեջ ամրոցը հիշատակում է Գյավուր-ղալա (թուրքերենից՝ «անհավատների ամրոց»): Տեղացիների շրջանում այժմ ամրոցն առավել հայտնի է «Աշոտ Երկաթ» անունով:

իջնում և հասնում է Արզնի-Շամիրամի ջրանցքին (40°20'59.67"N, 44°18'52.47"E, 1300 մ): Վերջինս կառուցվել է 1973 թ., ունի 92 կմ երկարություն և ոռոգում է Արագածոտնի մարզի շուրջ 30 հազար հա հողատարածությունները:

Անցնելով ջրանցքի վրայի կամրջով՝ աստիճանաբար կիջնենք մոտ 2,2 կմ Բազմաղբյուր գյուղի մեջ և մեր քայլարշավը կավարտենք 14-րդ դ. մահմեդական դամբարանի մոտ (40°20'6.85"N, 44°18'57.40"E, 1120 մ): Վերջինս կարմրագույն, սրբատաշ տուֆից կրաշաղախի օգտագործմամբ կառուցված քառանկյուն հատակագծով փոքր շինություն է (պատերի երկարությունը՝ մոտ 5 մ), որի շուրջը տարածվում է մահմեդական գերեզմանոցը[8] (նկ. 19):

Քայլարշավի ընդհանուր երկարությունը 10,1 կմ է, հարաբերական բարձրությունը՝ 200 մ:

Քայլարշավային երթուղի-2. Քայլարշավային երկրորդ երթուղին կմեկնարկի Ուշի գյուղի մոտ գտնվող միջնադարյան Ս. Սարգիս վանքի մոտից (40°20'51.15"N, 44°21'36.58"E, 1420 մ): Ուշիի վանքը (5–17-րդ դդ.) միջնադարյան Հայաստանի նշանավոր հոգևոր-մշակութային համալիրներից է[9], որը ներկայումս վերակառուցվում է: Վանքի հարևանությամբ դեպի հյուսիս տարածվում է մի քանի շարք պարիսպներով ընդարձակ բնակատեղի, որը սկզբնավորվել է բրոնզեդարյան ժամանակաշրջանում և գոյատևել մինչև ուշ միջնադար: Ուշիի ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերի ամրոց-բնակավայրը (40°20'51.15"N, 44°21'36.58"E, 1450 մ) զբաղեցնում է հարթավայրի վրա տարածվող բլրաշղթայի կենտրոնական մասում գտնվող բարձր և ընդարձակ բլուրը (նկ. 20):

Ուշիի ամրոց-բնակատեղիից քայլարշավը կշարունակենք փոքր-ինչ դեպի հյուսիս, իսկ այնուհետև դեպի արևմուտք՝ դեպի Շաղվերդ գետի կիրճը: Անցնելով մոտ 2,5 կմ՝ կհասնենք Լազարավան կոչվող քաղաքատեղիին՝ գետի բարձրադիր ձախ ափին (40°21'24.09"N, 44°20'29.08"E, 1400 մ): Քաղաքատեղին գոյատևել է բրոնզեդարյան ժամանակներից մինչև ուշ միջնադար և զբաղեցնում է ընդարձակ տարածություն: Քաղաքատեղիի հյուսիսային մասում պահպանվել են միջնաբերդի պարիսպները (մ.թ.ա. 2 հազ.), որի հարևանությամբ գտնվող սարահարթի վրա տարածվում է համաժամանակյա դամբարանադաշտը՝ երեք կղզյակներով: Քաղաքատեղիի հարավային մասում ընկած է միջնադարյան գյուղատեղին, որտեղ կա ավերված եկեղեցի (9–13-րդ դդ.), իսկ շուրջը՝ գերեզմանոց (նկ. 21ա):

Քայլարշավը կշարունակենք Շահվերդ գետի կիրճի ձախափնյա եզրով, որտեղից բացվում է գեղեցիկ բնապատկեր (նկ. 21բ): Մոտ 700 մ անցնելուց հետո կհասնենք Արզնի-Շամիրամ ջրանցքին (40°21'9.00"N, 44°20'17.42"E, 1310 մ), իսկ այնուհետև դաշտամիջյան ճանապարհով կիջնենք 1,1 կմ դեպի Ղազարավան գյուղ, որտեղ էլ կավարտենք մեր քայլարշավը գյուղի հյուսիսարևելյան ծայրամասում (40°20'38.99"N, 44°19'59.22"E, 1180 մ):

Քայլարշավի ընդհանուր երկարությունը 5 կմ է, հարաբերական բարձրությունը՝ 200 մ:

---

8 Սիմոնյան, Երանոսյան 1978, 35–36:

9 Բաբայան 2005; Քրիստոնյա Հայաստան 2002, 1039–1040:

Քայլարշավային երթուղի-3. Այս երթուղու մեկնարկը կլինի Արագածի փեշերին փռված Բյուրական գյուղից, որի արևելյան եզրից կսկսենք մեր քայլարշավը (40°20'12.53"N, 44°16'48.89"E, 1460 մ): Քայլելով 500 մ արևելք՝ կհասնենք Վանքի ձորի ափին գտնվող 7-րդ դ. Արտավազիկ կոչվող եկեղեցի (40°20'10.56"N, 44°17'7.43"E, 1420 մ): Եկեղեցին վերակառուցվել է 13-րդ դ., ավերվել է 1840 թ. երկրաշարժից[10] (նկ. 22ա):

Անցնելով ձորի ձախակողմյան ափը, որտեղ գտնվում է 13-րդ դ. որմնափակ խաչքարը (նկ. 22բ), մեր քայլարշավը դեպի արևելք կշարունակենք դաշտամիջյան ճանապարհով: Ճանապարհին գտնվող բլուրների շրջակայքում կան բազմաթիվ դամբարաններ[11]:

Արզնի-Շամիրամի ջրանցքն (40°19'56.88"N, 44°17'49.81"E) անցնելուց հետո կսկսենք աստիճանաբար իջնել դեպի Բազմաղբյուր գյուղ: Մոտ 1,7 կմ դեպի արևելք իջնելուց հետո կհասնենք գյուղի գերեզմանների մոտ (40°19'48.59"N, 44°18'37.72"E, 1120 մ), որտեղ պահպանվել են Թակիա կոչվող ամրոցի (մ.թ.ա. 7-րդ դ.–միջնադար) պարիսպները՝ Շաղվերդ գետի աջ ափին (նկ. 23ա): Գյուղի գործող գերեզմանոցը փռված է ամրոցի տարածքում՝ մեծապես ավերելով ինչպես ամրոցը, այնպես էլ նրա շուրջը գտնվող բնակավայրը (նկ. 23բ): Մի փոքր դեպի արևմուտք տարածվում է դամբարանադաշտը, որտեղ պահպանվել է մի մենհիր և «քարե դռնով» քարայր-կացարան[12] (նկ. 24):

Այստեղից կարելի է անցնել Շաղվերդ գետը և բարձրանալ բարձունքին գտնվող Ծիրանավոր եկեղեցի (5-րդ դ.) և քայլարշավն ավարտել Փարպի գյուղի արևմտյան մասում (40°19'40.15"N, 44°18'43.08"E):

Քայլարշավի ընդհանուր երկարությունը 5 կմ է:

Քայլարշավային երթուղի-4. Քայլարշավի համար մեկնակետ է ընտրված Աշտարակ-Ագարակ ավտոճանապարհին գտնվող «Արծիվ Վասպուրականի» հուշարձանը (40°17'43.75"N, 44°18'59.15"E, 1070 մ), կառուցված 1979 թ., ճարտարապետ Ջիմ Թորոսյանի նախագծով (նկ. 25 ա, բ): Հուշարձանի հարևանությամբ կտեսնենք մեծ դամբարան, որը ժամանակին պեղվել է հնագետ Հակոբ Սիմոնյանի գլխավորությամբ (նկ. 25 գ): Քայլելով ընդամենը 600 մ դեպի արևելք, կհասնենք «Վերին Նավեր» մեծ դամբարանադաշտ (մ.թ.ա. 2–1-ին հազ.) (40°17'43.71"N, 44°19'18.49"E), ուր պահպանվել են մեծ տրամագծով կրոմլեխներ[13] (նկ. 26): Նման կրոմլեխային դամբարաններ կան նաև մոտ 600 մ հյուսիսարևմուտք մայրուղու հարևանությամբ (40°17'56.70"N, 44°19'5.71"E):

Քայլարշավը շարունակվում է հյուսիսարևելյան ուղղությամբ դեպի Փարպի գյուղ: Անցնելով դեպի Բյուրական տանող գլխավոր խաչմերուկը՝ գրունտային ճանապարհով կքայլենք մոտ 1,2 կմ և կհասնենք «Արագած» գինու-կոնյակի գործարան (40°18'23.88"N, 44°19'14.74"E): Նորաստեղծ գործարանում կծանոթա-

[10] Սիմոնյան, Երանոսյան 1977, 50–51:
[11] Նույն տեղում, 47–48:
[12] Սիմոնյան 1978, 36–37:
[13] Սիմոնյան 2006; Սիմոնյան 2015, 219–227:

նանք գինու և կոնյակի պատրաստման տեխնոլոգիաներին և խմիչք կհամտեսենք (նկ. 30ա):

Այնուհետև կքայլենք դեպի հյուսիս-արևելք մոտ 1,7 կմ և կհասնենք Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակին կանգնեցված կոթողի մոտ (40°19'5.29"N, 44°19'31.94"E) (նկ. 27), որից մոտ 350 մ հարավ-արևմուտք գտնվում է Ս. Արդար Դավիթ մատուռը Փարպի գյուղի նոր գերեզմանոցի մոտ (40°19'0.51"N, 44°19'20.00"E): Մատուռը ակնհայտորեն ուշմիջնադարյան շրջանի կառույց է[14], վերակառուցվել է 1990-ական թթ., ներսում կա խաչքար, իսկ պատի մեջ՝ վաղմիջնադարյան կոթողի բեկոր (նկ. 28):

Մատուռից մոտ 400 մ հյուսիս-արևմուտք գտնվում է ևս մեկ սրբավայր Թուխ Մանուկ անունով (40°19'4.65"N, 44°19'6.44"E), որտեղ պահպանվել են միջնադարյան խաչքար և կոթողների բեկորներ: Հավանաբար սրբավայրի տեղում եկեղեցի է եղել, որի իսկությունը հնարավոր է պարզել պեղումներով (նկ. 29):

Քայլարշավի վերջում կանցնենք մոտ 800 մ դեպի հարավ-արևմուտք, որտեղ կտեսնենք «ՆԱԿԻ» ՍՊԸ-ի ջերմոցները (40°18'53.85"N, 44°18'50.81"E), որտեղ էլ կլինի քայլարշավի վերջնակետը՝ Փարպի գյուղի հարավարևմտյան ծայրամասում (նկ. 30բ):

Քայլարշավի ընդհանուր երկարությունը 5 կմ է:

Ամփոփում

Փարպի գյուղը զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող իր բազմաթիվ ռեսուրսներով կարող է դառնալ Հայաստանի զբոսաշրջային կենտրոններից մեկը: Փարպին հարևան Բազմաղբյուր և Ղազարավան գյուղերի հետ միասին հարուստ է տարբեր ժամանակաշրջանների պատմաճարտարապետական բազմաթիվ հուշարձաններով, այստեղ առկա են արտադրական մի շարք ձեռնարկություններ, որոնք ուշագրավ են ճանաչողական զբոսաշրջության տեսանկյունից:

Գյուղում զբոսաշրջության զարգացման ուղղությամբ կարևոր ճյուղերից է գյուղական տուրիզմն՝ իր բազմաթիվ ենթատեսակներով: Զբոսաշրջության ոլորտում մեծ հետաքրքրություն են ներկայացնում գյուղական կյանքը՝ գյուղական զբաղմունքները, յուրահատուկ ավանդույթներն ու տոները, գյուղական ուտեստների պատրաստումը (գաստրոտուրիզմ) և այլն:

Գյուղում զբոսաշրության ոլորտում թերևս ամենազարգացած ճյուղը ռեկրեատիվ տուրիզմն է. այստեղ գործում են հանգստյան բազմաթիվ գոտիներ, որտեղ առկա են տաղավարներ ու լողավազաններ, կան մի շարք հանգստյան տներ կամ B&B-ներ, որոնք հարմարավետ գյուղական տներ են:

Փարպի գյուղում և շրջակայքում քիչ է զարգացած արկածային կամ ակտիվ տուրիզմը, որը սակայն մեծ ներուժ ունի և անհրաժեշտ աշխատանք իրականացելու դեպքում կարող է մեծ հետաքրքրություն առաջացնել դրսի և տեղացի զբոսաշրջիկների շրջանում: Արկածային տուրիզմի տեսակներից գյուղում կարող են զանգանալ ձիավարությունը, հեծանվային լեռնագնացությունը, լեռ-

[14] Հովհաննիսյան 2021, 293:

նաղահուկային տուրիզմը, պարապլանով թռիչքը, լեռնային վազքը, քայլարշավային տուրիզմը: Որպես օրինակ առաջարկվում են քայլարշավային թեթև երթուղիներ, որոնք ընդգրկում են բնական և պատմական մի շարք հուշարձաններ:

Давит Давтян
ИАЭ НАН РА, младший научный сотрудник
davit.davtyan@iae.am

ТУРИСТИЧЕСКИЙ ПОТЕНЦИАЛ СЕЛА ПАРПИ

Село Парпи, обладающее многочисленными ресурсами, представляющими интерес для туристов, может стать одним из туристических центров Армении. Как и соседние сёла Базмахпюр и Газараван, Парпи богато историко-архитектурными памятниками разных эпох. Кроме того, здесь функционируют предприятия, представляющие ценность с точки зрения познавательного туризма.

Сельский туризм, со своими многочисленными формами, является важным направлением развития туристической сферы. Сельская жизнь привлекает туристов традиционными занятиями, уникальными обрядами и праздниками, а также приготовлением национальных блюд (гастротуризм).

Наиболее развитым направлением туризма в селе является рекреационный туризм. В Парпи действуют зоны отдыха с беседками и бассейнами, а также гостевые дома и дома отдыха, предлагающие комфортные условия проживания.

Приключенческий или активный туризм в Парпи и его окрестностях пока развит недостаточно, однако обладает значительным потенциалом. При должной организации он может вызвать большой интерес как у иностранных, так и у местных туристов. К видам активного туризма, возможным в данной местности, относятся верховая езда, катание на горных велосипедах, горнолыжный спорт, парапланеризм, горный бег и пешие походы. В качестве примера можно предложить лёгкие пешие маршруты, проходящие через природные и исторические памятники.

Davit Davtyan
Institute of Archaeology and Ethnography of the NAS RA, Researcher
davit.davtyan@iae.am

THE TOURIST POTENTIAL OF PARPI VILLAGE

The village of Parpi, with its diverse resources of tourist interest, has the potential to become one of the key tourist centers of Armenia. Along with the neighboring villages of Bazmaghbyur and Ghazaravan, Parpi is rich in historical and architectural monuments dating to different periods. In addition, several local production enterprises may serve as attractions for visitors interested in cognitive tourism.

One of the most important directions for tourism development in the village is “rural tourism”, with its various subtypes. Rural life is particularly appealing to visitors: traditional occupations, unique customs and festivals, and the preparation of local dishes (gastrotourism), among others.

Currently, the most developed branch of tourism in Parpi is “recreational tourism”. The village has numerous recreation areas with pavilions and swimming pools, as well as several rest houses and B&Bs, which are essentially comfortable rural homes adapted for visitors.

By contrast, “adventure or active tourism” in Parpi and its surroundings is still underdeveloped, though it has considerable potential. With proper development, it could generate significant interest among both local and foreign tourists. Possible activities include horseback riding, mountain biking, paragliding, cross-country skiing, and hiking. For instance, light hiking routes are already available, connecting several natural and historical monuments.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԱԼԻՇԱՆ 1890
Ալիշան Ղևոնդ, Այրարատ, Բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ–Ս. Ղազար, 1890, 590 էջ:

ԲԱԲԱՅԱՆ 2005
Բաբայան Ֆ., Ուշիի Սուրբ Սարգիս վանքը, «Գիտություն» հրատ., Երևան, 2005, 77 էջ:

ԹՈՐԱՄԱՆՅԱՆ 2013
Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխատությունների ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013, Մասն առաջին, 864 էջ:

ՀԱԿՈԲՅԱՆ ԵՎ ԱՅԼՔ 1986
Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 1, Երևան, Երևանի համալսարանի հրատարակություն, 1986, 992 էջ:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ 2021
Հովհաննիսյան Կ., Ս. Դավիթ անունը կրող սրբավայրերը պատմական Հայաստանի տարածքում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2021, № 2, էջ 291–304:

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ
ՀՀ Արագածոտնի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումը (2022թ. մայիսի 29)
https://www.arlis.am/documentview.aspx?docid=36898 /2.24/ Բազմաղբյուր գյուղ
https://www.arlis.am/documentview.aspx?docid=36898 /2.68/ Ղազարավան գյուղ
https://www.arlis.am/documentview.aspx?docid=36898 /2.110/ Փարպի գյուղ

ՍԻՄՈՆՅԱՆ 2006
Սիմոնյան Հ., Վերին Նավեր, Գիրք Ա. (1976–1990 թթ. պեղումների արդյունքները), Երևանի Համալսարանի հրատ., 2006, 192 էջ:

ՍԻՄՈՆՅԱՆ 2015
Սիմոնյան Հ., Հայաստանի հնագույն դիմաքանդակը, «Կանթեղ», Գիտական հոդվածներ, «Ասողիկ» հրատ., 2015, № 2 (63), էջ 219–227:

ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՐԱՆՈՍՅԱՆ 1977
Սիմոնյան Հ., Երանոսյան Հ., Ամբերդի ավազանի պատմական հուշարձանները, «Երևանի համալսարան», 1977, № 3, էջ 47–57:

ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՐԱՆՈՍՅԱՆ 1978
Սիմոնյան Հ., Երանոսյան Հ., Շաղվարդի ավազանի պատմական հուշարձանները, «Երևանի համալսարան», 1978, № 3, էջ 33–39:

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ 2002
Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, Հայկական Հանրագիտարան հրատ., 2002, 1076 էջ:

Նկ.1. Շաղվերդ գետի հովիտը՝ Փարպի, Բազմաղբյուր և Ղազարավան գյուղերը (լուս.՝ Ա. Մանուկյանի)

Նկ.2. Փարպի գյուղի պատմամշակութային հուշարձանների և մշակութային կենտրոնների քարտեզ (հեղինակ՝ Դ. Դավթյան)



Նկ. 3. Փարպի գյուղի պատմամշակութային հուշարձանները. Ս. Գրիգոր, Ծիրանավոր, Թարգմանիչք, Ս. Գևորգ եկեղեցիներ, մահմեդական դամբարան (լուս.՝ հեղինակի)

Նկ. 4. Փարպի գյուղի մշակութային կենտրոնները. պարի խմբակ մշակույթի տանը (լուս.՝ Երկիր Մեդիայի), դպրոցի մարզադահլիճը (լուս.՝ հեղինակի), «Արմաթ» ինժեներական լաբորատորիա (լուս.՝ «Փարպիի Արմաթ»-ի), խաչքարագործ Փարպիից (լուս.՝ ARTV-ի)

Նկ. 5. Փարպի գյուղի արտադրական-արդյունաբերական ձեռնարկությունները. LGK Agro, ArLeAM, NAKI ջերմոցներ, «Արագած» գինու-կոնյակի գործարան, «Վարգա-Ֆուդ» պահածոների գործարան (լուս.՝ արտադրությունների ֆեյսբուքյան էջերից)

Նկ. 6. Բերքահավաք և վայրի բույսերի (ավելուկ, գազարանուկ, սինձ, սիբեխ) հավաքչություն (լուս.՝ համացանցից)

Նկ.7. Ավելուկ հյուսելը, շարոցի պատրաստում, մեղրաքամ, օղու թորում (լուս.՝ համացանցից)

Նկ.8. Փարպի գյուղի ուտեստներ. ավելուկով ճաշ, արշտրա, խաշիլ, թոնրի գաթա, ալանի, քաղցր շարոց, ընկույզի մորաբա (լուս.՝ համացանցից)

Նկ. 9. Գյուղական զբաղմունքներ. հաց թխել, ձկնորսություն, ձիերի խնամք, խոտհունձ (լուս.՝ հեղինակից)

Նկ. 10. Չրերի փառատոն, փահլևան (լարախաղաց), լավաշ և գաթա թխել, ավանդական կոխ (լուս.՝ հեղինակից)

Նկ. 11. Հանգստյան գուրիներ Փարպի գյուղում և շրջակայքում. «Փարպի հառաս», «Գեղափնյա», «Փարպիի ձոր», «Փարպի գարդեն», «Շարդի գարդեն», «Աշոտ Երկաթ», «Բազմաղբյուրի ձոր», «Արծվի թևեր» (լուս.՝ հանգստյան գուրիների ֆեյսբուքյան էջերից)

Նկ. 12. Հանգստյան տներ Փարպի գյուղում և շրջակայքում. «Լևոնս դոմ», «Վիլլա միմի», «Ելոռա» (լուս.՝ հանգստյան գուրիների ֆեյսբուքյան էջերից)

Նկ. 13. Արկածային տուրիզմ. ա) ձիավարություն, բ) հեծանվային լեռնագնացություն (մառնթինբայքինգ), գ) լեռնադահուկային տուրիզմ, դ) պարապլանով թռիչք (պարապլաներիզմ), ե) լեռնային վագք (աքայոանինգ), զ) քայլարշավային տուրիզմ (հայքինգ) (լուս.՝ համացանցից)

Նկ. 14. Քայլարշավային երթուղիներ Փարպի գյուղում և շրջակայքում (քարտեզի հեղինակ՝ Դ. Դավթյան)



Նկ. 15. Քայլարշավային երթուղիներ. ա) երթուղի-1. Ամբերդ տանող ճանապարհից մահմեդական դամբարան, բ) երթուղի-2. Ուշիի Ս. Սարգիս վանքից Ղազարավան գյուղի հս-արլ. ծայրամաս, գ) երթուղի-3. Բյուրական գյուղի արևելյան եզրից Փարպի գյուղի արևմտյան եզր, դ) երթուղի-4. «Արծիվ Վասպուրականի» հուշարձանից «ՆԱԽ» ընկերության ջերմոցներ (հեղինակ՝ Դ. Դավթյան)

Նկ. 16. Անգրսակ գյուղատեղի (լուս.՝ հեղինակի)

Նկ. 17. Փերսի քաղաքատեղի (լուս.՝ հեղինակի)

Նկ. 18. Փերսի ամրոց (լուս.՝ հեղինակի)

Նկ. 19. Բազմաղբյուր. մահմեդական դամբարան (լուս.՝ հեղինակի)

Նկ. 20. Ուշի. Ս. Սարգիս վանք և ամրոց-բնակատեղի (լուս.՝ Sergey Ch.-ի և Liveon001-ի)

Նկ. 21. Լազարավան քաղաքատեղին և Շաղվերդ գետի կիրճը (լուս.՝ Google map-ից)

Նկ. 22. Բյուրական. Արտավազիկ եկեղեցի (լուս.՝ Գավրիքի, Մ. Մինասյանի)

Նկ. 23. Թակիա ամրոցը և Բազմաղբյուրի գերեզմանոցը ամրոցի տարածքում (լուս.՝ հեղինակի)

Նկ. 24. «Քարե դռնով» քարայր-կացարան (լուս.՝ հեղինակի)

Նկ. 25. «Արծիվ Վասպուրականի» հուշարձանը և պեղված դամբարան հուշարձանի հարևանությամբ (լուս.՝ Ա. Աղայանի, Վ. Մարտիրոսյանի)

Նկ. 26. «Վերին Նավեր» դամբարանադաշտ (լուս.՝ 0199 Travels և Tir-Ar Travel ֆեյսբուքյան էջերից)

Նկ. 27. Փարպի. Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձան, հարևանությամբ՝ հին խաչքար (լուս.՝ հեղինակի)

Նկ. 28. Ս. Դավիթ մատուռ (լուս.՝ հեղինակի)

Նկ. 29. Թռախ Մանուկ սրբավայր (լուս.՝ հեղինակի)

Նկ 30. «Արագած» գինու-կոնյակի գործարան և «ՆԱՊԻ» ջերմոցներ (լուս.՝ https://ticket-am.com կայքի և Google maps-ից)

CONTENT

Arman Nalbandyan
The results of the excavations of Tsiranavor Church of Parpi Village in 2021 5

Dianna Mirijanyan, *Nyura Hakobyan*
The excavations of the church Tarkmanchats in Parpi 17

Lilit Mikayelyan, *Zaruhi Hakobyan*
The Issue of Classification and Dating of the Sculptural Decor
of the Surb Targmanchats Church in Parpi 35

Ashot Manucharyan
Parpi and his Inscriptions 60

Karen Hovhannisyan
Shrines of Tukh Manuk of Parpi village 70

Tigran Mikayelyan
Takiyya of Bazmaghbyur village 77

Armen Asatryan
Parpi in Archival Documents 84

Hamo Sukiasyan
Parpi Village in the Context of Administrative-Territorial
Changes in Armenia (19th–20th Centuries) 101

Davit Davtyan
The Tourist Potential of Parpi Village 110

ՓԱՐՊԻ

ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր

Լեզվական խմբագիր՝
Անժելա Ամիրխանյան

Էջադրումը՝
Արթուր Հարությունյանի

ՀԱՄԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՄԱՆ ՀԱՄԱՐ